Work4Youth
Publication Series
No. 21

International Labour Office

The MasterCard Foundation

Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա

Նիկոլաս Սերիեր

Հոկտեմբեր 2014թ

Երիտասարդների զբաղվածության ծրագիր
Զբաղվածության քաղաքականության վարչություն

Աշխատանք երիտասարդների համար. հրատարակությունների շարք թիվ 21

Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա

Նիկոլաս Սերիեր

Աշխատանքի միջազգային կազմակերպություն ● Ժնև

Հոկտեմբեր 2014թ.

Հեղինակային իրավունք©Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2014թ.։

Առաջին հրատարակությունը՝ 2014թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության հրապարակումներն օգտվում են հեղինակային իրավունքից՝ ըստ Հեղինակային իրավունքի համընդհանուր կոնվենցիայի թիվ 2 Արձանագրության։ Այդուհանդերձ, դրանք հատվածաբար կարող են վերարտադրվել առանց թույլտվության, պայմանով, որ աղբյուրը նշված լինի։ Վերարտադրման և թարգմանության թույլտվության համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել ԱՄԿ-ի Հրատարակությունների բաժին (Իրավունքներ և թույլտվություններ), Աշխատանքի միջազգային գրասենյակ, CH-1211 Ժնև 22, Շվեյցարիա, կամ էլ-փոստով՝ pubdroit@ilo.org։ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը ողջունում է նման դիմումները։
Գրադարանները, ինստիտուտները և այլ օգտագործողները, որոնք գրանցված են Վերարտադրության իրավունքների համապատասխան կազմակերպություններում, կարող են նյութը պատճենահանել համաձայն այն արտոնագրերի, որոնք տրվում են նրանց այդ նպատակով։ Ձեր երկրում վերարտադրության իրավունքների համապատասխան կազմակերպությունը գտնելու համար այցելեք www.ifrro.org կայք։

ԱՄԿ հրապարակումների կատալոգային տվյալներ

Սերիեր Նիկոլաս

Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա, Նիկոլաս Սերիեր, Աշխատանքի միջազգային գրասենյակի զբաղվածության քաղաքականության բաժին – Ժնև: ԱՄԿ, 2014թ.
(Work4Youth publication series ; No. 21, ISSN: 2309-6780 ; 2309-6799 (web pdf))

Աշխատանքի միջազգային գրասենյակի զբաղվածության քաղաքականության բաժին

Երիտասարդների զբաղվածություն /երիտասարդների գործազրկություն, անցում դպրոցից աշխատաշուկա, տվյալների հավաքման մեթոդաբանություն, Հայաստան

13.01.3

ԱՄԿ-ի հրապարակումներում տեղ գտած հասկացությունները, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի գործելակերպին, և դրանցում ներկայացված նյութը չեն կարող ընկալվել որպես Աշխատանքի միջազգային կազմակերպության կարծիք՝ որևէ երկրի, տարածքի կամ տարածաշրջանի, կամ դրանց իշխանությունների իրավական կարգավիճակի, կամ արտաքին սահմանների վերաբերյալ: Ստորագրված հոդվածներում, ուսումնասիրություններում և այլ հրապարակումներում արտահայտված կարծիքների համար պատասխանատվություն են կրում միայն հեղինակները, և դրանց հրապարակման փաստը չի վկայում Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից դրանցում արտահայտված կարծիքների հավաստման մասին։
Ֆիրմաների և կոմերցիոն ապրանքների անվանումներին հղում կատարելը չի ենթադրում, որ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը գերապատվություն է տալիս դրանց, և որևէ ֆիրմա, կոմերցիոն ապրանք կամ գործընթաց չհիշատակելը դրանց թերագնահատման նշան չի կարող համարվել։
ԱՄԿ-ի հրատարակությունները կարելի է ձեռք բերել խոշոր գրավաճառներից կամ շատ երկրներում գործող ԱՄԿ-ի տեղական գրասենյակների միջոցով, կամ ուղղակիորեն ԱՄԿ-ի Հրատարակությունների բաժնից, հետևյալ հասցեում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն, CH-1211 Ժնև 22, Շվեյցարիա։ Կատալոգները կամ նոր հրատարակությունների ցանկը հնարավոր է անվճար ստանալ վերոհիշյալ հասցեում, կամ հետևյալ էլ-փոստով՝ pubvente@ilo.org.
Այցելե՛ք մեր վեբ-կայք՝ www.ilo.org/publns.

Տպագրված է Աշխատանքի միջազգային գրասենյակի կողմից, Ժնև, Շվեյցարիա

Նախաբան

Երիտասարդությունը մարդկային կյանքի էական ժամանակահատվածներից մեկն է, երբ երիտասարդները սկսում են հասկանալ իրենց ձգտումները, ստանձնում են իրենց տնտեսական անկախությունը և իրենց տեղն են գտնում հասարակության մեջ։ Աշխատատեղերի համաշխարհային ճգնաժամը խորացրել է երիտասարդների խոցելիությունը հետևյալ առումներով՝ ա) գործազրկության ավելի բարձր մակարդակ, բ) ցածր որակի աշխատանք նրանց համար, ովքեր աշխատանք են գտնում, գ) աշխատաշուկայի ավելի մեծ անհավասարություն երիտասարդների տարբեր խմբերի միջև, դ) դպրոցից աշխատանքի ավելի երկար ու ավելի վտանգավոր անցումներ, և ե) աշխատաշուկայից անջատվածության աճ։

ԱՄԿ-ի 2012թ. հունիսին կայացած կոնֆերանսի ժամանակ որոշում կայացվեց հրատապ գործողություններ ձեռնարկել՝ զբաղվածության աճին և արժանապատիվ աշխատատեղերի ստեղծմանն ուղղված բազմակողմանի մոտեցման միջոցով երիտասարդների աննախադեպ աշխատանքային ճգնաժամի խնդիրը լուծելու նպատակով։ «Երիտասարդների զբաղվածության ճգնաժամ. Գործողություններ իրականացնելու կոչ» վերտառությամբ հռչակագիրը ներառում է եզրակացությունների մի փաթեթ, որոնք իրենցից ներկայացնում են երիտասարդների զբաղվածության ազգային ռազմավարությունների ձևավորման նախագիծ։[1] Այն կոչ է անում բազմակողմանի համակարգի միջոցով ավելացել քաղաքականությունների և գործողությունների ներդաշնակությունը երիտասարդության զբաղվածության ոլորտում։ Զուգահեռաբար, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կարևորեց երիտասարդությունը՝ որպես հինգ սերնդային հրամայականներից մեկը, որի խնդիրները պետք է լուծվեն Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) տրամադրության տակ գտնվող բոլոր մարդկային, ֆինանսական և քաղաքական ռեսուրսների մոբիլիզացման միջոցով: Որպես այս օրակարգի մի մաս, ՄԱԿ-ը մշակել է ամբողջ համակարգի մասշտաբով երիտասարդության հարցերով գործողությունների ծրագիր, որի հիմնական առաջնահերթություններից մեկը երիտասարդների զբաղվածությունն է՝ նպատակաուղղված ՄԱԿ-ի ողջ համակարգում երիտասարդական ծրագրերի ամրապնդմանը։

ԱՄԿ-ն աջակցում է կառավարություններին և սոցիալական գործընկերներին՝ զբաղվածության համապարփակ քաղաքականության միջոցառումների մշակման և իրականացման գործում։ Որպես այս գործունեության մի մաս, ԱՄԿ-ը ձգտում է ուժեղացնել ազգային և տեղական մակարդակով հաստատությունների՝ փաստերի վրա հիմնված վերլուծությունների իրականացման կարողությունները, որն

ապահովում է սոցիալական երկխոսության և քաղաքականություն մշակելու գործընթացը։ Երիտասարդության զբաղվածության վերաբերյալ

[1] 2012թ. «Երիտասարդների զբաղվածության ճգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ» հռչակագրի լրիվ տեքստը կարելի է գտնել ԱՄԿ վեբ կայքում՝ http://www.ilo.org/ilc/ILCSessions/101stSession/textsadopted/WCMS_185950/lang--en/index.htm.

գիտելիքների բազա ստեղծելու գործում անդամ երկրներին աջակցելու նպատակով ԱՄԿ-ի կողմից իրականացվել է «Անցում դպրոցից աշխատանք» (ԱԴԱ) հետազոտությունը: Սույն զեկույցը, որը ներկայացնում է Հայաստանում իրականացված հետազոտության արդյունքները, ԱՄԿ-ի և Մասթըրքարդ Հիմնադրամի միջև գործընկերության արդյունքն է: «Աշխատանք երիտասարդների համար» ծրագիրը նախատեսում է «ԱԴԱ» հետազոտության իրականացման նպատակով համագործակցություն 28 ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների վիճակագրական գործընկերների և քաղաքականություն մշակողների հետ և աջակցում է կառավարություններին և սոցիալական գործընկերներին՝ արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման նպատակով այս տվյալների օգտագործման գործում:

Հեշտ ժամանակներ չեն այսօր աշխատաշուկայում երիտասարդների համար: Հուսանք, որ ՄԱԿ-ի համակարգի ղեկավարությամբ, կառավարությունների, արհմիությունների և գործատուների կազմակերպությունների հանձնառությամբ և Մասթըրքարդ Հիմնադրամի նման դոնորների ակտիվ մասնակցությամբ, միջազգային հանրությունը կարող է արդյունավետ օժանդակություն ապահովել, որն անհրաժեշտ է աշխատանքի ոլորտում լավ մեկնարկ ունենալու նպատակով երիտասարդ կանանց և տղամարդկանց օգնելու համար: Եթե մենք կարողանանք սա ճիշտ ըմբռնել, այն դրական ազդեցություն կունենա երիտասարդների կյանքի բոլոր ապագա փուլերում նրանց մասնագիտական և անձնական հաջողության առումով:

Ազիտա Բերար Ավադ
Զբաղվածության քաղաքականության
Վարչության տնօրեն

Դիմիտրինա Դիմիտրովա
Արևելյան Եվրոպայի և
Կենտրոնական Ասիայի
Արժանապատիվ աշխատանքի
թիմի և այդ երկրները
համակարգող գրասենյակի
տնօրեն

Բովանդակություն

Նախաբան iii

Բովանդակություն v

Երախտիքի խոսք xi

1. Ներածություն և հիմնական բացահայտումներ 1
   - 1.1 Ընդհանուր նկարագիր 1
   - 1.2 Հիմնական բացահայտումներ 2
   - 1.3 Զեկույցի կառուցվածքը 7

2. Հայաստանում աշխատաշուկայի նկարագիրը և հետազոտության մեթոդաբանությունը 8
   - 2.1 Սոցիալ-տնտեսական համատեքստը 8
   - 2.2 Աշխատաշուկան Հայաստանում 10
   - 2.3 Անցում դպրոցից աշխատաշուկա հետազոտության նպատակներն ու մեթոդաբանությունը 14
     - 2.3.1 Հարցաթերթի մշակումը և ընտրանքի նախագծումը 16

3. Երիտասարդության բնութագրումն ընտրանքային հետազոտության մեջ 16
   - 3.1 Երիտասարդության անհատական բնութագրերը 17
   - 3.2 Կրթության մակարդակը 21
     - 3.2.1 Կրթության մատչելիությունը 21
     - 3.2.2 Ավարտված կրթություն 22
     - 3.2.3 Ներկայումս ուսանող հանդիսացողներ 27
   - 3.3 Երիտասարդների ակտիվության կարգավիճակը 29
   - 3.4 Զգտումներն ու կյանքի նպատակները 33
   - 3.5 Զբաղված երիտասարդների բնութագիրը 34
     - 3.5.1 Զբաղվածության կարգավիճակը և բաշխումն ըստ տնտեսության ճյուղի և զբաղմունքի 34
     - 3.5.2 Վարձու աշխատանք 37
     - 3.5.3 Ինքնազբաղվածություն 40
     - 3.5.4 Աշխատաժամեր և ոչ կամավոր կես դրույքով աշխատանք 41
     - 3.5.5 Աշխատավարձ 42
     - 3.5.6 Ոչ ֆորմալ զբաղվածություն 44
     - 3.5.7 Որակավորումների անհամապատասխանությունը 46
     - 3.5.8 Կայունություն և բավարարվածություն 48
   - 3.6 Գործազուրկ երիտասարդներ 51

3.7 Աշխատաշուկայից դուրս գտնվող երիտասարդներ (պասիվ երիտասարդներ) 55

4. Անցման փուլեր 56

4.1 Հայեցակարգեր և սահմանումներ 56

4.2 Անցման փուլերը 58

4.2.1 Երիտասարդներ, որոնք դեռևս չեն սկսել անցումը 60

4.2.2 Անցման փուլում գտնվող երիտասարդներ 61

4.2.3 Ավարտված անցման նկարագրեր 62

4.3 Անցման ճանապարհները և անցման տևողությունը 66

5. Համապատասխան ինստիտուցիոնալ շրջանակը, քաղաքականությունը, և դրա ազդեցությունը 68

5.1 Հայաստանում վարվող համապատասխան քաղաքականությունը 68

5.2 Քաղաքականության ազդեցությունը 70

Օգտագործված գրականության ցանկ 77

Հավելված I. Աշխատաշուկայի վիճակագրության սահմանումներ 78

Հավելված II. Կրթության մակարդակների մանրամասն պատկերը 81

Հավելված III. Լրացուցիչ վիճակագրական աղյուսակներ 82

Հավելված IV. ԱԴԱՀ ընտրանքի սխեմա 86

Աղյուսակների ցանկ

2.1 Ընտրված մակրոտնտեսական ցուցանիշներ, Հայաստան, 2009-13թթ. (ՀՆԱ տոկոս, եթե այլ բան սահմանված չէ) 9

2.2 Աշխատաշուկայի ընտրված ցուցանիշներն ըստ սեռի և բնակության վայրի, 2012թ. 10

2.3 Գործազրկության ցուցանիշներն ըստ տարիքային խմբի, սեռի և բնակավայրի, 2012թ. (տոկոս) 13

3.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի, բնակության վայրի, ամուսնական կարգավիճակի և սեռի 17

3.2 Ծագման բնակավայրից հեռացած երիտասարդների բաշխումն ըստ բնակավայրի և բնակավայրից հեռանալու պատճառների (տոկոս) 19

3.3 Ֆինանսական ծառայությունների ծածկույթը երիտասարդների շրջանում (տոկոս) 21

3.4 Երիտասարդների բաշխումն ըստ կրթական կարգավիճակի, սեռի և բնակավայրի (տոկոս) 22

3.5 Երիտասարդների բաշխումն ըստ կրթության մակարդակի, բնակավայրի և սեռի (տոկոս) 23

3.6 Երիտասարդների բաշխումն ըստ կրթության մակարդակի և հիմնական ակտիվության կարգավիճակի 24

3.7 Ներկայիս ուսանողների բաշխումն ըստ նախընտրած զբաղմունքի, աշխատանքի վայրի և սեռի 28

3.8 Երիտասարդների բաշխումն ըստ ընտրված բնութագրերի և ակտիվության կարգավիճակի 32

3.9 Տվյալ պահին ոչ զբաղված, ոչ կրթության կամ ուսուցման մեջ ընդգրկված (ՈԶՈԿՈՒ) երիտասարդների բաշխումն ըստ կարգավիճակի, սեռի և բնակավայրի 33

3.10 Երիտասարդների զբաղվածությունն ըստ զբաղվածության կարգավիճակի, սեռի և բնակավայրի (տոկոս) 35

3.11 Երիտասարդների զբաղվածությունն ըստ հիմնական ոլորտների, սեռի և բնակավայրի (տոկոս) 35

3.12 Երիտասարդների զբաղվածության մանրամասն բաշխումն ըստ ոլորտների (առաջին ԱՄՄԴ) և սեռի (տոկոս) 36

3.13 Զբաղված երիտասարդների բաշխումն ըստ զբաղմունքի և սեռի 37

3.14 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողներն ըստ պայմանագրի տեսակի, սեռի և բնակավայրի 38

3.15 Ինքնազբաղված երիտասարդների բաշխումն ըստ ինքնազբաղվածության պատճառների և բնակության վայրի 41

3.16 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողների և ինքնազբաղվածների միջին ամսական աշխատավարձն ըստ սեռի և կրթության մակարդակի (ՀՀ դրամով): 43

3.17 Վարձատրվող երիտասարդների բաշխումն ըստ զբաղվածության, սեռի և միջին ամսական աշխատավարձի (ՀՀ դրամով): 44

3.18 ISCO խոշոր խմբերը և կրթության մակարդակները 46

3.19 Գերկրթված և թերկրթված երիտասարդ աշխատողների բաշխումն ըստ խոշոր մասնագիտական դասերի (ISCO-08, տոկոս) 47

3.20 Աշխատանքը փոխել ցանկացող զբաղված երիտասարդների բաշխումն ըստ հիմնական պատճառի և սեռի 49

3.21 Աշխատանքի առաջարկը մերժած զբաղված երիտասարդների բաշխումն ըստ պատճառների և սեռի 50

3.22 Գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ աշխատանք փնտրելու տևողության և սեռի 54

3.23 Պասիվ երիտասարդների բաշխումն ըստ պասիվության պատճառների և սեռի 56

4.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ անցման փուլերի և սեռի 59

4.2 Երիտասարդ բնակչության անցումն ըստ անցման փուլերի և տարիքային խմբերի 59

4.3 Անցումը դեռ չսկսած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի և սեռի 60

4.4 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի և զբաղմունքի (տոկոս) 64

4.5 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ անցման ճանապարհի ցուցանիշի և սեռի 67

Ա 1 Հայաստանի ընդհանուր բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի, 2013թ. (‘000) 82

Ա 2 Աշխատաշուկայի ընտրված ցուցանիշներն ըստ սեռի և բնակավայրի, 2011թ. 82

Ա 3 Գործազրկության ցուցանիշներն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի, 2012թ. (տոկոս) 83

Ա 4 Առողջական խնդիրներ չունեցող երիտասարդների բաշխումն ըստ բնակավայրի (տոկոս) 83

Ա 5 Դպրոցը վաղ թողած երիտասարդների բաշխումն ըստ պատճառների և սեռի 83

Ա 6 Երիտասարդների մայրերը և հայրերն ըստ կրթության մակարդակի 84

Ա 7 Երիտասարդների զբաղվածության որակի ցուցանիշներն ըստ սեռի (տոկոս) 84

Ա 8 Գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ փնտրված զբաղմունքի և սեռի 85

Ներդիրներ

2.1 Աշխատունակ տարիքի զբաղված և գործազուրկ բնակչության բաշխումն ըստ կրթության մակարդակի, 2012թ. 12

3.1 Երիտասարդ կանանց թվի հարաբերակցությունը երիտասարդ տղամարդկանց թվին ըստ տարիքային խմբերի 20

3.2 Երիտասարդների բաշխումն ըստ տնային տնտեսությունների եկամտի մակարդակի և բնակավայրերի 21

3.3 Ուսում ստացած և կրթությունն ու աշխատանքը համատեղած երիտասարդների բաշխումն ըստ հիմնական տնտեսական կարգավիճակի 25

3.4 Երիտասարդների և նրանց ծնողների կրթության մակարդակների համեմատությունը 26

3.5 Երիտասարդների բաշխումն ըստ տնային տնտեսության եկամտի և կրթության մակարդակի (տոկոս) 27

3.6 Ներկայիս ուսանողների բաշխումն ըստ կրթության նախընտրելի ոլորտի 29

3.7 Երիտասարդության մասնակցությունն ըստ հիմնական տնտեսական ակտիվության և սեռի 30

3.8 Երիտասարդության բաշխումն ըստ կյանքի գլխավոր նպատակի, հիմնական տնտեսական գործունեության կարգավիճակի և սեռի 34

3.9 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողներն ըստ զբաղվածության նպաստների/արտոնությունների մատչելիության և սեռի 40

3.10 Երիտասարդների զբաղվածությունն ըստ շաբաթական փաստացի աշխատած ժամերի և սեռի 42

3.11 Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ զբաղված երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, սեռի և բնակավայրի 45

3.12 Երիտասարդների գործազրկության ցուցանիշներն ըստ ստացած կրթության մակարդակի և սեռի 51

3.13 Կադրերի պակասուրդի կամ գերառաջարկի սցենարները գործազուրկ երիտասարդների կողմից փնտրվող աշխատանքների համար և զբաղված երիտասարդների կողմից զբաղեցրած աշխատանքներն ըստ զբաղվածության (տոկոսային կետերով)..... 53

3.14 Զբաղված և գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ աշխատանք փնտրելու մեթոդների 55

4.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ անցման փուլերի և բնակության վայրի 60

4.2 Անցման փուլում գտնվող երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, տնային տնտեսության եկամտի մակարդակների և ստացած կրթության մակարդակի 62

4.3 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, տնային տնտեսությունների եկամտի մակարդակների և ստացած կրթության մակարդակի 63

4.4 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, սեռի, բնակավայրի, ընտանիքի եկամտի մակարդակի և ստացած կրթության մակարդակի 65

4.5 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ նախորդ գործունեության (տոկոս) 67

Երախտիքի խոսք

2012թ. «Անցում դպրոցից աշխատանք» հետազոտությունը Հայաստանում իրականացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից, «Աշխատանք երիտասարդների համար» գործընկերության և ՄասթըրՔարդ հիմնադրամի ֆինանսավորմամբ: ԱՄԿ–ը չափազանց երախտապարտ է ՀՀ ԱՎԾ թիմին, որն աշխատել է Գագիկ Գևորգյանի և Լուսինե Քալանթարյանի հմուտ ղեկավարության ներքո:

Զեկույցի պատրաստման գործընթացում ներգրավվել են բազմաթիվ անձինք. Սևակ Ալեքյանը ստանձնել է նախնական վերլուծությունը, Նիկոլաս Սերիերը մշակել է վերջնական տեքստի նախագիծը, Տակաակի Կիզուն պատրաստել է տվյալների աղյուսակները, իսկ Սյուզան Դիվալդը զբաղվել է տեխնիկական խմբագրմամբ, ԱՄԿ «Աշխատանք երիտասարդների համար» թիմի համակարգող Սառա Էլդերը նույնպես էական ներդրում է ունեցել փաստաթղթում: Նույն թիմի անդամ Յոնջա Գուրբուզերը զգալի տեխնիկական աջակցություն է ցուցաբերել հետազոտության բոլոր փուլերում:

Հետազոտության նախնական արդյունքները ներկայացվել են 2014թ. հոկտեմբերի 3-ին Երևանում կայացած ազգային սեմինարի ժամանակ: ԱՄԿ-ը ցանկանում է շնորհակալություն հայտնել սեմինարի մասնակիցներին՝ նրանց կողմից արդյունքների վավերացման և երկրում երիտասարդության հարցերին առնչվող քաղաքականությունների և ծրագրերի մշակման և մոնիտորինգի համար հետազոտության կարևորության վերաբերյալ հետադարձ կապ ապահովելու համար: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում ԱՄԿ Արժանապատիվ աշխատանքի տեխնիկական աջակցության թիմի զբաղվածության հարցերով ավագ մասնագետ Օլգա Կուլանան և Հայաստանում ԱՄԿ ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը անգնահատելի օգնություն ցուցաբերեցին, աջակցելով երկրում իրականացվող գործունեությանը, և անփոխարինելի էին Սեմինարի կազմակերպման գործում:

Ի վերջո, ԱՄԿ-ը ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել ՄասթըրՔարդ հիմնադրամի ցուցաբերած աջակցության համար, ինչը հնարավորություն տվեց, որ հետազոտությունն իրականացվի «Աշխատանք երիտասարդների համար» գործընկերության շրջանակներում:

1. Ներածություն և հիմնական բացահայտումներ

1.1 Ընդհանուր նկարագիր

Երիտասարդությունը մարդկային կյանքի էական ժամանակահատվածներից մեկն է, եթե ոչ ամենաէականը աշխատանքային կարիերայի հիմքերը դնելու առումով: Այս ընթացքում երիտասարդները նախանշում են իրենց ձգտումներն ու կյանքի նպատակները, իրենց ուրույն դերերն ու պատասխանատվություններն են փնտրում և գտնում հասարակության մեջ և ձգտում են հասնել տնտեսական անկախության: Սա նշանակում է, որ երիտասարդությունը սոցիալական և հոգեբանական անցումների ժամանակաշրջան է, երբ երիտասարդները պետք է կարևոր որոշումներ կայացնեն և ընտրություններ կատարեն, որոնք էապես ազդում են իրենց կյանքի ընթացքի վրա։

Երիտասարդների հետագա կյանքի որակը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչ հաջողությամբ են նրանք իրականացնում դպրոցից աշխատանք անցումը: Դպրոցից հետո արժանապատիվ աշխատանքի անցնելու ձախողումը լուրջ և տևական հետևանքներ է ունենում երիտասարդ շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների, ինչպես նաև եկամուտների վրա։ Գործազրկության, թերզբաղվածության և անգործության վրա ծախսված նվազագույն իսկ ժամանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ երիտասարդ անձի վրա (ԱՄԿ, 2012թ.): Ընդհակառակը, աշխատաշուկայում լավ սկիզբը դրականորեն է ազդում երիտասարդների մասնագիտական և անձնական հաջողությունների վրա կյանքի հետագա փուլերում:

Երիտասարդների զբաղվածությանը բնորոշ խնդիրները բնութագրելու և աշխատաշուկա երիտասարդների անցման աջակցությանն ուղղված համապատասխան գործիքների ձևավորման գործում քաղաքականություն մշակողներին աջակցելու նպատակով ԱՄԿ-ը մշակել է իր «Անցում դպրոցից աշխատանք» հետազոտությունը (ԱԴԱՀ), որը տնային տնտեսությունների 15–29 տարեկան երիտասարդների շրջանում իրականացվող հետազոտություն է։ ԱԴԱՀ-ը, որի առաջին փուլն իրականացվել է 2012թ., իսկ երկրորդ փուլը՝ 2014թ.-ին, կարող է ծառայել որպես ազգային զբաղվածության քաղաքականության մեջ նախատեսված քաղաքականությունների և ծրագրերի և այլ ազգային գործիքների ազդեցության մշտադիտարկման գլխավոր գործիք։

Հետազոտության ցուցանիշները, որոնք վերլուծության են ենթարկված այս զեկույցում, նպատակ ունեն ներկայացնել աշխատաշուկայում երիտասարդների շատ ավելի մանրամասն պատկերը, քան սովորաբար արվում է ստանդարտ հետազոտություններում, այդ թվում՝ աշխատուժի հետազոտություններում։

1.2 Հիմնական բացահայտումներ

Երիտասարդ տղամարդկանց մեծ արտագաղթի պատկերը հստակ ազդեցություն ունի ժողովրդագրական կառուցվածքի վրա:

Հայաստանի երիտասարդների ժողովրդագրական կառուցվածքն արտացոլում է տղամարդկանց մեծ արտագաղթի պատկեր: Կանայք կազմում են 15-29 տարեկան բնակչության 55.8 տոկոսը: Կին-տղամարդ հարաբերակցությունը, մասնավորապես, անհավասարակշիռ է 20-24 տարիքային խմբում, որտեղ յուրաքանչյուր 100 տղամարդու դիմաց հաշվվում է 132.7 երիտասարդ կին: Հաշվի առնելով երկրի երիտասարդության կրթության բարձր մակարդակը, սա նշանակում է, որ Հայաստանը տուժում է ուղեղների արտահոսքից, քանի որ շատ երիտասարդներ տեղափոխվում են արտերկիր՝ աշխատանքի ավելի լավ հեռանկար փնտրելով:

Հայ երիտասարդները շատ կրթված են, սակայն խուսափում են միջին մասնագիտական կրթությունից:

Ե՛վ երիտասարդ տղամարդիկ, և՛ կանայք շատ կրթված են: Կրթություն ստանալու ձգտումը գրեթե համընդհանուր է: Երիտասարդների 99,2 տոկոսը առնվազն միջնակարգ, իսկ 33.7 տոկոսը՝ բարձրագույն կրթություն ունեն: Հետազոտության պահին հարցված երիտասարդ բնակչության գրեթե կեսը հաճախում էր դպրոց (45.3 տոկոս) և, ամենայն հավանականությամբ, ավարտելու էր ավագ դպրոցը: Երիտասարդների մեծամասնությունն ուներ նույն մակարդակի կրթություն, ինչ որ իրենց ծնողները (63.7 տոկոսն ուներ նույն մակարդակի կրթություն, ինչ որ իրենց հայրերը, և 64.6 տոկոսը՝ նույնը, ինչ իրենց մայրերը): Ավելի ավագ սերնդի նկատմամբ կրթության ավելի բարձր մակարդակը, մասնավորապես, հիշատակության է արժանի բարձրագույն կրթության վերաբերյալ. բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների 51.1 տոկոսն ունեն ավելի բարձր կրթության մակարդակ, քան իրենց հայրերը և 56.6 տոկոսը՝ ավելի բարձր մակարդակ, քան իրենց մայրերը:

Ինչ վերաբերում է միջին մասնագիտական կրթությանը, տվյալները ցույց են տալիս, որ միջին մասնագիտական կրթության դիպլոմ ստացած երիտասարդների թիվն ու տոկոսը զգալիորեն նվազել է՝ համեմատած նրանց ծնողների հետ: Միջին մասնագիտական կրթությունն այլևս չի գրավում երիտասարդներին Հայաստանում: Երիտասարդ ուսանողների մեծամասնությունը ձգտում է պրոֆեսիոնալ աշխատանք ունենալ, առաջացնելով երիտասարդ տեխնիկական աշխատողների և ընդհանուր աշխատողների պոտենցիալ անբավարարություն: Սա հաստատվում է այնպիսի հարակից մասնագիտությունների զբաղվածության ցածր մակարդակով, ինչպիսիք են, օրինակ, տեխնիկական աշխատողները (երիտասարդների ընդհանուր զբաղվածության 9.7 տոկոսը), արհեստագործներն ու հարակից մասնագիտությունների աշխատողները (12.1 տոկոս) և հաստոցավարներն ու մեխանիկները (3.2 տոկոս): Նմանապես, գործազուրկ երիտասարդների միայն 0.1 տոկոսն է աշխատանք փնտրում գյուղատնտեսական աշխատանքների, և միայն մի փոքր ավելին՝ 0.6 տոկոսը՝ արդյունաբերական (ինչպես օրինակ հաստոցավարներ ու մեխանիկներ) ոլորտում:

Քաղաքաբնակ երիտասարդներն ավելի քիչ են ընդգրկված խոցելի զբաղվածության մեջ, քան գյուղաբնակները ...

Աշխատուժի մեջ երիտասարդների մասնակցության ցուցանիշը գյուղական և քաղաքային բնակավայրերում քիչ թե շատ նույնն է (համապատասխանաբար 43.9 և 44.2 տոկոս), սակայն աշխատող երիտասարդների շրջանում խոցելի զբաղվածությունը, որը սահմանվում է որպես ինքնաածախսաածածկվող աշխատանք և ընտանիքի չվճարվող աշխատանք, շատ ավելի տարածված է գյուղական բնակավայրերում (աշխատող երիտասարդների 52.3 տոկոսը), քան քաղաքային բնակավայրերում (13,7 տոկոս):

…նրանք ավելի հաճախ են բախվում գործազրկության խնդրին:

Մյուս կողմից, գործազրկությունը շատ ավելի տարածված է քաղաքային բնակավայրերում. Հայաստանում երիտասարդների գործազրկության մակարդակը քաղաքային բնակավայրերում կազմում է 34.5 տոկոս՝ գյուղական բնակավայրերում գործազրկության 13.1 տոկոսի համեմատ:

Երիտասարդ կանայք անբարենպաստ վիճակում են՝ կապված իրենց գործունեության տեսակի հետ, ավելի երկար ժամանակ են ծախսում աշխատանք գտնելու վրա, քան երիտասարդ տղամարդիկ և բախվում են աշխատանքի զգալիորեն ցածր վարձատրության խնդրին:

Չնայած իրենց ավելի բարձր կրթական մակարդակին, երիտասարդ կանայք ունեն աշխատուժի մեջ մասնակցության ավելի ցածր ցուցանիշ, քան երիտասարդ տղամարդիկ (36.8 տոկոս՝ երիտասարդ տղամարդկանց 53.0 տոկոսի համեմատ), և զգալիորեն ավելի բարձր գործազրկության մակարդակ (համապատասխանաբար 36,6 տոկոս՝ 24.2 տոկոսի համեմատ): Սակայն, այն երիտասարդ կանանց համար, ովքեր կարողանում են աշխատանք գտնել, մշտական զբաղվածություն ունենալու հնարավորությունն ավելի մեծ է, քան տղամարդկանցը (կին աշխատողների 70.9 տոկոս՝ տղամարդ աշխատողների 64.4 տոկոսի համեմատ): Առավելությունն այստեղ արտացոլում է կանանց ինքնազբաղվածության ավելի փոքր հավանականությունը, ինչպես նաև երիտասարդ կանանց ավելի նեղ մասնագիտական բաշխումը: Սակայն, կին աշխատողների համար զգալի թերություն է նրանց ավելի ցածր միջին վարձատրությունը՝ տղամարդկանց համեմատ: Երիտասարդ տղամարդ աշխատողները միջին հաշվով, մեկ ու կես անգամ ավելի բարձր ամսական աշխատավարձ են ստանում, քան երիտասարդ կին աշխատողները:

Զբաղվածության մասնագիտական բաշխվածությունն զգալիորեն ավելի բազմազան է տղամարդկանց, քան կանանց համար:

Կանանց զբաղվածությունը շատ ավելի կենտրոնացված է, քան տղամարդկանցը: Ընդհանուր զբաղվածության մեջ կանանց զբաղվածության ավելի քան 10 տոկոս մասնաբաժինը կազմող երեք տեսակներից յուրաքանչյուրը կազմում է՝ մասնագիտական պաշտոններ (33.1 տոկոս), սպասարկման և առևտրի ոլորտի աշխատողներ (21,8 տոկոս) և տեխնիկական աշխատողներ (12.6 տոկոս): Երիտասարդ կանանց համար ավելի քիչ զբաղմունքներ են համարվում ընդունելի, ինչը հանգեցնում է ավելի երկար հերթերի և գործազրկության բարձր մակարդակի: Ինչ վերաբերում է տղամարդկանց, վեց

մասնագիտական ոլորտներ ունեն ավելի քան 10 տոկոս զբաղվածության մասնաբաժին։ Նվազման կարգով, դրանք են՝ արհեստները և հարակից մասնագիտությունները, ցածր որակավորում պահանջող աշխատանքները, սպասարկման և առևտրի ոլորտը, բարձր որակավորում պահանջող գյուղատնտեսական և ձկնաբուծական ոլորտը, օրենսդիր, բարձրաստիճան և ղեկավար պաշտոնները և մասնագիտական գործունեությունը։ Երիտասարդ կանանց կենտրոնացումը պետական հատվածի զբաղվածության մեջ՝ հանրային կառավարման, կրթության և առողջապահության և սոցիալական աշխատանքի, նույնպես շատ ավելի բարձր է, քան երիտասարդ տղամարդկանցը, կազմելով համապատասխանաբար 31.4 տոկոս (կանայք) և 15.9 տոկոս (տղամարդիկ)։

Վարձու աշխատանքը զբաղվածության բացարձակ գերիշխող ձևն է առնվազն քաղաքային բնակավայրերում։

Երիտասարդների մոտ 75 տոկոսը զբաղվում է վարձու աշխատանքով, չնայած, ցուցանիշները զգալիորեն տարբերվում են ըստ բնակության վայրի։ Քաղաքային բնակավայրերում, երիտասարդ աշխատողների 84.1 տոկոսը զբաղված են վարձու և ծառայությունների ոլորտի աշխատանքներում, գյուղական բնակավայրերում 47.5 տոկոսի համեմատ։ Վճարվող աշխատողների թվի երեք քառորդը (75.1 տոկոս) ունեն գրավոր պայմանագրեր, որոնց ճնշող մեծամասնությունն անժամկետ է (74.9 տոկոս)։ Ավելի մեծ թվով երիտասարդ կին աշխատողներ ունեն գրավոր պայմանագիր, քան երիտասարդ տղամարդիկ (86.1 տոկոս՝ տղամարդկանց 66.3 տոկոսի համեմատ), ինչպես նաև անժամկետ պայմանագիր։ Արդյունքում, կանանց՝ սոցիալական նպաստներից ու փոխհատուցումներից օգտվելու հնարավորությունը նույնպես, որպես կանոն, ավելի բարձր է, քան տղամարդկանցը։ Օրինակ, երիտասարդ կին աշխատողների 71.9 տոկոսն օգտվում է ամենամյա վճարովի արձակուրդից՝ երիտասարդ տղամարդ աշխատողների ընդամենը 55.1 տոկոսի համեմատ, իսկ երիտասարդ կին աշխատողների 73.1 տոկոսն օգտվում է սոցիալական ապահովության վճարներից, երիտասարդ տղամարդ աշխատողների 52.9 տոկոսի համեմատ։

Ինքնազբաղվածությունը հիմնականում չի դիտարկվում որպես եկամտաբեր տարբերակ։

Երիտասարդների միայն 8.2 տոկոսն է ինքնազբաղված՝ ներառյալ գործատուներ և անհատ ձեռներեցությամբ զբաղվողներ։ Երիտասարդ աշխատողների ևս 16.9 տոկոսը ընդգրկված են չվճարվող ընտանեկան աշխատանքներում (օգնում են ընտանիքի աշխատողներին)։ Ինքնազբաղված երիտասարդների երկու երրորդը որպես ինքնազբաղվածությանը նախապատվություն տալու պատճառ նշել են ավելի բարձր եկամտի կամ ավելի անկախ լինելու հնարավորությունները։ Ինքնազբաղված երիտասարդների ևս մեկ քառորդը դիմել է ինքնազբաղվածության ակամա, քանի որ չի կարողացել վճարովի աշխատանք գտնել։ Թվերը ցույց են տալիս, որ երկրում ձեռնարկատիրության նկատմամբ հակումը թույլ է։ Սա հաստատվում է նաև որևէ ֆինանսական ծառայությունից երբևէ չօգտված երիտասարդների բարձր տոկոսով (74.6 տոկոս)։ Հարցվածներից գործնականում ոչ մի երիտասարդ երբևէ պայմանագիր չի կնքել բիզնես վարկ ստանալու համար։

Աշխատանքի որակի հետ կապված ամենակարևոր հարցը Հայաստանի երիտասարդության շրջանում ցածր վարձատրությունն է, սակայն որակավորման անհամապատասխանությունը մտահոգության խնդիր է երիտասարդ կանանց շրջանում:

Երիտասարդ աշխատողների ավելի քան կեսը (57.1 տոկոս), ստանում է միջինից ցածր աշխատավարձ (երիտասարդների շրջանում): Կանայք, մասնավորապես, զգալիորեն պակաս են վաստակում, քան տղամարդիկ: Ընդհանուր առմամբ, սակայն, երիտասարդների 77.9 տոկոսը գոհ են իրենց ներկայիս աշխատանքից, սակայն գոհունակության աստիճանը որոշ չափով հակասական է նրանով, որ ներկայումս աշխատողների 48.1 տոկոսը հայտարարել է, որ ցանկություն ունի փոխել իր աշխատանքը: Աշխատանքը փոխել ցանկանալու պատճառների թվում աշխատավարձից դժգոհության մակարդակն ամենամեծ մտահոգությունն է (59.6 տոկոսի համար), թեև իրենց որակավորմանն ավելի համապատասխանող աշխատանք գտնելու ցանկությունը նույնպես նշվել է 11.6 տոկոսի կողմից (երիտասարդ կանանց 20.0 տոկոսը): Ցածր աշխատավարձի հետ կապված մտահոգությունն արտահայտվում է նաև վիճակագրության մեջ, որը բացահայտել է, որ երիտասարդ տղամարդ աշխատողների 76.7 տոկոսը և երիտասարդ կին աշխատողների 45.1 տոկոսը հրաժարվել է նախկին աշխատանքի առաջարկից, քանի որ համարել է, որ աշխատավարձը շատ ցածր է:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը համատարած է

Ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում երիտասարդների զբաղվածության լայնորեն տարածված բնութագիր է, որն ընդգրկում է երիտասարդ աշխատողների 64.2 տոկոսը: Այն բաղկացած է երկու կատեգորիաներից. ոչ ֆորմալ (չգրանցված) ոլորտի աշխատողներ, և վարձատրվող աշխատողներ, որոնք ոչ-ֆորմալ աշխատատեղեր են զբաղեցնում ֆորմալ հատվածում (չեն օգտվում այնպիսի հիմնական արտոնություններից, ինչպիսիք են սոցիալական ապահովագրության ծածկույթը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները կամ ամենամյա արձակուրդը): Առաջիններն ավելի տարածված են գյուղական, իսկ վերջինները՝ քաղաքային տարածքներում: Գյուղական բնակավայրերում երիտասարդ աշխատողների 82.2 տոկոսը ոչ-ֆորմալ աշխատողներ են, քաղաքային բնակավայրերում առկա 58.1 տոկոսի համեմատ:

Երիտասարդների շրջանում գործազրկության ցուցանիշը շատ բարձր է՝ 30.2 տոկոս[2], և գործազուրկների 52.3 տոկոսը աշխատանք է փնտրում ավելի քան 12 ամիս:

Տնտեսապես ակտիվ երիտասարդների գրեթե մեկ երրորդը (30,2 տոկոս), և ընդհանուր երիտասարդ բնակչության 13.3 տոկոսը գործազուրկ են: Ավելի մտահոգիչ է այն փաստը, որ գործազուրկ երիտասարդների գրեթե երկու երրորդը (65,1 տոկոս) աշխատանք է փնտրում արդեն ավելի քան 6 ամիս, իսկ 52.3 տոկոսը՝ ավելի քան 1 տարի: Գործազրկության ամենաբարձր ցուցանիշը միջին մասնագիտական կրթություն ստացած երիտասարդների շրջանում է, թեև նրանք չեն ներկայացնում աշխատանք փնտրողների զգալի մաս: Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակը 29.5 տոկոս է:

ԱԴԱՀ տվյալները խնդրահարույց հակասություն են ցույց տալիս, ըստ որի՝ ներկայիս ուսանողները շարունակում են ուսում ստանալ այնպիսի ոլորտներում, որտեղ շատ քիչ երիտասարդներ են աշխատանք գտնում: Օրինակ, թեև աշխատատեղեր հնարավոր է գտնել գյուղատնտեսության ոլորտում, հատկապես, բարձր որակավորում պահանջող գյուղատնտեսների դեպքում, երիտասարդ ուսանողների միայն 4.0 տոկոսն է ներգրավված գյուղատնտեսական և անասնաբուժական ոլորտի մասնագիտությունների ուսուցման մեջ: Բացի այդ, թեև երիտասարդ մասնագետներով հագեցվածության նշաններն ակնհայտ են (գործազուրկ երիտասարդների 37.5 տոկոսը նշում է, որ իրենք ձգտում են աշխատել որպես երիտասարդ մասնագետներ, սակայն ընդհանուր երիտասարդների միայն 20.5 տոկոսն է աշխատում որպես մասնագետ), շատ ուսանողներ շարունակում են դիմել մաթեմատիկայի և հաշվողական տեխնիկայի, կամ սոցիալական գիտությունների և բիզնեսի ոլորտի մասնագիտությունների համար:

Հայաստանում բարձր է նաև ոչ զբաղված, կրթություն կամ ուսուցում տվյալ պահին չստացող երիտասարդների (ՈՉՈԿՈՒ* երիտասարդություն) թիվը՝ 27.4 տոկոս: ՈՉՈԿՈՒ ցուցանիշը երիտասարդ կանանց շրջանում կրկնակի բարձր է երիտասարդ տղամարդկանց համեմատ՝ համապատասխանաբար 36,5 տոկոս և 15.9 տոկոս: Երիտասարդ կանայք շատ ավելի մեծ հավանականություն ունեն պասիվ և դպրոցից դուրս լինելու, որպեսզի ընտանեկան պարտականություններ կատարեն: Խնդիրը կայանում է նրանում, որ լինելով ոչ ակտիվ կյանքի այնպիսի ժամանակահատվածում, որի ընթացքում սովորաբար հմտություններ,

[2] Երիտասարդների գլոբալ գործազրկության միջին մակարդակը 2013 թ.-ին գնահատվում էր 12.6 տոկոս: Տարածաշրջանում (Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայի [ոչ եվրոպական միություն (ԵՄ)] և ԱՊՀ պետություններում երիտասարդների գործազրկության մակարդակը նույն թվականին 17.9 տոկոս էր (ԱՄԿ, 2013 թ.): Հայաստանում ԱԴԱ հետազոտության արդյունքները նույնպես ավելի բարձր էին, քան տարածաշրջանի այլ երկրներում ԱԴԱՀ արդյունքները՝ Ղրղզստան (13.5 տոկոս), Մոլդովա (14,1 տոկոս), Ռուսաստանի Դաշնություն (11.7 տոկոս) և Ուկրաինա (16.8 տոկոս): «Աշխատանք երիտասարդների համար» ծրագրի երկրներից միայն նախկին Հարավսլավիայի՝ Մակեդոնիայի Հանրապետությունն ուներ երիտասարդների գործազրկության ավելի բարձր ցուցանիշ՝ 43.3 տոկոս:

գիտելիքներ կամ փորձ են ձեռքբերում, ապագայում աշխատանք գտնելու հեռանկարները ի չիք դարձնելու հավանականությունը խիստ մեծանում է:

Հայաստանում աշխատաշուկան վտանգավոր ազդանշաններ է ուղարկում կրթական ներդրումների օգտակարության վերաբերյալ:

Բուհերի շրջանավարտների շրջանում առկա երիտասարդների գործազրկության բարձր ցուցանիշների և միայն միջնակարգ կրթություն ստացածների համեմատ նրանց ավելի ցածր աշխատավարձի պայմաններում, աշխատաշուկան Հայաստանում վտանգավոր ազդանշաններ է տալիս կրթության մեջ ներդրումների օգտակարության վերաբերյալ:

Շատ երիտասարդներ դեռևս նոր պետք է սկսեն իրենց անցումը, սակայն ավագ տարիքի երիտասարդների մի զգալի մասը մնում է «խրված» անցումային փուլում, դեռևս ձեռք չբերելով կայուն և / կամ բավարար զբաղվածություն:

Երիտասարդների մի մեծ տոկոս (39.1 տոկոս), դեռևս նոր պետք է սկսեն իրենց անցումը, ինչը բացատրվում է նրանով, որ նրանցից շատերը դեռևս սովորում են: Կշեռքի մյուս նժարին դեռևս անցման փուլում գտնվող ավագ տարիքի՝ 25-29 տարեկան երիտասարդների բարձր ցուցանիշն է՝ 41.7 տոկոս:

Շատ երիտասարդների անցումն աշխատաշուկա երկարատև և բարդ է

Բացառությամբ այն երիտասարդների, ովքեր ուղղակիորեն անցել են կայուն կամ գոհացուցիչ զբաղվածության (անցումն ավարտած ընդհանուր երիտասարդների 38.3 տոկոսը), անցման ճանապարհը ներառել է աշխատաշուկայի, միջին հաշվով, 1.8 միջանկյալ գործունեություն, անկախ գործազրկությունից, զբաղվածությունից կամ անգործությունից, և տևել է 24.9 ամիս: Երկրի համար բնորոշ երիտասարդը իր անցման ճանապարհին «միայն» մեկ (1.1) գործազրկության ժամանակահատված է ունեցել, սակայն միջին տևողությունը երկար է՝ միջինը 15.5 ամիս:

1.3 Զեկույցի կառուցվածքը

Սույն զեկույցը կազմված է հինգ բաժիններից: Զեկույցի հաջորդ՝ երկրորդ բաժնում ներկայացված է Հայաստանի աշխատաշուկայի ընդհանուր նկարագիրը և ԱԴԱՀ-ը: Զեկույցի երրորդ բաժինը ներկայացնում է ԱԴԱՀ արդյունքները և մանրամասներ երիտասարդության բնութագրերի և աշխատաշուկայում նրանց արդյունքների վերաբերյալ: Այն ներառում է տնային տնտեսությունների բնութագրերի ընդհանուր նկարագրությունը, երիտասարդների ձգտումները և կյանքի նպատակները, նրանց կրթական ձեռքբերումները, երիտասարդ ուսանողների բնութագրերը և երիտասարդ աշխատողների, գործազուրկ երիտասարդների և սովորելուց բացի այլ պատճառներով աշխատաշուկայից դուրս գտնվող երիտասարդների մանրամասն բնութագիրը: Բաժին 4-ը ներկայացնում է աշխատաշուկա անցման փուլերի դասակարգումը և ուսումնասիրում է այն բնութագրերը, որոնք հանգեցնում են աշխատաշուկայում ավելի նպաստավոր արդյունքների, մասնավորապես, կայուն աշխատանք ձեռքբերելու առումով: Այս բաժինը նաև քննարկում է այն ժամանակի տևողությունը, որ երիտասարդ տղամարդիկ և

կանայք ծախսում են անցման փուլում, և այդ ճանապարհին նրանց ունեցած տարբեր փորձառությունները: Ի վերջո, բաժին 5-ը նկարագրում է Հայաստանում երիտասարդության զբաղվածության հարցերին առնչվող ազգային քաղաքականության շրջանակը և ներկայացնում է քաղաքականության վերաբերյալ այն եզրակացությունները, որոնք արվել են հետազոտության վերլուծության արդյունքում:

2. Հայաստանում աշխատաշուկայի նկարագիրը և հետազոտության մեթոդաբանությունը

2.1 Սոցիալ-տնտեսական համատեքստը

1991 թ.-ին իր անկախությունից ի վեր, Հայաստանը ենթարկվել է խորը փոփոխությունների, հաջողությամբ դիմակայելով պլանայինից շուկայական տնտեսության անցման հետևանքով առաջացող մարտահրավերներին: Սա հնարավոր դարձավ մի շարք բարեփոխումների և պետական ներդրումների միջոցով, ինչպիսիք էին 2003-08թթ. Աղքատության կրճատման ռազմավարությունը, որը բավականաչափ բարելավեց Հայաստանի բիզնես միջավայրը և ենթակառուցվածքները և հանգեցրեց երկնիշ տնտեսական աճի՝ 2000թ. -ից մինչ օրս ընկած ժամանակահատվածի մեծ մասում: 2008 թ.-ին մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) հասնում էր մոտավորապես 4,000 ԱՄՆ դոլարի՝ 1990 թ.-ի 636 ԱՄՆ դոլարի համեմատ:

Այս ձեռքբերումները, սակայն, մնացին փխրուն, և 2008 թ. ֆինանսական ճգնաժամն ընդգծեց, թե որքան խոցելի էր Հայաստանն անբարենպաստ և արտաքին ցնցումների նկատմամբ: Արտադրությունը փլուզվեց, գործազրկությունն աճեց, գործարարների եկամուտը նվազեց և փոքր ու միջին բիզնեսն անկում ապրեց, իսկ աղքատության մակարդակն աճեց, 2008թ. 27.6 տոկոսից 2010թ. հասնելով մինչև 35.8 տոկոսի (Համաշխարհային բանկի խումբ, 2014թ.):

Տնտեսությունն այժմ վերականգնվել է, ինչը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության աճով, գլխավորապես՝ արտադրական ոլորտում: Բացի այդ, թանկարժեք մետաղների բարձր միջազգային գները 2011 թ. հանքարդյունաբերության ոլորտում բերեցին անփոփոխ գներով 22,5 տոկոս աճի: Գյուղատնտեսության աճը 2011թ. և 2012թ. կազմել է 14.0 և 9,5 տոկոս: Արդյունքում, 2012թ. իրական ՀՆԱ-ի աճը հասել է 7.2 տոկոսի, թեև մեկ շնչին ընկնող 3,351 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ն դեռևս պետք է լիարժեք վերականգնվի:[3] Մակրոտնտեսական հեռանկարը նույնպես բարելավվել է, նույնիսկ եթե 44 տոկոս պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը, մնում է բարձր (Համաշխարհային բանկ, 2013թ.): Ընտրված մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2.1-ում:

[3] Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տվյալները մատչելի են ՀԲ տվյալների բազայում, հետևյալ հասցեով՝ http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?page=1.

Աղյուսակ 2.1 Ընտրված մակրոտնտեսական ցուցանիշներ, Հայաստան, 2009-13թթ. (ՀՆԱ տոկոս, եթե այլ բան սահմանված չէ)

ցուցանիշ	2009	2010	2011	2012*	2013*
Ազգային ցուցանիշեր					
Իրական ՀՆԱ (% աճ)	-14.1	2.2	4.7	7.2	5.0
Սպառողական գների ինդեքսը (% աճ)	3.4	8.2	7.7	2.6	3.6
Ներդրումներ և խնայողություններ					
ներդրումներ	36.4	33.4	26.3	26.6	27.7
Ազգային խնայողություններ	18.5	18.1	16.9	17.8	20.3
Ներքին խնայողություններ	7.1	8.4	4.3	6.7	7.8
Պետական բալանս					
եկամուտներ	21.5	21.6	23.3	22.7	23.5
ծախսեր	29.2	26.6	26.1	24.4	26.2
Ընդհանուր մնացորդը	-7.6	-5.0	-2.8	-1.7	-2.7
Արտաքին ոլորտ					
արտահանում	15.5	20.9	23.7	24.5	28.3
ներմուծում	42.6	45.5	47.3	49.2	50.3
Զուտ դրամական փոխանցումներ	10.4	8.7	11.1	10.9	12.0
օտարերկրյա ուղղակի ներդրումներ	8.4	6.1	4.4	4.4	4.3

* Կանխատեսումներ
Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, 2013.

Հայաստանի բնակչությունը 2013թ. սկզբին Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից գնահատվել է 3 միլիոնից փոքր-ինչ ավելի (Հավելվածի Աղյուսակ Ա .1): Բնակչությունը հիմնականում քաղաքային է (63.3 տոկոս), ընդ որում մայրաքաղաք Երևանում բնակչության թիվը կազմում էր ընդհանուր բնակչության ավելի քան կեսը (55.5 տոկոս): Բնակչության մեկ երրորդից մի փոքր ավելին (36,7 տոկոս) ապրում էր գյուղական վայրերում:

2000 թ.-ից ի վեր բնակչության աճը նվազագույն է եղել՝ տարեկան շուրջ 1.2 տոկոս: Այս դանդաղ աճը հիմնականում կարող է վերագրվել արտագաղթին: Գնահատվել է, որ անկախությունից ի վեր արտագաղթել է 700,000-ից 1.3 մլն մարդ: Երկրից մեկնողների ճնշող մեծամասնությունը 21-50 տարեկան են, որոնցից միայն մի փոքր մասն են կանայք (շուրջ 6 տոկոս): Սեզոնային արտագաղթը, մասնավորապես, դեպի Ռուսաստանի Դաշնություն և ԱՊՀ այլ երկրներ, նույնպես զգալի է: Գնահատվում է, որ 2002-08թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանից հեռացել է աշխատունակ տարիքի բնակչության 14.2-ից 17,9 տոկոսը: Արդյունքում, դրամական փոխանցումները գնալով ավելի կարևոր դեր են խաղում սոցիալական կայունության և եկամուտների մակարդակի պահպանման մեջ, և ենթադրվում է, որ 2013 թ. կազմել են ընդհանուր ՀՆԱ-ի մինչև 12 տոկոսը (Համաշխարհային բանկ, 2013 թ.):

Սակայն, արտագաղթի բարձր մակարդակները ժողովրդագրական ճնշումներ են առաջացնում, և Հայաստանը պետք է զբաղվի բնակչության ծերացման խնդրով: 2013 թ., 60 և ավելի տարիք ունեցող բնակչության թիվը կազմում էր ընդհանուր բնակչության 15.1 տոկոսը, իսկ 15-ից ցածր տարիք ունեցող բնակչության թիվը կազմում էր 18.9 տոկոսը: 15-29 տարիքային խումբը,

որը հանդիսանում է ԱԴԱ հետազոտության թիրախը, կազմում էր բնակչության 25.7 տոկոսը:

2.2 Աշխատաշուկան Հայաստանում

Աղյուսակ 2.2-ը ներկայացնում է 2012թ. Հայաստանում աշխատունակ տարիքի բնակչության համար ընտրված աշխատաշուկայի ցուցանիշները: Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանի աշխատաշուկան բնութագրվում էր մասնակցության ցածր և գործազրկության բարձր մակարդակներով: Ազգային մակարդակում, աշխատուժի մասնակցության ցուցանիշը 62.7տոկոս էր, զբաղված բնակչության հարաբերակցությունն ընդհանուր բնակչության նկատմամբ՝ 51,9տոկոս, իսկ գործազրկության ցուցանիշը՝ 17.3տոկոս: Զբաղվածության այսպիսի ցուցանիշով Հայաստանը գրավում էր վերջին տեղը ԵՄ երկրների շարքում (Համաշխարհային բանկ, 2013 թ.):

Աղյուսակ 2.2 Աշխատաշուկայի ընտրված ցուցանիշներն ըստ սեռի և բնակության վայրի, 2012թ.

Բնակության վայր և սեռ	Աշխատանքային տարիքի[1] ('000)	զբաղված ('000)	գործազուրկ ('000)	Տնտեսապես ակտիվ %	զբաղված %	Գործազուրկ %
Հայաստան	2 260.8	1 172.8	245.5	62.7	51.9	17.3
Սեռ						
տղամարդ	1 004.7	605.0	119.4	72.1	60.2	16.5
կին	1 256.1	567.8	126.1	55.2	45.2	18.2
Ըստ բնակության վայրի						
քաղաքային	1 475.1	627.4	215.0	57.1	42.5	25.5
գյուղական	785.7	545.4	30.5	73.3	69.4	5.3

[1] Աշխատունակ տարիքի բնակչությունը ներառում է 15–75 տարեկաններին

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն, 2012թ.

Ազգային թվերը թաքցնում են սեռերի, բնակության վայրի, կրթության մակարդակի և տարիքի միջև էական տարբերությունները: Օրինակ, աշխատուժի մեջ կանանց մասնակցության ցուցանիշը շատ ավելի ցածր էր, քան տղամարդկանցը, համապատասխանաբար 55.2 տոկոս և 72,1 տոկոս տոկոս: Նմանապես, զբաղվածության ցուցանիշը 45.2 տոկոս էր կանանց և 60.2 տոկոս՝ տղամարդկանց համար: Ուշագրավ է, որ գործազրկության ցուցանիշում գենդերային տարբերությունը փոքր էր. 2012 թ. աշխատանքի վարձատրության տարբերությունը սահմանափակվում էր 1.7 տոկոսային կետով, կանանց գործազրկության մակարդակը 18.2 տոկոս էր, իսկ տղամարդկանցը՝ 16.5 տոկոս: Թվերը ցույց տվեցին, որ աշխատունակ տարիքի արական սեռի բնակչության թիվն ավելի փոքր էր, քան կանանցը (համապատասխանաբար 1 մլն և 1.2 մլն), մի իրավիճակ, որը հիմնականում բացատրվում է տղամարդկանց գերակշռող արտագաղթով: Սակայն, զբաղվածություն ունեցել են ավելի շատ տղամարդիկ, քան կանայք (605,000 տղամարդ, 567.800 կին):

Մասնատվածության մեկ այլ կարևոր տարր էր բնակության վայրը: Տվյալները ցույց են տալիս, որ գործազրկությունը Հայաստանում հիմնականում քաղաքային երևույթ էր, և աշխատուժի մեջ մասնակցության մակարդակը զգալիորեն ցածր էր քաղաքային բնակավայրերում (57.1 տոկոս), գյուղական

բնակավայրերի համեմատ (73.3 տոկոս): Միտումը նմանատիպ էր զբաղվածության հարաբերակցության համար, ընդ որում գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակը 69.4 տոկոս էր, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 42.5 տոկոս։ Քաղաքային բնակավայրերում աշխատուժի մեջ մասնակցության ավելի ցածր և գործազրկության ավելի բարձր մակարդակը կարող է բացատրվել քաղաքային բնակավայրերում կրթության մեջ մասնակցության ավելի մեծ միտումով (ինչն իջեցնում էր մասնակցության մակարդակը) և «ժամանակակից» ու հիմնականում քաղաքային ոլորտներում աշխատանքների համար ավելի երկար հերթերով։ Ավելին, 2011թ. տվյալները (Հավելվածի Աղյուսակ Ա.2) ցույց են տալիս, որ աշխատաշուկայի ցուցանիշների մեջ գենդերային տարբերությունները շատ ավելի ցայտուն էին քաղաքային, քան գյուղական բնակավայրերում, ընդ որում քաղաքային բնակավայրերում աշխատուժի մեջ տղամարդկանց-կանանց մասնակցության մակարդակների տարբերությունը և զբաղվածության հարաբերակցությունը կազմում էր 20 տոկոսային կետ։ Գյուղական բնակավայրերում աշխատաշուկայի վիճակը կանանց և տղամարդկանց համար ավելի համադրելի էր։

Դառնալով կրթությանը, Աղյուսակ 2.1-ը ցույց է տալիս Հայաստանում աշխատունակ տարիքի բնակչության (15-75 տարեկան) և աշխատող ու գործազուրկ կանանց և տղամարդկանց բաշխումն՝ ըստ նրանց կրթության մակարդակի։[4] Թվերը հաստատում են Հայաստանի բնակչության կրթության բարձր մակարդակը, ինչպես հաճախ լինում է անցումային տնտեսությամբ երկրներում։ Աշխատունակ տարիքի կանայք մի փոքր ավելի լավ էին կրթված, քան տղամարդիկ։ Կանանց 89.4 տոկոսն ուներ առնվազն միջնակարգ կրթություն, տղամարդկանց 86.3 տոկոսի համեմատ։ Բացի այդ, բարձրագույն կրթության դիպլոմ ստացած կանանց տոկոսը մի փոքր ավելի բարձր էր, քան տղամարդկանցը (համապատասխանաբար 21.7 և 20.5 տոկոսը): Ուշագրավ է, որ համամասնորեն ավելի շատ կանայք, քան տղամարդիկ (համապատասխանաբար 27.1 տոկոս և 21.8 տոկոս) ունեին միջին մասնագիտական կրթություն (միջնակարգ և հետմիջնակարգ կրթությունները միասին):

[4] Սույն զեկույցում օգտագործված կրթության մակարդակների պատկերի համար տես Հավելված II.

Պատկեր 2.1 Աշխատունակ տարիքի զբաղված և գործազուրկ բնակչության բաշխումն ըստ կրթության մակարդակի, 2012թ.



Ծանոթություն. Աշխատունակ տարիքի բնակչությունը ներառում է 15–75 տարեկաններին: Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն,/ 2012թ.

Ինչ վերաբերում է աշխատունակ տարիքի զբաղված բնակչությանը, զբաղված կանանց 39.0 տոկոսն ուներ միջնակարգ կրթություն, 27.8 տոկոսն ուներ միջին մասնագիտական կրթություն (երկու կրթությունները համակցված) և 26.4 տոկոսն ուներ բարձրագույն կրթություն: Աշխատող տղամարդկանց 43.3 տոկոսն ուներ միջնակարգ կրթություն, 23.9 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն (երկու կրթությունները համակցված) և 24.0 տոկոսն ուներ համալսարանական կրթություն:

Գործազուրկ բնակչության շրջանում կանայք ավելի կամ պակաս բաժանվում էին երեք հիմնական խմբերի. գործազուրկ կանանց 33.1 տոկոսն ուներ միջնակարգ կրթություն, 31.3 տոկոսը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն և 29.3 տոկոսը՝ բարձրագույն կրթություն: Կրթված կանայք (այսինքն բարձրագույն կամ հետմիջնակարգ միջին մասնագիտական կրթությամբ կանայք), հետևաբար, կազմում էին գործազուրկ կանանց ամենամեծ մասը: Մյուս կողմից, գործազուրկ տղամարդկանց ամենամեծ մասը (44,1 տոկոսը) ուներ միջնակարգ կրթություն, իսկ 23.8 տոկոսը՝ բարձրագույն կրթություն, 23.0 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն:

Կարևոր է պարզաբանել Պատկեր 2.1-ում բերված ցուցանիշների մեկնաբանությունը: Պատկերն ապահովում է աշխատուժի առանձնահատկությունները և տղամարդկանց և կանանց ցուցանիշների պատկերը, որը, սակայն, նախատեսված չէ գնահատելու, թե արդյոք զբաղվածությունը համապատասխանում է կրթության մակարդակին: Օրինակ, այն փաստը, որ աշխատող կանանց 26.4 տոկոսն ուներ բարձրագույն

կրթություն, չի ենթադրում, որ նրանց զբաղվածությունը նույնպես այդ մասնագիտացման մակարդակին էր համապատասխանում, այլ ցույց է տալիս, որ կրթության բարձր մակարդակը կանանց աշխատանք գտնելու առավելություն է տվել: Նույնիսկ աշխատունակ տարիքի բնակչության համապատասխան մասի համեմատ բարձրագույն կրթությամբ գործազուրկ կանանց մեծ տոկոսը (29.3 տոկոս) ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Դրական կողմն այն է, որ բարձրագույն կրթությամբ կանայք աշխատուժի մեջ մնալու ավելի մեծ կարողություն ունեին, նույնիսկ, երբ նրանք գործազուրկ էին: Հնարավոր է, որ նրանք ձգտում էին օգուտ քաղել կրթության մեջ իրենց ներդրումներից, և, հետևաբար, ավելի քիչ հավանական է, որ հուսալքվում էին աշխատանք փնտրելու ընթացքում, կամ՝ նրանք ավելի տեղյակ էին աշխատանք փնտրելու ռազմավարություններին: Ամեն դեպքում, նրանք ավելի քիչ հավանականությամբ կմիանային պասիվների շարքին: Բացասական կողմն այն է, որ դա կարող է նշանակել, որ նրանք միտված էին ստանալ սահմանափակ աշխատանքի հեռանկարով մասնագիտական կրթություն, կամ՝ նրանք դժվարությունների կամ խտրականության են բախվել ակնկալվող մակարդակի աշխատանք գտնելու ճանապարհին:

Աղյուսակ 2.3-ի տվյալները ցույց են տալիս, որ տարիքը մասնատվածության ևս մեկ կարևոր տարր է, հաստատելով, որ հարցված երիտասարդները խիստ անբարենպաստ վիճակում են գտնվում Հայաստանի աշխատաշուկայում: 2012թ. ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները կարևոր տարբերություններ են բացահայտում երիտասարդների և մեծահասակների գործազրկության ցուցանիշների, երիտասարդ կանանց և երիտասարդ տղամարդկանց, և, կրկին, քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Երիտասարդ տղամարդկանց գործազրկության ցուցանիշները 15-19, 20-24 և 25-29 տարիքային խմբերի համար համապատասխանաբար կազմում էին 29.8 տոկոս, 31.7 տոկոսը, և 21.0 տոկոս: Երիտասարդ կանանց 15-19, 20-24 և 25-29 տարիքային խմբերի համար գործազրկության մակարդակը հասնում էր համապատասխանաբար 48.0 տոկոսի, 39.0 տոկոսի և 26.0 տոկոսի: Համեմատության համար նշենք, որ գործազրկության մակարդակը 30-75 տարեկան մեծահասակների համար համապատասխանաբար 12.9 տոկոս և 14.2 տոկոս էր կանանց և տղամարդկանց համար: Հետևաբար, երիտասարդների գործազրկությունը էական մարտահրավեր է Հայաստանում, ինչը նշանակում է, որ ԱԴԱ հետազոտությունն արվել է ճիշտ ժամանակին՝ խնդրո առարկայի վրա լրացուցիչ լույս սփռելու և այս խնդիրը լուծելու հարցում քաղաքականություն մշակողներին աջակցելու համար:

Աղյուսակ 2.3 Գործազրկության ցուցանիշներն ըստ տարիքային խմբի, սեռի և բնակավայրի, 2012թ. (տոկոս)

Տարիքային խումբ	ընդհանուր	տղամարդ	կին	քաղաքային	գյուղական
ընդհանուր	17.3	16.5	18.2	25.5	5.3
15–19	37.8	29.8	48.0	75.7	15.5
20–24	34.9	31.7	39.0	47.2	14.2
25–29	23.1	21.0	26.0	27.5	14.1
30–75	13.6	12.9	14.2	21.2	2.8

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն, 2012թ.

Մեկ այլ, առանձնահատուկ մարտահրավեր է Հայաստանում ստվերային տնտեսության չափը: Դա հատկապես տարածված է գյուղական բնակավայրերում, որտեղ 2010թ.-ին այն գնահատվում էր 82.1 տոկոս զբաղվածություն՝ քաղաքային բնակավայրերում ընդամենը 24,5 տոկոս զբաղվածության համեմատ: Գյուղատնտեսական աշխատանքները հատկապես բացասական ազդեցություն էին կրում համապատասխան կարգավորման բացակայության պատճառով: Գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության մասնաբաժինը հասնում էր 98,6 տոկոսի (ԱՄԿ, 2012թ.): Ինչ վերաբերում է ոչ գյուղատնտեսական ոլորտի աշխատանքներին, ոչ ֆորմալ զբաղվածությունը 2010 թ.-ին առավել տարածված էր շինարարության ոլորտում (ոլորտում ամբողջ զբաղվածության 34.2 տոկոսը), մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում (26,9 տոկոս) և սննդի վերամշակման ոլորտում (11,8 տոկոս):

Չպաշտպանված զբաղվածությունը[5] նույնպես աճել է 2000-ականներին, ընդ որում չպաշտպանված զբաղվածություն ունեին տղամարդկանց մոտ 35 տոկոսը և կանանց 48 տոկոսը: Չպաշտպանված աշխատանքում և ոչ ֆորմալ հատվածում աշխատող մարդիկ ենթարկվում են աղքատության և մարգինալացման ավելի բարձր ռիսկի, քանի որ նրանք չունեն աշխատանքի անվտանգություն, եկամուտներ և սոցիալական ապահովության համակարգերի մատչելիություն (ԱՄԿ, 2012բ):

Ներդիր 1. Երիտասարդության սահմանումը
Մինչ շատ համատեքստերում երիտասարդը սահմանվում է որպես 15 –ից 24 տարեկան անձ, ԱԴԱ հետազոտության և առնչվող զեկույցների նպատակով վերին տարիքային սահմանը հասցվել է 29 տարեկանի: Սա հաշվի է առնում այն փաստը, որ որոշ երիտասարդներ դեռևս շարունակում են կրթությունը 24 տարեկանից հետո, և թույլ է տալիս ավելի շատ տեղեկություններ ստանալ երիտասարդների զբաղվածության հետկրթական փորձառության վերաբերյալ:

2.3 Անցում դպրոցից աշխատաշուկա հետազոտության նպատակներն ու մեթոդաբանությունը

Աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության ներկա սահմանափակումները հանգեցրել են մի իրավիճակի, որում այն հարցին, թե ինչու են այսօր երիտասարդների շրջանում՝ դպրոցից աշխատանքի անցումներն այսօր երկար ու բարդ գործընթաց, դեռևս պետք է բավարար պատասխաններ գտնել: Միևնույն ժամանակ, աշխարհի շատ երկրներում երիտասարդների անցման բարելավման նպատակը քաղաքականության առաջնահերթություն է: Ի պատասխան տեղեկատվության այս ակնհայտ բացի, ԱՄԿ-ն մշակել է ԱԴԱ հետազոտությունը՝ տնային տնտեսությունների շրջանում անցկացվող մանրամասն մի հետազոտություն, որն ընդգրկում է 15–29 տարեկան երիտասարդներին (ներդիր 1): Հետազոտությունը կիրառվել է ազգային մակարդակում՝ աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի, տնտեսական գործունեության պատմության և երիտասարդների ընկալումների և ձգտումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

[5] ԱՄԿ-ը չպաշտպանված զբաղվածությունը սահմանում է որպես ինքնազբաղված աշխատողների և ընտանեկան ձեռնարկությունների չվճարվող աշխատողների գումար:

Սույն հետազոտությունը նպատակ ունի տեղեկացնել Հայաստանում քաղաքականություն մշակողներին, ովքեր առնչվում են աշխատաշուկայում երիտասարդների լիարժեք և արդյունավետ ինտեգրման հարցերին: ԱԴԱ հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԱՎԾ կողմից, որն ավարտել է դաշտային աշխատանքները 2012թ. սեպտեմբերին: Հետազոտությունը ֆինանսավորվել է ԱՄԿ Երիտասարդների զբաղվածության ծրագրի և Մասթըրքարդ հիմնադրամի միջև «Աշխատանք երիտասարդների համար» գործընկերության կողմից (Ներդիր 2): Գործընկերությունն աջակցում է ԱԴԱ հետազոտության իրականացմանը 28 թիրախային երկրներում, իսկ հետազոտության առաջին շրջափուլի տվյալները հասանելի են եղել 2013 թ. ընթացքում: ԱԴԱ հետազոտության երկրորդ շրջափուլը տեղի կունենա 2014-15թթ. 28 երկրներից յուրաքանչյուրում, այդ թվում, Հայաստանում:

Ներդիր 2. «Աշխատանք երիտասարդների համար» ԱՄԿ և Մասթըրքարդ Հիմնադրամի ծրագիր

«Աշխատանք երիտասարդների համար» (W4Y) ծրագիրը գործընկերություն է ԱՄԿ երիտասարդների զբաղվածության ծրագրի և Մասթըրքարդ հիմնադրամի միջև: Ծրագրի բյուջեն կազմում է 14.6 մլն դոլար ԱՄՆ դոլար, և այն կշարունակվի 5 տարի՝ մինչև 2016թ. կեսերը: Ծրագրի նպատակն է «նպաստել երիտասարդ տղամարդկանց և կանանց համար արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ստեղծմանը՝ գիտելիքների և գործողությունների միջոցով»: Գործընկերության անմիջական նպատակն է զարգացող երկրներում երիտասարդներին բնորոշ ավելի շատ և ավելի լավ տեղեկատվություն ապահովել աշխատաշուկայի վերաբերյալ, կենտրոնանալով, մասնավորապես, աշխատաշուկա անցման ուղիների վրա: Ակնկալվում է, որ ծրագրի 28 թիրախային երկրների կառավարություններն ու սոցիալական գործընկերներն ավելի լավ պատրաստված կլինեն նախագծելու արդյունավետ քաղաքականություն և ծրագրային նախաձեռնություններ, եթե մանրամասն տեղեկատվություն ունենան հետևյալի վերաբերյալ.

- Ի՞նչ են ակնկալում երիտասարդները անցման ճանապարհների և աշխատանքի որակի առումով,
- Ի՞նչ են ակնկալում գործատուները երիտասարդ դիմորդներից,
- Ի՞նչ խնդիրներ են խանգարում երկու՝ առաջարկի և պահանջարկի կողմերին, միմյանց համապատասխանելու համար,
- Ինչպիսի՞ քաղաքականություններ և ծրագրեր կարող են իրական ազդեցություն ունենալ:

<u>W4Y երկրներ</u>

Ասիայի և Խաղաղ Օվկիանոսյան. Բանգլադեշ, Կամբոջա, Նեպալ, Սամոա, Վիետնամ

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներ. Հայաստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, նախկին Հարավսլավիայի՝ Մակեդոնիայի Հանրապետություն, Ուկրաինա

Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներ. Բրազիլիա, Կոլումբիա, Սալվադոր, Ջամայկա, Պերու

Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներ. Եգիպտոս, Հորդանան, Պաղեստինի օկուպացված տարածքներ, Թունիս

Աֆրիկայի. Բենին, Լիբերիա, Մադագասկար, Մալավի, Տանզանիայի Միացյալ Հանրապետություն, Տոգո, Ուգանդա, Զամբիա

2.3.1 Հարցաթերթի մշակումը և ընտրանքի նախագծումը

ԱՄԿ ստանդարտ ԱԴԱ հետազոտության հարցաթերթը հարմարեցվել է Հայաստանի համատեքստին, ԱՄԿ և ՀՀ ԱՎԾ միջև խորհրդակցական գործընթացի հիման վրա: Հարցաթերթը մշակվել և գործարկվել է հայերեն լեզվով:[6]

ԱԴԱ հետազոտության ընտրանքի շրջանակը նախագծվել էր, օգտագործելով երկրում առկա մասնավոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը մշակվել էր 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա: Տնային տնտեսությունների հնացած ցուցակը որոշ խնդիրներ առաջացրեց ՀՀ ԱՎԾ համար, որն ստիպված էր ճշգրտումներ կատարել, հաշվային տեղամասերում (ՀՏ) ավելացնելով տնային տնտեսություններ, երբ նախկին ցուցակն այլևս չէր պարունակում բավարար քանակությամբ տնային տնտեսություններ, որտեղ առկա էին 15-29 տարեկան անձինք: Դաշտային աշխատանքը նույնպես մի փոքր ձգձգվեց, քանի որ անհրաժեշտ էր այցելել նույն ընտանիքը մի քանի անգամ՝ երիտասարդներին տանը գտնելու համար:

ԱԴԱ հետազոտության ընտրանքի շրջանակը բաժանված էր 48 շերտերի, ներառյալ, Երևան քաղաքի 12 համայնքները: Բոլոր մարզերի համայնքները խմբավորվել էին ըստ երեք դասերի՝ 15000 կամ ավելի բնակչություն ունեցող մեծ քաղաքներ, 15.000-ից պակաս բնակչություն ունեցող փոքր քաղաքներ և գյուղեր: Մեծ քաղաքները ձևավորում էին 16 խմբեր (շերտեր), իսկ փոքր քաղաքներն ու գյուղերը՝ յուրաքանչյուրը 10-ական շերտ: Կազմվել է պատահական երկաստիճան ընտրանք՝ շերտավորված ըստ մարզերի և Երևանի: Բոլոր մարզերը և Երևանը, ինչպես նաև քաղաքային և գյուղական համայնքները, ընդգրկվել էին ընտրանքում, ըստ երկրի տնային տնտեսությունների ընդհանուր թվի մեջ իրենց մշտական տնային տնտեսությունների բաժնեմասի: Օգտագործելով չափին համամասնական հավանական ընտրանքի (PPS) մեթոդը, ընտրվել են 165 ՀՏ-եր: Երկրորդ փուլում յուրաքանչյուր ՀՏ-ում պատահականորեն ընտրվել են 20 տնային տնտեսություններ: Ընտրանքի մեթոդաբանության ավելի մանրամասն նկարագրությունը տես IV Հավելվածում: Վերջնական ընտրանքի չափը կազմել է 3,216 երիտասարդ, որը փոքր - ինչ ավելի էր, քան ծրագրված 3000-ը:

3. Երիտասարդության բնութագրումն ընտրանքային հետազոտության մեջ

Այս բաժնում ներկայացված են հարցված երիտասարդների առանձին բնութագրերի, նրանց կրթության մակարդակի, ընթացիկ գործունեության կարգավիճակի և ձգտումների ու կյանքի նպատակների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև երիտասարդների մանրամասն բնութագրերն ըստ հիմնական գործունեության կարգավիճակի (զբաղված, գործազուրկ, կամ աշխատաշուկայից դուրս):

[6] Վերջնական հարցաթերթն ու տվյալները մատչելի են հետևյալ հասցեում՝ http://www.ilo.org/employment/areas/WCMS_234860/lang--en/index.htm.

3.1 Երիտասարդության անհատական բնութագրերը

Աղյուսակ 3.1-ում ներկայացված են հարցված երիտասարդների ընտրված սոցիալ-տնտեսական բնութագրերի վերաբերյալ տվյալները: Բնութագրերից մեկը՝ երիտասարդ տղամարդկանց և կանանց հարաբերական ժողովրդագրական ցուցանիշը շատ զարմանալի է: Կանանց թիվը գրեթե 92,000-ով ավելի էր, քան տղամարդկանցը՝ 55.8 տոկոս երիտասարդ կին՝ 44.2 տոկոս երիտասարդ տղամարդկանց համեմատ: Այս փաստն ուսումնասիրված է ստորև՝ շարժունության վերաբերյալ քննարկման մեջ:

Աղյուսակ 3.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի, բնակության վայրի, ամուսանական կարգավիճակի և սեռի

բնութագիր	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ընդհանուր	784 355	100.0	346 309	44.2	438 047	55.8
Տարիքային խումբ						
15–19	271 884	34.7	124 174	35.9	147 711	33.7
20–24	280 851	35.8	120 682	34.8	160 169	36.6
25–29	231 620	29.5	101 453	29.3	130 167	29.7
Ըստ բնակության վայրի						
քաղաքային	627 357	80.0	268 190	77.4	359 167	82.0
գյուղական	156 998	20.0	78 118	22.6	78 880	18.0
Ամուսնական կարգավիճակ						
ամուսնացած (ներառյալ ամուսնալուծված և այրիացած)	198 959	25.4	55 373	16.0	143 586	32.8
ամուրի (ներառյալ ամուսնանալու պատրաստվողներ)	585 396	74.6	290 936	84.0	294 460	67.2
Երեխաներ ունեցող	154 886	19.7	39 654	11.5	115 232	26.3
Ամուսնության միջին տարիքը	21.8		23.6		21.1	

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Երիտասարդ բնակչության բաշխվածությունը բավական հավասարաչափ էր բոլոր տարիքային խմբերում (34.7 տոկոսը 15-19, 35.8 տոկոսը՝ 20-24 և 29.5 տոկոսը՝ 25-29 տարեկան էին): Երիտասարդների թիվը շատ ավելի մեծ էր քաղաքային բնակավայրերում (80.0 տոկոս՝ գյուղական բնակավայրերում 20.0 տոկոսի համեմատ): Գյուղական բնակավայրերում ապրող երիտասարդ տղամարդկանց թիվը (22,6 տոկոս) մի փոքր գերազանցում էր երիտասարդ կանանց թվին՝ 18.0 տոկոս:

Հայ երիտասարդների ամուսնության միջին տարիքը 21.8 է, որը երիտասարդ տղամարդկանց շրջանում մի փոքր ավելի բարձր է (23.6 տարեկան), քան երիտասարդ կանանց շրջանում (21,1 տարեկան): Երիտասարդների մեկ քառորդը (25.4 տոկոս) ամուսնացած էր (այդ թվում, ամուսնալուծվածները կամ այրիացածները), իսկ մնացած 74.6 տոկոսն ամուրի էր: Երիտասարդների գրեթե մեկ հինգերորդը (19.7 տոկոս) երեխաներ ուներ: Ամուսնացած երիտասարդ կանանց թիվը կրկնակի գերազանցում էր երիտասարդ տղամարդկանց թվին (համապատասխանաբար 32.8 և 16.0 տոկոս), բացի այդ, երեխաներ ունեցող երիտասարդ կանանց թիվը նույնպես ավելի մեծ էր (26,3 տոկոս), քան երիտասարդ տղամարդկանցը (11.5 տոկոս):

Առողջություն և հաշմանդամություն

ԱԴԱ հետազոտությունը տեղեկություններ է հավաքում երիտասարդների առողջության վերաբերյալ՝ տեսնելու, լսելու, զբոսնելու, հիշելու, լվացվելու և հագնվելու, և հաղորդակցվելու առումներով: Հայ երիտասարդների պատասխանները բերված են Հավելվածի Աղյուսակ 4-ում: Դրանք ցույց են տալիս, որ հարցված հայ երիտասարդներն, ընդհանուր առմամբ, լավ առողջություն ունեն. ընդհանուր հարցվածների 98.0 տոկոսը պատասխանել են, որ ընդհանրապես դժվարություններ չունեն: Ավելի մանրամասն տվյալները բացահայտում են, որ պատասխաններում գրանցված խնդիրների մեջ տեսողությունը առավել հաճախ նշվածն է, սակայն, սահմանափակ մակարդակներով, և ավելի շատ՝ քաղաքային (8.9 տոկոս), քան գյուղական բնակավայրերում (1.6 տոկոս):

Շարժունություն

Շարժունությունը Հայաստանի ներսում բարդ երևույթ է: Մի կողմից, ինչպես աշխատաշուկայի, այնպես էլ բնակչության մեծ աշխարհագրական մասնատվածությունը, կարծես, հուշում է հաստատուն բնակչության մասին: Շարժունության վերաբերյալ ԱԴԱ հետազոտության տվյալները հակված են հաստատելու այս վարկածը: Հարցման պատասխանները ցույց են տվել երիտասարդների շրջանում սահմանափակ շարժունություն, հատկապես զբաղվածության նպատակով (Աղյուսակ 3.2): Երիտասարդների մեկ հինգերորդից պակասն մասն է (14.5 տոկոս) տեղափոխվել իրենց բուն բնակության վայրից: Այս ցուցանիշը մի փոքր ավելի բարձր էր երիտասարդ կանանց շրջանում (18,3 տոկոս), որոնց մեծ մասը (43,8 տոկոս) թողել էին իրենց նախկին բնակության վայրը՝ ամուսնանալու պատճառով: Երիտասարդ տղամարդկանց միայն 9.9 տոկոսն էր տեղափոխվել, հիմնականում գյուղական բնակավայրերում (32.1 տոկոս), սակայն նաև Հայաստանի սահմաններից դուրս (24.1 տոկոսը՝ այլ ԱՊՀ երկրներից և 10.1 տոկոսը՝ ոչ-ԱՊՀ երկրներից): Ավելի մեծ թվով երիտասարդ կանայք էին տեղափոխվել գյուղական վայրերից, կամ փոքր քաղաքներից, իսկ երիտասարդ տղամարդկանց 17.1 տոկոսը տեղափոխվել էր նախկին բնակության վայրից՝ աշխատանք գտնելու նպատակով: Հաշվի առնելով քաղաքային գործազրկության բարձր ցուցանիշները, հնարավոր է, որ աշխատանք գտնելու նպատակով քաղաքներ տեղափոխվելու համար խթաններ չեն եղել:

Սակայն, տեղաշարժը Հայաստանում նաև մեծապես միջազգային երևույթ է: Եվրոպական հանձնաժողովի կողմից վերջերս իրականացված ուսումնասիրությունը որոշակի լույս է սփռում Հայաստանից արտագաղթի պատճառների վրա (Մանասյան և Պողոսյան, 2012թ.): Չնայած նրան, որ զեկույցը չի կենտրոնանում կոնկրետ երիտասարդության վրա, այն նշում է, որ արտագաղթողների մինչև 90 տոկոսը 20-ից 54 տարեկան են: Պատմականորեն, և, մասնավորապես, անկախությունից ի վեր միգրացիոն հոսքերն այնքան էական են եղել, որ հայկական սփյուռքն այժմ գնահատվում է 8-ից 9 միլիոն մարդ, հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում և Միացյալ Նահանգներում: Քանի որ Հայաստանում երիտասարդների համար առկա զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են, միջազգային արտագաղթը շատ գրավիչ տարբերակ է այն մարդկանց համար, ովքեր

աշխատանք գտնելու հույս ունեն, ինչն ավելի է հեշտացվում ընդլայնված միջազգային հայկական ցանցերի կողմից:

Աղյուսակ 3.2 Ծագման բնակավայրից հեռացած երիտասարդների բաշխումն ըստ բնակավայրի և բնակավայրից հեռանալու պատճառների (տոկոս)

Ապրելու վայրը և մեկնելու պատճառը	ընդհանուր	տղամարդ	կին
Ծննդավայրը լքած երիտասարդներ	**14.5**	**9.9**	**18.3**
ապրելավայր			
գյուղական	38.6	32.1	41.4
Փոքր քաղաքներ/ավաններ	26.3	17.5	30.0
Մեծ քաղաքներ/մայրաքաղաք	15.1	16.2	14.6
ԱՊՀ երկրներ	13.6	24.1	9.2
Այլ երկրներ	6.4	10.1	4.7
Մեկնելու պատճառ			
Կրթություն կամ վերապատրաստում	21.9	29.4	18.8
Աշխատանք կամ այլ զբաղվածության հետ կապված	7.3	17.1	3.1
ամուսնություն	31.6	3.1	43.8
Այլ պատճառներ	39.2	50.4	34.3
Աշխատանքի պատճառով մեկնած չաշխատողներ	**1.7**	**3.5**	**0.1**

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

ԱԴԱ հետազոտությունը նախատեսված չէ արտագաղթի հարցով ուղղակիորեն զբաղվելու համար, հիմնականում այն պատճառով, որ այն ուղղված է մշտական բնակիչ հանդիսացող երիտասարդներին, ովքեր հնարավորություն չեն ունեցել լքել երկիրը աշխատանքի համար և վերադառնալ: Սակայն, անուղղակիորեն, այն ցույց է տալիս այս երևույթի չափը: Պատկեր 3.1-ը ցույց է տալիս Հայաստանի երիտասարդ բնակչության շրջանում կին-տղամարդ հարաբերակցությունը: 15-29 տարեկան երիտասարդ բնակչության թվում յուրաքանչյուր 100 տղամարդու հաշվով կանանց թիվը 126.5 էր: Սեռերի թվի միջև անհամապատասխանությունն ամենամեծն էր 20-24 տարիքային խմբում, որտեղ յուրաքանչյուր 100 տղամարդու հաշվով կար 132.7 կին: Այս տվյալը համապատասխանում է արտագաղթող տղամարդկանց մեծ թվին, ինչը նույնպես կարող է օգնել բացատրելու այն երիտասարդների փոքր թիվը, ովքեր տեղաշարժվել են Հայաստանի ներսում, ինչպես ներկայացված է Պատկեր 3.1-ում.

Պատկեր 3.1 Երիտասարդ կանանց թվի հարաբերակցությունը երիտասարդ տղամարդկանց թվին ըստ տարիքային խմբերի



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Ֆինանսական ծառայությունների ծածկույթը երիտասարդների շրջանում

Աղյուսակ 3.3-ը ցույց է տալիս, որ Հայաստանում երիտասարդների մի փոքր մասն է օգտագործում պաշտոնական ֆինանսական ծառայություններ: Երիտասարդների միայն 4.2 տոկոսն է բիզնեսի կամ սպառման վարկերի պայմանագիր կնքել: Երիտասարդների կողմից օգտագործված առավել հաճախ վկայակոչված ֆինանսական ծառայությունը դրամական փոխանցումների համար մուտք ունենալն էր (8.3 տոկոս): Զարմանալի չէ, որ անկանխատեսելի ծախսեր անելու կարիք լինելու դեպքում, ինչպես ցույց է տվել հարցումը, երիտասարդները նախ դիմում են իրենց ընտանիքներին (76.3 տոկոս), ապավինում են իրենց խնայողություններին (8.6 տոկոս), կամ համապատասխանաբար փոխում են իրենց ծախսեր անելու վարքագիծը (8.3 տոկոս): Խնդիրը լուծելու բոլոր այլ մեխանիզմները նշող պատասխանները (օրինակ, վարկեր, միկրո-ապահովագրություն, գործազրկության նպաստներ, ակտիվների վաճառք) կազմել են ընդհանուրի 15 տոկոսից պակաս մասը:

Ֆինանսական կարգավիճակը

Քաղաքային բնակավայրերի երիտասարդության ավելի քան կեսը (51.0 տոկոս), և գյուղական բնակավայրերի երիտասարդության 55.1 տոկոսը պատասխանել են, որ իրենց տնային տնտեսությունները միջին եկամուտներ ունեն (Պատկեր 3.2): Ինչպես և կարելի էր ակնկալել, եկամուտներն ավելի կենտրոնացված էին քաղաքային բնակավայրերում, որտեղ երիտասարդների 15.6 և 9.5 տոկոսը իրենց տնային տնտեսությունները գնահատել են, որպես համապատասխանաբար կա՛մ փոքր-ինչ բարեկեցիկ, կա՛մ բարեկեցիկ: Գյուղական բնակավայրերում այս ցուցանիշները կազմում են 10.9 և 1.8 տոկոս: Մյուս կողմից, աղքատությունն ավելի տարածված էր գյուղական բնակավայրերում, որտեղ աղքատ և ինչ - որ չափով աղքատ տնային տնտեսությունների համակցված ցուցանիշը կազմում էր 32.1 տոկոս, քաղաքային բնակավայրերում 23.8 տոկոսի համեմատ: Քաղաքային բնակավայրերում առավել բարեկեցիկ լինելու հանգամանքը կարող է բացատրելի դարձնել գյուղերի և քաղաքների միջև բնակչության մասնատվածությունը, նույնիսկ եթե զբաղվածության հնարավորությունները քաղաքներում շատ ավելի վատ են, քան գյուղերում:

Աղյուսակ 3.3 Ֆինանսական ծառայությունների ծածկույթը երիտասարդների շրջանում (տոկոս)

Ֆինանսական ծառայություն և միջոցներ	%
Ֆինանսական ծառայություններից օգտվել են	
Ոչ մի	74.6
Բիզնես վարկ	0.4
Սպառողական վարկ	3.8
Խնայողական հաշիվ	0.7
ապահովագրություն	0.1
Դրամական փոխանցումներ	8.3
այլ	14.8
չնախատեսված ծախսերը ծածկելու միջոցներ	
Ծածկելու հարկ չկա	12.3
խնայողություններ	8.6
վարկեր	2.7
Միկրո-ապահովագրություն	0.1
Գործազրկության նպաստ, թոշակներ և այլ սոց. սխեմաներ	3.7
օգնություններ	8.3
Լրացուցիչ եկամուտ	1.2
Ունեցվածքի վաճառք	0.7
ընտանիք	76.3
ընկերներ	3.3
այլ	0.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Պատկեր 3.2 Երիտասարդների բաշխումն ըստ տնային տնտեսությունների եկամտի մակարդակի և բնակավայրերի



Ծանոթություն. Տնային տնտեսությունների եկամուտների դասերը հիմնված են երիտասարդ պատասխանողների ինքնագնահատման վրա։
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

3.2 Կրթության մակարդակը

3.2.1 Կրթության մատչելիությունը

Համընդհանուր կրթությունը լավ հաստատված է Հայաստանում. երիտասարդ բնակչության շրջանում չնչին՝ 0.3 տոկոսն է հաղորդել, որ երբեք չի

հաճախել դպրոց (Աղյուսակ 3.4): Հակառակ սպասումներին, դպրոց չհաճախողները քաղաքային բնակավայրերում էին: 15-29 տարեկան երիտասարդների մեծամասնությունն արդեն ավարտել էր ուսումը (52,5 տոկոս), մինչդեռ 45.3 տոկոսը դեռևս դպրոցում էին: Մի չնչին մասը (1.9 տոկոս) դպրոցը թողել էր մինչև ավարտելը: Սակայն, թվերն այնքան փոքր էին, որ վիճակագրական վերլուծությունը հուսալի չէր լինի: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ ուսումն ընդհատած երիտասարդների միջին բարձր տարիքը՝ տղամարդկանց համար՝ 21.7 տարեկան, իսկ կանանց համար՝ 23.7 տարեկան, հուշում է, որ նույնիսկ ուսումը վաղ թողածները բավականաչափ լավ էին կրթված, և ուսումից հրաժարվել էին ավելի բարձր մակարդակներում (Հավելվածի Աղյուսակ Ա.5):

Աղյուսակ 3.4 Երիտասարդների բաշխումն ըստ կրթական կարգավիճակի, սեռի և բնակավայրի (տոկոս)

Կրթական կարգավիճակ	ընդհանուրը	տղամարդ	կին	գյուղական	քաղաքային
Դպրոց չի գնացել	0.3	0.5	0.2	0.0	0.4
Դպրոցը թողել է մինչև ավարտելը	1.9	2.4	1.4	0.4	2.2
Հաճախում է դպրոց	45.3	48.2	43.0	39.3	46.8
Դպրոցն ավարտել է	52.5	48.8	55.4	60.4	50.6

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

3.2.2 Ավարտված կրթություն

Աղյուսակ 3.5-ը մանրամասն տեղեկատվություն է ներկայացնում երիտասարդների կրթության մակարդակի վերաբերյալ, ըստ բնակության վայրի և սեռի: Աղյուսակը հաստատում է երկրում կրթության բարձր մակարդակը: Երիտասարդների միայն 0.8 տոկոսն ուներ նախադպրոցական և ավելի ցածր կրթություն, իսկ 33,7 տոկոսն ստացել էր բարձրագույն կրթություն: Աղյուսակը նաև ցույց է տալիս, որ գյուղական բնակավայրերի երիտասարդներն իրենց ուսման մեջ այնքան առաջ չեն գնացել, որքան քաղաքային բնակավայրերի երիտասարդները: Տղամարդիկ և կանայք գյուղական բնակավայրերում ունեին համադրելի կրթության մակարդակ՝ հիմնականում միջնակարգ կրթություն (տղամարդկանց 78.3 տոկոսը և կանանց 79.7 տոկոսը): Բարձրագույն կրթություն ունեցող կին երիտասարդների թիվը մի փոքր ավելի մեծ էր (կանանց 16.0 տոկոսը՝ տղամարդկանց 13.3 տոկոսի համեմատ): Սակայն, միջին մասնագիտական կրթություն ունեցող տղամարդկանց թիվն ավելի մեծ էր (միջին մասնագիտական կրթության բոլոր տեսակների համար՝ տղամարդկանց 8.2 տոկոսը, կանանց 4.4 տոկոսի համեմատ): Նմանապես, քաղաքային բնակավայրերում, ավելի շատ տղամարդիկ էին հակված ընտրելու մասնագիտական կրթություն, քան կանայք (16.3 տոկոս և 7.3 տոկոս, համապատասխանաբար, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթությունը համակցված): Քաղաքային բնակավայրերում բարձրագույն կրթություն ունեցող կին երիտասարդների թիվը փոքր ավելի մեծ էր, քան տղամարդկանցը (կանանց 427 տոկոսը՝ տղամարդկանց 33.7 տոկոսի համեմատ): Միջին մասնագիտական կրթություն ստացող երիտասարդների փոքր թիվը հնարավորություն է տալիս ապագա ներդրումներ անել և զարգացնել միջին մասնագիտական կրթության ոլորտը, որպես երիտասարդներին աշխատաշուկայի հետ ավելի սերտորեն կապող միջոց:

Աղյուսակ 3.5 Երիտասարդների բաշխումն ըստ կրթության մակարդակի, բնակավայրի և սեռի (տոկոս)

Կրթական մակարդակ*	ընդհանուր			քաղաքային			գյուղական		
	ընդհանուր	տղամարդ	կին	ընդհանուր	տղամարդ	կին	ընդամենը	տղամարդ	կին
Տարրական կամ ցածր	0.8	1.2	0.6	1.0	1.5	0.8	0.1	0.2	0.0
միջնակարգ	55.6	56.4	55.0	48.9	48.5	49.2	79.0	78.3	79.7
արհեստագործական	6.3	10.5	3.3	6.9	11.8	3.7	4.2	6.8	1.7
Միջին մասնագիտական	3.6	3.7	3.4	4.0	4.5	3.6	2.0	1.4	2.7
բարձրագույն	33.7	28.3	37.7	39.2	33.7	42.7	14.6	13.3	16.0
ընդհանուր	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II , որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի։
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Երիտասարդների կրթության և ակտիվության կարգավիճակը

Աղյուսակ 3.6-ը ցույց է տալիս երիտասարդների ստացած կրթության մակարդակի և նրանց հիմնական տնտեսական ակտիվության կարգավիճակի միջև կապը։ Զբաղված երիտասարդների կեսից ավելին (52.2 տոկոսը) միջնակարգ կրթություն ուներ, 39.9 տոկոսն ուներ բարձրագույն կրթություն և 7.6 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն (նախնական մասնագիտականը՝ արհեստագործականը, ներառյալ)։ Սա քիչ թե շատ կրկնում է, ընդհանուր առմամբ, երիտասարդ բնակչության կրթության մակարդակի պատկերը (Աղյուսակ 3.4), մեկ հիմնական տարբերությամբ. բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների թիվը զբաղված երիտասարդների շրջանում ավելի մեծ էր։ Գործազուրկ երիտասարդների թվում 58.4 տոկոսն ուներ միջնակարգ կրթություն, 30.4 տոկոսը՝ բարձրագույն կրթություն և 10.8 տոկոսը՝ միջին մասնագիտական կրթություն (նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթությունը ներառյալ)։ Պասիվ բնակչության կրթության մակարդակի վերաբերյալ տվյալները վկայում են ընդհանուր երիտասարդ բնակչության համար նույն տվյալներից զգալի տարբերությունների մասին. պասիվ երիտասարդների ամենամեծ թիվը համալսարանական կրթություն ունեցողներինն էր (53.0 տոկոս), ի տարբերություն միջնակարգ կրթություն ունեցողների (43.7 տոկոս), իսկ մնացած 3.3 տոկոսն ուներ միջին մասնագիտական կրթություն։

Այս աղյուսակի տվյալները մատնանշում են մարդկային ռեսուրսների կորուստը բարձրագույն կրթության մակարդակում։ Շատ զարմանալի է, որ պասիվ երիտասարդների 53.0 տոկոսը բարձրագույն կրթություն ուներ։ Բացատրություններից մեկը կարող է լինել այն, որ համալսարանների շրջանավարտներից շատերն, այդ նպատակով երկար ժամանակ ծախսելուց

հետո, դադարել էին աշխատանք փնտրել:[7] Բացի այդ, Հայաստանում երիտասարդ կանայք կրում են ընտանիքի և տնային տնտեսության հիմնական պատասխանատվությունը, և ամենայն հավանականությամբ, ամուսնանալուց հետո պասիվանում են՝ անկախ իրենց կրթության մակարդակից: Մյուս կողմից, արհեստագործական կրթություն ստացած երիտասարդների փոքր տոկոսը պասիվ երիտասարդության թվում ցույց է տալիս, որ այդ կրթությունը մի փոքր ավելի մեծ հնարավորություն է ընձեռնում մնալու աշխատուժի մեջ, քան կրթության այլ մակարդակները: Այդուհանդերձ, թվերն այնքան փոքր էին, որ Հայաստանում միջին մասնագիտական կրթության իրական ազդեցության մասին հստակ եզրակացություններ անելը շարունակում է բարդ մնալ:

Աղյուսակ 3.6 Երիտասարդների բաշխումն ըստ կրթության մակարդակի և հիմնական ակտիվության կարգավիճակի

Կրթական մակարդակ*	զբաղված		գործազուրկ		պասսիվ	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Տարրական կամ ցածր	565	0.3	565	0.5	–	0.0
միջնակարգ	111 774	52.2	72 588	58.4	39 186	43.7
արհեստագործական	10 086	4.7	9 174	7.4	912	1.0
Միջին մասնագիտական	6 301	2.9	4 197	3.4	2 104	2.3
բարձրագույն	85 288	39.9	37 766	30.4	47 522	53.0
ընդհանուր	214 014	100.0	124 290	100.0	89 725	100.0

Ծանոթություն: – = Անհայտ. * Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Աշխատանքի համատեղումը կրթության հետ

Պատկեր 3.3-ը ցույց է տալիս, որ հարցված երիտասարդները Հայաստանում չէին համատեղում կրթությունն ու աշխատանքը: Ընդհանուր առմամբ, իրենց ուսումն ստացած ուսանողների 88.5 տոկոսը չէին աշխատել իրենց սովորելու ընթացքում: Սակայն սովորելու ընթացքում աշխատանքային փորձի ձեռք բերումն օգնում է աշխատանքի տեղավորման մեջ արդյունքի հասնելուն: Ըստ հիմնական տնտեսական կարգավիճակի, զբաղված երիտասարդների միացյալ 16.9 տոկոսը որոշակի աշխատանքային փորձ էր ձեռք բերել իրենց դպրոցական տարիների ընթացքում (կա՛մ դպրոցում սովորելու ընթացքում, կա՛մ դրանից դուրս, կա՛մ և մեկը, և մյուսը): Ընդհակառակը, գործազուրկ երիտասարդների 92.9 տոկոսը և պասիվ երիտասարդների 94.6 տոկոսը չէր աշխատել իրենց դպրոցական տարիների ընթացքում:

[7] Ընդհանուր առմամբ, վհատված երիտասարդների թիվը (ովքեր ակտիվորեն աշխատանք չէին փնտրում կա՛մ այն պատճառով, որ զգում էին, որ ոլորտում աշխատանք չկա, կա՛մ չգիտեին, թե որտեղ պետք է փնտրել, արդեն փնտրել, սակայն ոչինչ չէին գտել, կամ կարծում էին, որ շատ երիտասարդ են աշխատանք գտնելու համար) պասիվ ոչ-ուսանող բնակչության թվում մեծ չէր (10.2 տոկոս), սակայն այդ ցուցանիշը քննության չէր առնվել ըստ կրթության մակարդակի:

Պատկեր 3.3 Ուսում ստացած և կրթությունն ու աշխատանքը համատեղած երիտասարդների բաշխումն ըստ հիմնական տնտեսական կարգավիճակի



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Ծնողների և իրենց երեխաների կրթությունը

Համեմատելով երիտասարդների կրթության մակարդակը նրանց ծնողների կրթության մակարդակի հետ, կարող ենք պատկերացում կազմել մեկ սերնդի ընթացքում տեղի ունեցած առաջընթացի մասին (Պատկեր 3.4): Հայաստանի դեպքում առաջընթաց է տեղի ունեցել, ինչն արտացոլվում է այն փաստով, որ երիտասարդների 24.3 տոկոսը հասել է կրթական ավելի բարձր մակարդակի, քան իրենց հայրերը և 26.6 տոկոսը՝ ավելի բարձր մակարդակի, քան իրենց մայրերը: Տվյալները վկայում են, որ միջնակարգ կրթություն ստացած երիտասարդների 81.8 տոկոսն ուներ կրթության նույն մակարդակը, ինչ իրենց հայրերը, և 87.7 տոկոսը՝ նույն մակարդակը, ինչ իրենց մայրերը: Բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների գրեթե կեսը (48.6 տոկոս) ուներ կրթության նույն մակարդակը, ինչ իրենց հայրերը, և 43.4 տոկոսը՝ նույն մակարդակը, ինչ իրենց մայրերը: Առաջընթացը նկատելի էր նաև միջին մասնագիտական կրթության ոլորտում, քանի որ հայրերի ու մայրերի համապատասխանաբար 61.2 տոկոսը և 74.4 տոկոսն ուներ ավելի ցածր կրթություն, քան միջնակարգ մասնագիտական կրթություն ստացած իրենց երեխաները, իսկ հայրերի ու մայրերի, համապատասխանաբար 82.2 և 80.4 տոկոսն ուներ ավելի ցածր կրթություն, քան միջին միջնակարգ մասնագիտական կրթություն ստացած իրենց երեխաները: Սակայն, վերջին թվերը չեն կարող վիճակագրորեն համապատասխան համարվել, հաշվի առնելով միջին մասնագիտական կրթություն ստացող երիտասարդների փոքր թիվը:

Պատկեր 3.4 Երիտասարդների և նրանց ծնողների կրթության մակարդակների համեմատությունը



Ծանոթություն. Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

Մի կողմ թողնելով բարձրագույն կրթության ոլորտում առաջընթացը, ուշագրավ է նշել ներկայումս միջին մասնագիտական կրթություն ստացողների թվի կրճատումը: Հավելվածի Աղյուսակ Ա .6-ը ցույց է տալիս, որ երիտասարդների մայրերի 2.2 տոկոսը և 31.9 տոկոսը համապատասխանաբար ստացել էր միջնակարգ մասնագիտական և հետմիջնակարգ մասնագիտական կրթություն: Երիտասարդների հայրերի դեպքում այս թվերը կազմել են համապատասխանաբար 4.5 տոկոս և 26.4 տոկոս: Եվ ընդհակառակը, 2012թ.-ին, թեև երիտասարդների 6.3 տոկոսն ստացել էր նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, ընդամենը 3.6 տոկոսն էր ստացել միջին մասնագիտական կրթություն: Այս անկումը լրջորեն մատնանշում է միջին մասնագիտական կրթության ոլորտի ճգնաժամի մասին, ինչը հրատապ լուծում է պահանջում:

Տնային տնտեսությունների ֆինանսական վիճակը և կրթության մակարդակը

Պատկեր 3.5-ը ցույց է տալիս տնային տնտեսությունների եկամուտների և կրթության մակարդակի միջև կապը: Զարմանալի չէ, որ ամենահարուստ տնային տնտեսությունների երիտասարդներն ունեին բարձրագույն կրթության ամենաբարձր ցուցանիշները (բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների 65.0 տոկոսը բարեկեցիկ ընտանիքներից էին), համեմատած համեմատաբար բարեկեցիկ տնային տնտեսությունների (45.5 տոկոս), միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների (35.3 մեկ տոկոս), համեմատաբար աղքատ տնային տնտեսությունների (20.2 տոկոս), և, ի վերջո, աղքատ տնային տնտեսությունների (14.1 տոկոս) հետ: Տրամաբանական է, որ ամենաաղքատ տնային տնտեսությունները նրանք էին, որտեղ կրթության մակարդակն ամենացածրն էր, ընդհանուր առմամբ, մինչև պարտադիր

կրթության առավելագույն մակարդակը: Համատեղելով ընդհանուր միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթությունները, ամենաաղքատ տնային տնտեսությունների երիտասարդների 79.2 տոկոսն ուներ միջնակարգ կրթություն: Միջին մասնագիտական կրթությունն ավելի հաճախ էր հանդիպում համեմատաբար աղքատ և աղքատ տնային տնտեսություններում (միջնակարգ կրթության երկու մակարդակները միասին, համապատասխանաբար 15.7 և 15.1 տոկոս): Համեմատության համար նշենք, որ բարեկեցիկ ընտանիքներից երիտասարդների ընդամենը 5.9 տոկոսն ուներ միջին մասնագիտական կրթություն:

Պատկեր 3.5 Երիտասարդների բաշխումն ըստ տնային տնտեսության եկամտի և կրթության մակարդակի (տոկոս)



Ծանոթություն. Տնային տնտեսությունների եկամուտների դասերը հիմնված են հարցված երիտասարդների անձնական գնահատման վրա: Տարբական կրթության արդյունքները բաց են թողնվել՝ թվերի շատ փոքր լինելու պատճառով: Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ-Հայաստան, 2012թ.

3.2.3 Ներկայումս ուսանող հանդիսացողներ

Ներկայումս ուսանող հանդիսացողները Հայաստանում (հարցման պահին) հիմնականում գերադասում էին, ի վերջո, ձեռք բերել մասնագիտական աշխատանք (67.3 տոկոս) (Աղյուսակ 3.7): Տղամարդ ուսանողների թվում 60.6 տոկոսը նախընտրում էր մասնագիտական աշխատանք, իսկ 15.7 տոկոսը հույս ուներ աշխատանք գտնել որպես տեխնիկ, կամ հարակից մասնագիտությամբ: Իգական սեռի ուսանողների թվում 73.2 տոկոսը նախընտրում էր մասնագիտական աշխատանքը, իսկ 14.3 տոկոսը՝ տեխնիկական աշխատանքը: Այն առումով, թե որտեղ էին ուսանողները ցանկանում աշխատել, գրեթե կեսը (45.5 տոկոս), հույս էր հայտնել աշխատել պետական կամ հանրային հատվածում: Հանրային հատվածով հետաքրքրված լինելը պայմանավորված էր երեք գործոններով՝ կարգավիճակ, անվտանգություն և նպաստներ: Ցավոք, մտածելը, թե հանրային հատվածը կարող է տեղավորել բոլոր երիտասարդ շրջանավարտներին, անիրատեսական է: Երիտասարդ ուսանողների միայն 16.8 տոկոսը հայտարարեց, որ նախապատվություն է տալիս մասնավոր

ընկերություններում աշխատելուն, և համեմատաբար մեծ մասը (25.9 տոկոս) ինքնազբաղված լինելու ցանկություն հայտնեց: Վերջին վիճակագրությունը որոշ չափով զարմանալի էր, հաշվի առնելով հարցված երիտասարդների այն փոքր թիվը, ովքեր ինքնազբաղված էին (բաժին 3.5):

Աղյուսակ 3.7 Ներկայիս ուսանողների բաշխումն ըստ նախընտրած զբաղմունքի, աշխատանքի վայրի և սեռի

ոլորտը և զբաղվածության բնույթը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ոլորտ						
Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	23 616	6.6	16 259	9.7	7 357	3.9
Մասնագետներ	239 060	67.3	101 246	60.6	137 813	73.2
Տեխնիկներ և օգնականներ	53 252	15.0	26 237	15.7	27 015	14.3
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	8 027	2.3	6 357	3.8	1 670	0.9
Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	15 247	4.3	5 461	3.3	9 786	5.2
գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ	626	0.2	626	0.4	0	0.0
Արհեստավորներ	5 038	1.4	4 045	2.4	992	0.5
Մեքենավարներ	2 136	0.6	2 136	1.3	0	0.0
Տարրական զբաղվածություն	8 359	2.4	4 709	2.8	3 650	1.9
Բանակում ծառայողներ	0	0.0	0	0.0	0	0.0
ընդհանուր	355 360	100.0	167 077	100.0	188 283	100.0
Աշխատանքի ոլորտը						
ինքնազբաղված	91 854	25.9	55 508	33.2	36 345	19.3
Պետական/հանրային հատված	161 624	45.5	66 511	39.8	95 114	50.5
Մասնավոր հատված	59 719	16.8	28 560	17.1	31 159	16.6
Միջազգային կազմակերպություններ	33 156	9.3	12 369	7.4	20 786	11.0
Ընտանեկան բիզնես/ֆերմա	8 688	2.4	4 129	2.5	4 559	2.4
Չեն ցանկանում աշխատել	169	0.1	0	0.0	169	0.1
Կարևոր չէ	151	0.0	0	0.0	151	0.1
ընդհանուր	355 360	100.0	167 077	100.0	188 283	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

Պատկեր 3.6-ը ցույց է տալիս հարցված ուսանողների մասնագիտացման ընտրությունը: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության նախընտրելի ոլորտը գիտության, մաթեմատիկայի և հաշվողական ոլորտներն էին, որոնք ընտրվել էին երիտասարդների 20.7 տոկոսի կողմից: Սոցիալական գիտությունների, բիզնեսի և իրավաբանության, և հումանիտար և արվեստի ոլորտները նույնպես երիտասարդների ավելի քան 15 տոկոսի կողմից ընտրված երկու ոլորտներն էին (համապատասխանաբար 19.4 և 18.4 տոկոս): Երիտասարդության ավելի քան 10 տոկոսի կողմից ընտրված ոլորտներն էին առողջապահության և սոցիալական ծառայությունների (12.4 տոկոս), և ընդհանուր ծրագրերի (10.7 տոկոս) ոլորտները: Կային, սակայն, կարևոր գենդերային տարբերություններ: Ամենամեծ տարբերությունները հօգուտ տղամարդկանց՝ գիտության, մաթեմատիկայի և հաշվողական (որոնք ընտրված էին տղամարդկանց 26.1 տոկոսի կողմից, կանանց 15.9 տոկոսի համեմատ), ինժեներական,

արտադրության և շինարարության (տղամարդկանց 10.4 տոկոսը, կանանց 2,4 տոկոսի համեմատ), և գյուղատնտեսության և անասնաբուժական գիտությունների (տղամարդկանց 6.1 տոկոսը, կանանց 2.0 տոկոսի համեմատ) ոլորտներն էին: Իգական ուսանողները, մյուս կողմից, նախընտրում էին հումանիտար և արվեստների (կանանց 26,8 տոկոսը, տղամարդկանց 9.0 տոկոսը), առողջապահության և սոցիալական ծառայությունների (կանանց 14.2 տոկոսը, տղամարդկանց 10,5 տոկոսը) և կրթության (կանանց 5.2 տոկոսը, տղամարդկանց 2.4 տոկոսը) ոլորտները:

Պատկեր 3.6 Ներկայիս ուսանողների բաշխումն ըստ կրթության նախընտրելի ոլորտի



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.3 Երիտասարդների ակտիվության կարգավիճակը

Զբաղվածության և գործազրկության վիճակագրության վերաբերյալ միջազգային չափորոշիչները հիմնված են աշխատուժի շրջանակների վրա (սահմանումների համար տես Հավելված I): Ըստ այդ շրջանակների, աշխատունակ տարիքի բնակչությունը բաժանվում է երեք դասերի (զբաղված, գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ (պասիվ), կախված աշխատաշուկայում որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում (մեկ օր կամ մեկ շաբաթ) իրենց գործունեությունից:

Պատկեր 3.7-ը ցույց է տալիս աշխատունակ տարիքի երիտասարդ բնակչության բաշխումն ըստ հիմնական տնտեսական գործունեության: Որոշ դիտարկումներ հանգեցրել են հետևյալ արդյունքներին: Առաջին, հարցված երիտասարդների 13.3 տոկոսը գործազուրկ էին, ընդ որում գործազրկության ցուցանիշը մի փոքր ավելի բարձր էր երիտասարդ կանանց շրջանում, քան տղամարդկանց: Երկրորդ, երիտասարդների մեծ մասը պասիվ էին (56.1 տոկոս), ընդ որում երիտասարդ կանանց ցուցանիշն ավելի բարձր էր (63.2 տոկոս կանայք և 47.0 տոկոս տղամարդիկ): Պասիվ խումբը բաղկացած էր այն երիտասարդներից, որոնք աշխատաշուկայից դուրս էին և նրանցից, ովքեր

զբաղված էին կրթությամբ, հոգ էին տանում ընտանիքի մասին, թոշակառու, հիվանդ կամ հաշմանդամ էին: Երրորդ, աշխատող երիտասարդ տղամարդկանց ցուցանիշը զգալիորեն ավելի բարձր էր, քան աշխատող երիտասարդ կանանցը՝ համապատասխանաբար 39.9 տոկոս և 23.3 տոկոս: Այսպիսով, պասիվ երիտասարդ կանանց թիվը շատ ավելի մեծ էր, քան երիտասարդ տղամարդկանցը, իսկ աշխատող երիտասարդ տղամարդկանց թիվը՝ շատ ավելի մեծ, քան երիտասարդ կանանցը:

Զբաղված երիտասարդների թվին ավելացնելով գործազուրկ երիտասարդների թիվը և համեմատելով այս գումարային արդյունքը բնակչության թվի հետ, կստանանք աշխատուժի մեջ մասնակցության մակարդակը: Հայաստանում այս ցուցանիշը հարցված երիտասարդ տղամարդկանց համար 53.0 տոկոս էր, իսկ երիտասարդ կանանց համար՝ 36.8 տոկոս: Աշխատուժի մեջ մասնակցության մակարդակն աճել էր բոլոր տարիքային խմբերում, սկսած դեռահասների (15-19 տարեկան) համար 11.3 տոկոսից մինչև երիտասարդ չափահասների (20-24 տարեկան) համար 53.8 տոկոս և ավելի հասուն երիտասարդների (25-29 տարեկան) համար 70.2 տոկոս: Այս աճը նորմալ էր, քանի որ երիտասարդներն աստիճանաբար ավարտում են իրենց ուսումը և միանում են աշխատուժին: Տարբերությունը, սակայն, զգալի էր երիտասարդ տղամարդկանց և կանանց միջև:

Պատկեր 3.7 Երիտասարդության մասնակցությունն ըստ հիմնական տնտեսական ակտիվության և սեռի



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

ԱՄԿ «Երիտասարդների համար գլոբալ զբաղվածության միտումները 2013թ.» զեկույցում բերված է մի փաստարկ, համաձայն որի, աշխատաշուկայի ավանդական ցուցանիշները ԱԴԱ հետազոտության միջոցով հասանելի դարձած ավելի մանրամասնված ցուցանիշների հետ համեմատելը թույլ է տալիս ավելի մանրամասն պատկերացում կազմել այն մարտահրավերների մասին, որոնց բախվում են երիտասարդները զարգացող տնտեսություններում (ԱՄԿ, 2013թ., Գլուխ 4): ԱԴԱՀ շրջանակն առաջարկում է երիտասարդ բնակչությանը բաշխել ըստ հետևյալ հինգ դասերի. (ա) կայուն զբաղվածություն, որը սահմանվում է որպես վարձու աշխատողներ կամ վարձատրվող պաշտոններում աշխատողներ, որոնք ունեն ավելի քան 12-ամսյա պայմանագիր, գումարած աշխատակիցներ (գործատուներ) ունեցող ինքնազբաղված երիտասարդները, (բ) ժամանակավոր զբաղվածություն, որը սահմանվում է որպես վարձատրվող աշխատողներ, որոնք ունեն

սահմանափակ տևողությամբ պայմանագիր, այսինքն պայմանագրի ժամկետն ավարտվում է նախքան 12 ամիսը, առանց աշխատակիցների (ազատ մասնագիտությամբ) ինքնազբաղված երիտասարդները, և ընտանիքի չվճարվող աշխատանք կատարողները, (գ) գործազուրկ (հանգստի վիճակում), որոնք սահմանվում են որպես անձինք, որոնք ներկայումս առանց աշխատանքի են և պատրաստ են ստանձնել աշխատանքը տվյալ ժամանակահատվածից մեկ շաբաթ առաջ, (դ) պասիվ ոչ ուսանողներ, և (ե) պասիվ ուսանողներ։

Աղյուսակ 3.8-ը ցույց է տալիս Հայաստանի համար ստացված արդյունքները: Այս շրջանակներում, կայուն զբաղվածություն ունեցող երիտասարդ տղամարդկանց թիվն ավելի մեծ էր քան երիտասարդ կանանցը (համապատասխանաբար 25.7 տոկոս և 16.5 տոկոս): Ժամանակավոր զբաղվածությունը նույնպես ավելի տարածված էր երիտասարդ տղամարդկանց, քան երիտասարդ կանանց շրջանում (համապատասխանաբար 14.2 տոկոս և 6.8 տոկոս): Հանգստացող գործազուրկների թիվը, արտահայտված որպես երիտասարդ բնակչության մաս, երիտասարդ կանանց դեպքում փոքր-ինչ ավելի էր, քան երիտասարդ տղամարդկանցը (համապատասխանաբար 18.1 տոկոս և 15.2 տոկոս) և մասնավորապես 20-24 տարեկան երիտասարդներինը (23.5 տոկոս՝ ընդհանուր հանգստացող գործազուրկ երիտասարդների 16.8 տոկոսի համեմատ):

Ըստ աշխարհագրական դիրքի, քաղաքային բնակավայրերում վիճակն ավելի լավ էր, քան գյուղական բնակավայրերում, առնվազն զբաղվածության կայունության առումով, նրանց կայուն զբաղվածության ցուցանիշն ավելի բարձր էր (21.6 տոկոս՝ գյուղական բնակավայրերի 16.5 տոկոսի համեմատ), իսկ նրանց ժամանակավոր զբաղվածության ցուցանիշն ավելի ցածր էր (7.1 տոկոս՝ գյուղական բնակավայրերի 21.9 տոկոսի համեմատ): Հանգիստ գործազրկությունը, մյուս կողմից, շատ ավելի տարածված էր քաղաքային (19.3 տոկոս), քան գյուղական բնակավայրերում (6.9 տոկոս):

Ի վերջո, ընդհանուր երիտասարդների 52.5 տոկոս պասիվությունը համահունչ էր կրթության ոլորտում ընդգրկված երիտասարդ բնակչության մեծ տոկոսին։ Երիտասարդ բնակչության ավելի քան մեկ երրորդը (37.1 տոկոս) պասիվ ուսանողներ էին, իսկ 15.4 տոկոսը՝ պասիվ ոչ-ուսանողներ: Կարևոր է նշել, որ երիտասարդ կանանց պասիվության ցուցանիշը շատ ավելի բարձր էր, քան երիտասարդ տղամարդկանցը (համապատասխանաբար 58.6 տոկոս և 44.9 տոկոս), և որ պասիվ երիտասարդ կանանց թվում շատ ավելի շատ էին պասիվ ոչ-ուսանողների դասին պատկանողները (23.3 տոկոս), քան երիտասարդ տղամարդկանց թվում (5.5 տոկոս):

Այս տվյալներից քաղված հիմնական դասն այն է, որ, չնայած երկու սեռերի համար էլ կան դժվարություններ (ինչը երևում է բաժին 3.6-ում քննարկված գործազրկության բարձր ցուցանիշներից), երիտասարդ կանանց մոտ աշխատաշուկայի արդյունքներն ավելի վատ են, քան երիտասարդ տղամարդկանց մոտ, չնայած ավելի բարձր կրթության մակարդակին։

Աղյուսակ 3.8 Երիտասարդների բաշխումն ըստ ընտրված բնութագրերի և ակտիվության կարգավիճակի

բնութագիր	Երիտ. Բնակչութ.	Մշտ. աշխատող		Սեզոնային աշխատող		Հանգիստ գործազրկութ.		Պասիվ ոչ սովորող		Պասիվ սովորող	
	քանակ	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ընդհանուրը	784 355	161 479	20.6	78 952	10.1	131 901	16.8	120 830	15.4	291 192	37.1
սեռ											
տղամարդ	346 309	89 021	25.7	49 244	14.2	52 611	15.2	18 958	5.5	136 474	39.4
կին	438 046	72 458	16.5	29 709	6.8	79 289	18.1	101 872	23.3	154 719	35.3
Տարիքային խումբ											
15–19	271 885	3 784	1.4	9 689	3.6	28 888	10.6	16 109	5.9	213 415	78.5
20–24	280 851	66 730	23.8	27 675	9.9	66 011	23.5	49 139	17.5	71 296	25.4
25–29	231 620	90 965	39.3	41 589	18.0	37 001	16.0	55 582	24.0	6 482	2.8
բնակավայր											
քաղաքային	627 357	135 575	21.6	44 617	7.1	121 052	19.3	90 012	14.3	236 102	37.6
գյուղական	156 998	25 904	16.5	34 336	21.9	10 849	6.9	30 818	19.6	55 091	35.1

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

Աղյուսակ 3.9-ը ներկայացնում է տվյալ պահին ոչ զբաղված, ոչ էլ կրթություն կամ ուսուցում ստացող երիտասարդների (ՈԶՈԿՈՒ) վերաբերյալ տվյալները: Հայաստանի երիտասարդ բնակչության ընդհանուր թվի 27.4 տոկոսն ընկնում է ՈԶՈԿՈՒ դասի ներքո, ըստ որում, նրանց 39.3 տոկոսը գործազուրկ ոչ ուսանողներ են, իսկ 60.7 տոկոսը՝ պասիվ ոչ ուսանողներ: Երիտասարդ կանանց շրջանում ՈԶՈԿՈՒ երիտասարդների թիվը շատ ավելի մեծ է, քան երիտասարդ տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար 36.5տոկոս և 15.9 տոկոս): Միևնույն ժամանակ, կին ՈԶՈԿՈՒ երիտասարդների կազմը տարբերվում է տղամարդ ՈԶՈԿՈՒ երիտասարդների կազմից: Երիտասարդ կին ՈԶՈԿՈՒ-ների ավելի քան երկու երրորդը (69.2 տոկոս) պասիվ ոչ ուսանողներ էին: Տղամարդ ՈԶՈԿՈՒ երիտասարդների դեպքում, միայն 35.8 տոկոսն էին պասիվ ոչ ուսանողներ: Սակայն, մյուս կողմից, ավելի շատ երիտասարդ տղամարդիկ էին դասակարգվել ՈԶՈԿՈՒ դասի ներքո, քանի որ նրանք հիմնականում գործազուրկ ոչ ուսանողներ էին (երիտասարդ տղամարդկանց 64.2 տոկոսը և երիտասարդ կանանց 30.8 տոկոսը): Այս թվերը պետք է դիտարկել ընտանեկան պարտականություններով զբաղվող կանանց բարձր ցուցանիշի առնչությամբ: Ինչ վերաբերում է աշխարհագրական դիրքին, ավելի մեծ թվով ՈԶՈԿՈՒ երիտասարդներ կային քաղաքային, քան գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար 27.9 տոկոս և 25.4 տոկոս), ինչը պայմանավորված է քաղաքային բնակավայրերում գործազրկության բարձր ցուցանիշներով: Գյուղական բնակավայրերում ՈԶՈԿՈՒ երիտասարդների կազմը հիմնականում բաղկացած է պասիվ ոչ ուսանողներից, կազմելով ընդհանուրի 80.9 տոկոսը:

Աղյուսակ 3.9 Տվյալ պահին ոչ զբաղված, ոչ կրթության կամ ուսուցման մեջ ընդգրկված (ՈԶՈԿՈՒ) երիտասարդների բաշխումն ըստ կարգավիճակի, սեռի և բնակավայրի

Սեռը և բնակավայրը	Երիտասարդ բնակչություն	ՈԶՈԿՈՒ-ները երիտասարդ բնակչության մեջ		ՈԶՈԿՈՒ կարգավիճակ (և ՈԶՈԿՈՒ-ների մասնաբաժին)			
				Գործազուրկ ոչ սովորող		Պասիվ ոչ սովորող	
		քանակ	%	քանակ	%	քանակ	%
ընդհանուր	784 355	214 981	27.4	84 540	39.3	130 441	60.7
տղամարդ	346 309	54 942	15.9	35 254	64.2	19 689	35.8
կին	438 047	160 039	36.5	49 286	30.8	110 752	69.2
Բնակության վայր							
քաղաքային	627 357	175 128	27.9	76 938	43.9	98 190	56.1
գյուղական	156 998	39 852	25.4	7 601	19.1	32 251	80.9

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.4 Զգտումներն ու կյանքի նպատակները

ԱԴԱ հետազոտության երիտասարդ հարցվողներին խնդրել են բացահայտել իրենց կյանքի հիմնական նպատակը: Արդյունքները տարբեր էին, կախված տնտեսական ակտիվության կարգավիճակից, բայց հատկապես սեռերի միջև:

Կանանց առաջնահերթությունը, հիմնականում կախված գործունեության կարգավիճակից, լավ ընտանեկան կյանք ունենալն էր: Սա որպես գլխավոր նպատակ էր ընտրվել պասիվ երիտասարդ կանանց 60.2 տոկոսի, գործազուրկ կանանց 62.6 տոկոսի և զբաղված կանանց 72.9 տոկոսի կողմից: Նրանց երկրորդ առաջնահերթությունն էր ունենալ հաջող կարիերա, հատկապես պասիվ կանանց շրջանում (25.8 տոկոս), մի բան, որ վկայում էր, որ պասիվ կանանցից շատերը նախատեսում էին ավելի ուշ միանալ աշխատուժին: Գումար վաստակելը, մյուս կողմից, կարևոր նպատակ չէր, և տատանվում էր 5.1 տոկոսից (պասիվ կանայք) 6.2 տոկոսի (գործազուրկ կանայք) սահմաններում:

Երիտասարդ տղամարդկանց նպատակներն ավելի հավասարաչափ էին բաշխված ըստ առաջնահերթությունների. գումար վաստակել, հաջող կարիերա ունենալ և լավ ընտանեկան կյանք ունենալ: Պասիվ տղամարդկանց համար առաջնահերթությունը հաջող կարիերա ունենալն էր (30.7 տոկոս), գործազուրկ տղամարդկանց համար՝ բավականաչափ գումար վաստակելը (37.4 տոկոս), իսկ զբաղված տղամարդկանց համար՝ լավ ընտանեկան կյանք ունենալը շատ քիչ գերազանցում էր գումար վաստակելուն, որպես առաջին առաջնահերթություն (համապատասխանաբար 34.7 տոկոս և 34.2 տոկոս): Միայն պասիվ տղամարդիկ էին ընտրել որևէ զգալի չափով հասարակության համար ներդրում կատարելը (16,2 տոկոս):

Պատկեր 3.8 Երիտասարդության բաշխումն ըստ կյանքի գլխավոր նպատակի, հիմնական տնտեսական գործունեության կարգավիճակի և սեռի



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.5 Զբաղված երիտասարդների բնութագիրը

3.5.1 Զբաղվածության կարգավիճակը և բաշխումն ըստ տնտեսության ճյուղի և զբաղմունքի

Աղյուսակ 3.10-ը ցույց է տալիս, որ հարցված երիտասարդների գրեթե երեք քառորդը (74.9 տոկոս) գործարքային և հաստիքային վարձատրությամբ աշխատողներ էին: Երկրորդ ամենատարածված զբաղվածության կարգավիճակը ընտանիքի չվճարվող աշխատողներն էին՝ երիտասարդների 16.9 տոկոսը, որին հաջորդում էր ինքնազբաղված (6.5 տոկոս) երիտասարդների կարգավիճակը, և գործատուների մի փոքր մաս (1.7 տոկոս): Տարբերություններ կային սեռերի միջև, ընդ որում վարձու կամ վարձատրվող աշխատողների թիվը մի փոքր ավելի էր երիտասարդ կանանց, քան երիտասարդ տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար 78.7 տոկոս և 72.1 տոկոս), սակայն կանանց շրջանում ավելի փոքր էր ընտանիքի չվճարվող աշխատողների թիվը (16.3 տոկոս կանայք և 17.3 տոկոս տղամարդիկ), ինչպես նաև ինքնազբաղվածների (համապատասխանաբար 4.5 տոկոս կանայք և 7.9 տոկոս տղամարդիկ,) և գործատուների թիվը (համապատասխանաբար 0.5 տոկոս կանայք և 2.6 տոկոս տղամարդիկ): Քաղաքային-գյուղական բնակավայրերի միջև տարբերությունը հատկապես ցայտուն էր այս ցուցանիշի առնչությամբ, որը ցույց էր տալիս, որ որևէ պաշտոնապես գրանցված ձեռնարկության համար վարձատրության դիմաց աշխատելու ժամանակակից միտումը սկզբունքորեն մնում էր որպես քաղաքային երևույթ Հայաստանում: Գյուղական բնակավայրերում, երիտասարդ մարդիկ հավասարապես պատրաստակամ էին աշխատել չվճարվող ընտանեկան ձեռնարկությունում (45.5 տոկոսը), ինչպես նաև վարձատրվող ոչ ընտանեկան ձեռնարկությունում (47.5 տոկոս): Ի տարբերություն սրա, ընտանիքի չվճարվող աշխատողները քաղաքային բնակավայրերում կազմում էին երիտասարդ աշխատողների ընդամենը 7.3 տոկոսը:

Աղյուսակ 3.10 Երիտասարդների զբաղվածությունն ըստ զբաղվածության կարգավիճակի, սեռի և բնակավայրի (տոկոս)

Զբաղվածության կարգավիճակ	ընդհանուրը	տղամարդ	կին	քաղաքային	գյուղական
Վարձու աշխատող	74.9	72.1	78.7	84.1	47.5
գործատու	1.7	2.6	0.5	2.2	0.2
ինքնազբաղվածներ	6.5	7.9	4.5	6.4	6.8
Ընտանիքում չվճարվող աշխատողներ	16.9	17.3	16.3	7.3	45.5
ընդհանուրը	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Ինքնազբաղվածները և ընտանիքի չվճարվող աշխատողները միասին դասակարգվում են որպես «խոցելի զբաղվածություն ունեցողներ»: Հայաստանի երիտասարդ կանանց մեկ հինգերորդը (208 տոկոս) և երիտասարդ տղամարդկանց մեկ քառորդը (25.2 տոկոս) դասվում են այս շարքին: Հաշվի առնելով գյուղական բնակավայրերում չվճարվող ընտանեկան աշխատանքի տարածվածությունը, երիտասարդ աշխատողների ավելի քան կեսը (52.3 տոկոս) համարվում է խոցելի, ինչը բավական մեծ է քաղաքային բնակավայրերում նույն ցուցանիշից (13.7 տոկոսը):

Զբաղվածության հիմնական ոլորտների վերաբերյալ տվյալները ավելի ընդգծված տարբերություններ են բացահայտում սեռերի և քաղաքային / գյուղական բնակավայրերի միջև: Երիտասարդ տղամարդկանց մեծամասնությունն աշխատում էր ծառայությունների ոլորտում (54.4 տոկոս), որին հաջորդում էին 26.9 տոկոս՝ արդյունաբերության և 18.7 տոկոս՝ գյուղատնտեսության ճյուղերը (Աղյուսակ 3.11): Երիտասարդ կանանց ավելի քան երեք քառորդը (78.6 տոկոս) զբաղված էին ծառայությունների ոլորտում, ինչը համահունչ էր վարձատրվող զբաղվածության մեջ նրանց բարձր ցուցանիշին: Երիտասարդ կանանց երկրորդ կարևորագույն զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն էր՝ 15.8 տոկոս ցուցանիշով: Արդյունաբերության ոլորտում աշխատում էին հարցված կանանց ընդամենը 5.6 տոկոսը: Գյուղական բնակավայրերում զբաղվածության գերակշիռ մասը շարունակում էր մնալ գյուղատնտեսության ոլորտում, որտեղ աշխատում էին երիտասարդների 51.3 տոկոսը: Ծառայությունների ոլորտում աշխատում էր գյուղական բնակավայրերի երիտասարդների 32.2 տոկոսը, և քաղաքային բնակավայրերի երիտասարդների գերակշիռ՝ 75.5 տոկոսը:

Աղյուսակ 3.11 Երիտասարդների զբաղվածությունն ըստ հիմնական ոլորտների, սեռի և բնակավայրի (տոկոս)

Ոլորտ	ընդհանուրը	տղամարդ	կին	քաղաքային	գյուղական
գյուղատնտեսություն	17.5	18.7	15.8	6.1	51.3
արդյունաբերություն	17.8	26.9	5.6	18.3	16.4
ծառայություններ	64.7	54.4	78.6	75.5	32.2
ընդհանուրը	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Ավելի մանրամասն դիտարկելիս (Աղյուսակ 3.12), տվյալները ցույց են տալիս, որ արդյունաբերության ոլորտում երիտասարդ տղամարդկանց

զբաղվածությունն ավելի տարածված էր արտադրության (տղամարդկանց ընդհանուր զբաղվածության 12.5 տոկոսը) և շինարարության (10.0 տոկոսը) ոլորտներում: Այս երկու ոլորտները, կարծես, փակ էին երիտասարդ կանանց համար: Կին աշխատողների առավելագույնը 3.9 տոկոսն էին զբաղված արդյունաբերության ոլորտում: Կրթությունն, ի տարբերություն, հանդիսանում էր ՛՛կանանց տիրույթ՛՛, մոտավորապես ընդգրկելով հինգ կին աշխատողներից մեկին (18.8 տոկոս), համեմատած երիտասարդ տղամարդ աշխատողների 2.1 տոկոսի հետ: Հանրային հատվածը, որպես կանոն, ներկայացված էր երեք ոլորտներով՝ պետական կառավարում, կրթություն և առողջապահություն և սոցիալական ծառայություններ (երիտասարդ կանանց 31.4 տոկոսը և երիտասարդ տղամարդկանց 15.9 տոկոսը):

Աղյուսակ 3.12 Երիտասարդների զբաղվածության մանրամասն բաշխումն ըստ ոլորտների (առաջին ԱՍՄԴ) և սեռի (տոկոս)

ոլորտ	ընդհանուր	տղամարդ	կին
Գյուղատնտեսություն և ձկնորսություն	17.5	18.7	15.8
Արդյունաբերություն /մշակող/	8.9	12.5	3.9
Շինարարություն	6.1	10.0	0.9
Առևտուր և վերանորոգում	19.2	19.9	18.1
Տրանսպորտ	3.7	4.7	2.4
Ֆինանսական միջնորդական ծառայություններ	1.7	2.1	1.2
Տեղեկատվություն և կապ	5.5	4.7	6.5
Ֆինանսական	3.3	2.1	4.8
Պետական կառավարում	10.8	12.7	8.2
Կրթություն	9.2	2.1	18.8
Առողջապահություն	2.5	1.1	4.4
Արվեստ և ժամանց	1.6	0.8	2.7
Այլ ծառայություններ	4.8	2.4	8.0

Ծանոթություն: Ընդհանուր հարցվածների 2 տոկոսից պակաս ներգրավող ոլորտները նշված չեն: Դրանք ներառում են հանքարդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի և գոլորշու, ջրամատակարարման, անշարժ գույքի, մասնագիտական, գիտական գործունեության, վարչական և օժանդակ գործունեության, մասնավոր տնային տնտեսություններում զբաղվածությունն ու արտատարածքային գործունեությունը:
ԱՍՄԴ= Արդյունաբերական դասակարգման միջազգային չափորոշիչ:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

Աղյուսակ 3.13-ը ներկայացնում է հարցված երիտասարդների մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն: Երիտասարդ մասնագետների 20.5 տոկոսի համար հինգ ամենահաճախ հանդիպող զբաղվածություններն էին՝ ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատողները (16.1 տոկոսը), արհեստագործները (12.1 տոկոսը), պարզունակ զբաղվածություն ունեցողները (11.8 տոկոսը), և գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողները (10.4 տոկոս): Իրավիճակն ըստ սեռերի փոքր-ինչ տարբեր էր: Երիտասարդ կանանց շրջանում զբաղվածության երկու տեսակներ կազմել են զբաղվածության ավելի քան կեսը: Դրանք են՝ մասնագիտական զբաղվածությունը (33.1 տոկոս) և ծառայությունների և առևտրի ոլորտում զբաղվածությունը (21.8 տոկոս): Այնուհետև հաջորդում են տեխնիկական աշխատողների (12.6 տոկոս), գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողների (8.7 տոկոս), և գրասենյակային աշխատողների (8.2 տոկոս) զբաղվածությունը: Տղամարդկանց զբաղվածությունն ավելի տարբեր

էր, ընդ որում զբաղվածության վեց տեսակներից յուրաքանչյուրում ընդգրկված էր հարցվածների ավելի քան 10 տոկոսը: Դրանք էին՝ արհեստագործները (19.6 տոկոս), տարրական գործունեություն ծավալողները՝ պարզունակ զբաղվածություն(14.5 տոկոս), ծառայությունների և առևտրի ոլորտի աշխատողները (11.9 տոկոս), գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողները (11.6 տոկոս), օրենսդիրները, բարձրաստիճան պաշտոնյաները և կառավարիչները (11.4 տոկոս), և մասնագետները (11.2 տոկոս): Ընդհանուր առմամբ, հետևաբար, կանանց զբաղվածությունն ավելի շատ կենտրոնացված էր կրթության ոլորտում: Երիտասարդ կանանց զբաղմունքների զբաղվածության ոլորտների ավելի սահմանափակ լինելը նրանց գործազրկության բարձր ցուցանիշների գործոն էր հանդիսանում:

Աղյուսակ 3.13 Զբաղված երիտասարդների բաշխումն ըստ զբաղմունքի և սեռի

ոլորտ	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	20 554	8.5	15 750	11.4	4 804	4.7
Մասնագետներ	49 317	20.5	15 525	11.2	33 792	33.1
Տեխնիկներ և օգնականներ	23 355	9.7	10 450	7.6	12 905	12.6
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	12 786	5.3	4 371	3.2	8 415	8.2
Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	38 729	16.1	16 469	11.9	22 260	21.8
գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ	24 991	10.4	16 060	11.6	8 931	8.7
Արհեստավորներ	29 072	12.1	27 085	19.6	1 987	1.9
Մեքենավարներ	7 750	3.2	6 960	5.0	790	0.8
Պարզունակ զբաղվածություն	28 336	11.8	20 054	14.5	8 282	8.1
Բանակում ծառայողներ	5 541	2.3	5 541	4.0	0	0.0
ընդհանուր	240 431	100.0	138 265	100.0	102 166	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.5.2 Վարձու աշխատանք

Հետազոտության արդյունքները՝ կապված գործարքային և հաստիքային վարձատրությամբ աշխատող երիտասարդների պայմանագրի տեսակի հետ, ընդհանուր առմամբ բարենպաստ էին. երիտասարդ աշխատողների 75.1 տոկոսն ուներ գրավոր պայմանագիր (Աղյուսակ 3.14): Այդուհանդերձ, մտահոգիչ էր, որ երիտասարդների 24.9 տոկոսն աշխատում էր միայն բանավոր պայմանագրով: Գրավոր պայմանագիր չունեցող երիտասարդների ցուցանիշն ավելի բարձր էր երիտասարդ տղամարդկանց շրջանում (33.7 տոկոս), քան երիտասարդ կանանց (13.9 տոկոս): Նույնիսկ, թվային արտահայտությամբ, ավելի շատ երիտասարդ կանայք, քան տղամարդիկ ունեին գրավոր համաձայնագիր (համապատասխանաբար 69,230 և 66.167): Երիտասարդ կին աշխատողներն առավելություն ունեին երիտասարդ տղամարդ աշխատողների նկատմամբ նաև անժամկետ պայմանագրեր ունենալու առումով: Երիտասարդ տղամարդկանց գրեթե մեկ երրորդը (31.1 տոկոս) ուներ ժամկետային պայմանագիր՝ կին աշխատողների 17.6 տոկոսի համեմատ: Չնայած դրան, ավելի մեծ թվով երիտասարդ կանայք, քան տղամարդիկ ունեին 12 ամսից

պակաս տևողությամբ ժամկետային պայմանագրեր (համապատասխանաբար 59.7 տոկոս և 46.2 տոկոս):

Աղյուսակ 3.14 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողներն ըստ պայմանագրի տեսակի, սեռի և բնակավայրի

Պայմանագրի տեսակ	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ընդհանուր						
Գրավոր համաձայնություն	135 397	75.1	66 167	66.3	69 230	86.1
Բանավոր համաձայնություն	44 781	24.9	33 563	33.7	11 218	13.9
անժամկետ	134 961	74.9	68 672	68.9	66 289	82.4
ժամկետային	45 217	25.1	31 058	31.1	14 159	17.6
Մինչև 12 ամիս	22 793	50.4	14 335	46.2	8 457	59.7
12-ից 36 ամիս	16 315	36.1	11 593	37.3	4 721	33.3
36 ամսից ավելի	6 109	13.5	5 129	16.5	980	6.9
ընդհանուր	180 178	100.0	99 730	100.0	80 448	100.0
քաղաքային						
Գրավոր համաձայնություն	115 110	75.9	52 420	66.6	62 690	86.0
Բանավոր համաձայնություն	36 482	24.1	26 306	33.4	10 176	14.0
անժամկետ	112 333	74.1	53 091	67.4	59 242	81.3
ժամկետային	39 259	25.9	25 635	32.6	13 624	18.7
Մինչև 12 ամիս	20 016	51.0	11 890	46.4	8 126	59.6
12-ից 36 ամիս	15 321	39.0	10 751	41.9	4 570	33.5
36 ամսից ավելի	3 922	10.0	2 994	11.7	928	6.8
ընդհանուր քաղաքային	151 592	100.0	78 726	100.0	72 866	100.0
գյուղական						
Գրավոր համաձայնություն	20 287	71.0	13 747	65.5	6 540	86.3
Բանավոր համաձայնություն	8 299	29.0	7 256	34.5	1 042	13.7
անժամկետ	22 628	79.2	15 581	74.2	7 047	92.9
ժամկետային	5 958	20.8	5 422	25.8	535	7.1
Մինչև 12 ամիս	2 777	46.6	2 445	45.1	331	61.9
12-ից 36 ամիս	994	16.7	842	15.5	151	28.2
36 ամսից ավելի	2 188	36.7	2 135	39.4	53	9.9
ընդհանուր գյուղական	28 586	100.0	21 004	100.0	7 583	100.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև էական տարբերություններ չկային, կապված գրավոր կամ բանավոր պայմանագրեր ունեցող երիտասարդ աշխատողների թվի հետ, սակայն տարբերություններ կային, կապված պայմանագրերի ժամկետի հետ: Գյուղական բնակավայրերում պայմանագրերի ժամկետներն ավելի երկար էին: Գյուղական բնակավայրերում աշխատող կանայք գրեթե բոլորն ունեին անժամկետ աշխատանքային պայմանագիր (92.9 տոկոս): Քաղաքային բնակավայրերում նույն ցուցանիշը 81.3 տոկոս էր: Երիտասարդ տղամարդ աշխատակիցների շրջանում ևս անժամկետ պայմանագրեր ունեցողների թիվն ավելի մեծ էր գյուղական, քան քաղաքային բնակավայրերում, իսկ նրանց համար, ովքեր ունեին ժամկետային պայմանագրեր, գյուղական բնակավայրերում պայմանագրերի ժամկետն ավելի երկար էր: Ժամկետային պայմանագրեր ունեցող տղամարդ աշխատողների գրեթե երկու հինգերորդի (39.4 տոկոս) մոտ պայմանագրերի ժամկետը 36 ամսից

ավելի էր գյուղական բնակավայրերում, համեմատած քաղաքային բնակավայրերի 11.7 տոկոսի հետ:

Պատկեր 3.9-ը ամփոփ ներկայացնում է երիտասարդ աշխատողների նպաստներն ու արտոնությունները: Երեք տեսակի արտոնություններից օգտվում էին ինչպես երիտասարդ տղամարդկանց, այնպես էլ կանանց ավելի քան 50 տոկոսը. վճարովի ամենամյա արձակուրդ (տղամարդկանց 55.1 տոկոսը և կանանց 71.9 տոկոսը), սոցիալական ապահովության վճարներ (տղամարդկանց 52.9 տոկոսը և կանանց 73.1 տոկոսը), և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդ (տղամարդկանց 51.1 տոկոսը և կանանց 62.8 տոկոսը): Չորս այլ տեսակի նպաստներից օգտվում էր երիտասարդ վարձու և վարձատրվող աշխատողների ավելի քան 30 տոկոսը. լավ կատարողականի դիմաց հավելավճար (տղամարդկանց 33.1 տոկոսը և կանանց 36.9 տոկոսը), թոշակ (տղամարդկանց 30.0 տոկոսը և կանանց 39.5 տոկոսը), մայրության արձակուրդ (կանանց 47.9 տոկոսը), և աշխատանքի անվտանգության սարքավորումներ (տղամարդկանց 33.0 տոկոսը): Այլ նպաստների թվում, որոնցից սակայն ավելի քիչ երիտասարդ աշխատողներ էին օգտվում, ներառված էին հետևյալները. արձակման նպաստ (տղամարդկանց 16.1 տոկոսը և կանանց 22.9 տոկոսը), բժշկական ապահովագրություն (տղամարդկանց 13.6 տոկոսը և կանանց 24.2 տոկոսը), սննդի փոխհատուցում (տղամարդկանց 14,7 տոկոսը և կանանց 6,8 տոկոսը) և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում (տղամարդկանց 12.6 տոկոսը և կանանց 5,3 տոկոսը):

Ուշագրավ է, սակայն, որ խիստ մասնագիտացված աշխատանքներում կանանց բարձր ցուցանիշին համահունչ, նպաստներից և արտոնություններից օգտվող կանանց թիվը գրեթե միշտ ավելի բարձր է, քան տղամարդկանցը, բացառությամբ չորս տեսակի արտոնությունների, որոնք են՝ տրանսպորտային ծախսերի դիմաց փոխհատուցումը, սննդի դիմաց փոխհատուցումը, արտաժամյա աշխատանքի դիմաց հավելավճարը և աշխատանքի անվտանգության սարքավորումները:

Պատկեր 3.9 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողներն ըստ զբաղվածության նպաստների/արտոնությունների մատչելիության և սեռի



Ծանոթություն. Թույլատրվում էին մեկից ավելի պատասխաններ:
Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.5.3 Ինքնազբաղվածություն

Շուկայական տնտեսությանն անցման աստիճանական ընթացքից ավելի քան երկու տասնամյակ հետո, հարցված հայ երիտասարդ բնակչության շրջանում, առավել ցանկալի աշխատանք է ներկայացվել վարձու աշխատանքը, հատկապես հանրային հատվածում (երիտասարդ ուսանողների 45.5 տոկոսը ձգտում էր պետական աշխատանք ունենալ-Աղյուսակ 3.7): Արդյունքում, ինքնազբաղվածությունը երիտասարդների կողմից դիտվել է որպես մարգինալ զբաղվածության ճանապարհ: Աղյուսակ 3.10-ը ցույց է տալիս, որ երիտասարդ տղամարդկանց ընդամենը 10.5 տոկոսը և երիտասարդ կանանց 5.0 տոկոսն էին ինքնազբաղված կամ գործատու (համակցված): Աղյուսակ 3.15-ը բացահայտում է այն հիմնական պատճառները, որոնցից ելնելով երիտասարդներն ինքնազբաղված էին: Երեք պատճառ, որոնք նշվել են ինքնազբաղված երիտասարդների ընդհանուր թվի 68.3 տոկոսի կողմից, ցույց են տալիս ինքնազբաղվածության վերաբերյալ բավականին դրական տեսակետը, այն է՝ ավելի մեծ անկախության ցանկությունը (36.5 տոկոս), ավելի ճկուն աշխատանքային ժամերը (6.2 տոկոս) և ավելի մեծ եկամուտ վաստակելու հնարավորությունը (25.6 տոկոս): Ինքնազբաղված երիտասարդների 30.8 տոկոսը նշել է հարկադրված լինելու հետ կապված պատճառներ. 26.4 տոկոսը դիմել է ինքնազբաղվածության, քանի որ չի կարողացել գտնել վճարովի աշխատանք, իսկ 4.4 տոկոսը, որ այդպես է պահանջել իր ընտանիքը: Պարզվում է, որ ինքնազբաղվածությունն ավելի բացասաբար է դիտվում գյուղական բնակավայրերում, քանի որ երիտասարդ ինքնազբաղվածների ավելի մեծ մասը ինքնազբաղվածությունն ընտրել է որպես երկրորդ հնարավորություն, երբ ի

վիճակի չի եղել գտնել վճարովի աշխատանք, (36.3 տոկոսը, համեմատած քաղաքային բնակավայրերում 23.7 տոկոսի հետ):

Աղյուսակ 3.15 Ինքնազբաղված երիտասարդների բաշխումն ըստ ինքնազբաղվածության պատճառների և բնակության վայրի

պատճառը	ընդհանուրը		քաղաքային		գյուղական	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Չեն կարողանում գտնել լավ վարձատրվող աշխատանք	5 205	26.4	3 671	23.7	1 534	36.3
Ավելի մեծ անկախություն ունենալը	7 188	36.5	5 089	32.9	2 099	49.7
Ավելի ճկուն աշխատաժամանակ	1 218	6.2	1 101	7.1	117	2.8
Եկամտի ավելի բարձր մակարդակ	5 049	25.6	4 840	31.3	209	5.0
Ընտանիքի պահանջն է	865	4.4	772	5.0	93	2.2
Այլ	169	0.9	0	0.0	169	4.0
Ինքնազբաղվածների ընդհանուր թիվը	19 694	100.0	15 473	100.0	4 221	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

3.5.4 Աշխատաժամեր և ոչ կամավոր ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանք

Պատկեր 3.10-ը ցույց է տալիս երիտասարդ հայաստանցիների զբաղվածությունն ըստ մեկ շաբաթվա ընթացքում փաստացի աշխատած ժամերի: Տվյալները հանգեցնում են այն եզրակացության, որ հարցված երիտասարդ աշխատողները երկար են աշխատում: Երիտասարդների գրեթե կեսը (երիտասարդ տղամարդկանց 43.0 տոկոսը և կանանց 44.4 տոկոսը) աշխատում էր շաբաթական 40-ից 49 ժամ: Երիտասարդ տղամարդկանց 32.3 տոկոսը և երիտասարդ կանանց 17.1 տոկոսն աշխատում էին «արտաժամ», որը սահմանվում է, որպես շաբաթական ավելի քան 50 ժամ: Այս համակցված տվյալները ցույց են տալիս, որ տղամարդկանց 75.3 տոկոսը և կանանց 61.5 տոկոսը աշխատում էին շաբաթական ավելի քան 40 ժամ: Մյուս կողմից, տվյալները ցույց են տալիս, որ կին աշխատողների 19.5 տոկոսը և տղամարդ աշխատողների 10.4 տոկոսը «կարճ», կամ շաբաթական 20 ժամից պակաս էին աշխատում:

Ընդհանուր առմամբ, երիտասարդների միայն 21.0 տոկոսն էր աշխատում ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ, այսինքն՝ շաբաթական 30 ժամից պակաս (երիտասարդ կանանց 28.1 տոկոսը և երիտասարդ տղամարդկանց 16.1 տոկոսը): Ոչ լրիվ զբաղվածությամբ աշխատանքը կարող է դրական լինել, երբ կամավոր է, օրինակ, երիտասարդներին հնարավորություն տալով համատեղել աշխատանքը և կենցաղային պարտականությունները: Սակայն, երբ կամավոր չէ, կես դրույքով աշխատանքը կարող է լինել երիտասարդ աշխատողների ոչ լրիվ օգտագործման մեկ այլ արտահայտություն: Հարկադրաբար կես-դրույքով աշխատողների միջին ցուցանիշը, ովքեր աշխատում էին շաբաթական 35 ժամից պակաս, և ցանկություն էին հայտնում ավելի երկար աշխատել, զբաղված երիտասարդների ընդհանուր ցուցանիշում կազմում էր 9.5 տոկոս (երիտասարդ կանանց 13.7 տոկոսը և երիտասարդ տղամարդկանց 6.5 տոկոսը):

Պատկեր 3.10 Երիտասարդների զբաղվածությունն ըստ շաբաթական փաստացի աշխատած ժամերի և սեռի



Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

3.5.5 Աշխատավարձ

Աղյուսակ 3.16-ը ցույց է տալիս, որ երիտասարդ վարձու աշխատողները, որոնք միջնակարգ դպրոցից հետո չէին շարունակել ուսումը, ավելի շատ էին վաստակում, քան բարձրագույն կրթություն ստացած աշխատողների միջին աշխատավարձն էր: Համալսարանական կրթություն ունեցող երիտասարդ աշխատողը վաստակում էր ամսական 91.520 ՀՀ դրամ, իսկ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդ աշխատողը՝ ամսական 106.740 ՀՀ դրամ:[8] Աշխատավարձի հետ կապված նույն անբարենպաստ պայմանն ակնհայտ էր ինքնազբաղված երիտասարդների շրջանում, որտեղ բարձրագույն կրթություն ունեցողների միջին ամսական աշխատավարձը կազմում էր 65.578 ՀՀ դրամ, իսկ միջնակարգ կրթություն ունեցողներինը՝ 75.772 ՀՀ դրամ:

Երիտասարդ տղամարդիկ ստանում էին ավելի բարձր աշխատավարձ, քան կանայք բոլոր ոլորտներում և երկու կրթական մակարդակներում միասին: Երիտասարդ տղամարդ աշխատողը, միջին հաշվով, մեկ ու կես անգամ ավելի էր վաստակում, քան կին աշխատողը: Աշխատավարձի այդ գենդերային ճեղքվածքը նույնիսկ ավելի մեծ էր ինքնազբաղված երիտասարդների շրջանում: Տղամարդ ինքնազբաղված աշխատողն ինքնազբաղված կնոջից մոտ երեք անգամ ավելի էր վաստակում (համապատասխանաբար 80.710 ՀՀ դրամ և 26.920 ՀՀ դրամ):

[8] 2012 թ. հոկտեմբերի 1-ին (հետազոտության դաշտային աշխատանքների ժամանակ) ՄԱԿ-ում գործող փոխարժեքը եղել է 407 ՀՀ դրամ = 1 ԱՄՆ դոլար: Հետևաբար, Հայաստանում երիտասարդ աշխատողի միջին աշխատավարձը համարժեք էր ամսական 229,54 ԱՄՆ դոլարին: Վճարովի զբաղվածությամբ համալսարանական շրջանավարտը վաստակում էր ամսական 224,86 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Աղյուսակ 3.16 Գործարքային և հաստիքային վարձատրությամբ երիտասարդ աշխատողների և ինքնազբաղվածների միջին ամսական աշխատավարձն ըստ սեռի և կրթության մակարդակի (ՀՀ դրամով):

Կրթական մակարդակ	Վարձու աշխատողներ			ինքնազբաղվածներ		
	ընդհանուր	տղամարդ	կին	ընդհանուր	տղամարդ	կին
միջնակարգ	106 740	116 526	65 937	75 772	106 288	32 749
բարձրագույն	91 520	115 200	76 651	65 578	145 315	31 729
ընդհանուր	93 423	110 107	73 607	51 270	80 710	26 920

Ծանոթություն. Տարրական և միջին մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդ աշխատողների աշխատավարձերը չեն նշվել՝ պատասխանողների փոքր թվով և արդյունքում անհուսալի գնահատումներով պայմանավորված: *Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Աղյուսակ 3.17-ը ներկայացնում է մանրամասներ երիտասարդ վարձու աշխատողների ամսական աշխատավարձերի վերաբերյալ, ըստ զբաղվածության և սեռի: Այս աղյուսակը ցույց է տալիս այն աշխատանքները, որոնց դիմաց ավելի շատ էին վարձատրում հարցված երիտասարդներին և ավելի մանրամասն է բացահայտում աշխատավարձի գենդերային տարբերությունները: Դիտարկումներից մեկն այն է, որ ոչ բոլոր բարձր որակավորում պահանջող զբաղվածությունների համար է ավելի բարձր վճարվում՝ բարձր որակավորում չպահանջող զբաղմունքների համեմատ (դրանով իսկ նպաստելով կրթության մակարդակի աճի հետ միջին աշխատավարձի նվազմանը, ինչպես ցույց է տրված աղյուսակի 3.16-ում): Աշխատավարձերը բարձր էին կառավարչական և մասնագիտական զբաղմունքների համար, ընդ որում, միջին ամսական աշխատավարձը կազմում էր համապատասխանաբար 126.544 ՀՀ դրամ և 86.768 ՀՀ դրամ: Սակայն աշխատավարձը նվազում էր մինչև 75.307 ՀՀ դրամ՝ տեխնիկական աշխատողների և օժանդակ մասնագետների համար, մինչդեռ սարքերի և մեքենա-մեխանիզմների օպերատորները, գյուղատնտեսական աշխատողները և արհեստագործները հնարավորություն ունեին վաստակելու նույնիսկ ավելին, քան մասնագետները՝ ամսական համապատասխանաբար 106.484 ՀՀ դրամ, 90.693 ՀՀ դրամ և 91.303 ՀՀ դրամ: Պարզունակ գործունեություն ծավալողները, ինչպես և ակնկալվում էր, ամենացածր վարձատրվողներն էին՝ ամսական 69.715 ՀՀ դրամ: Մտահոգիչ է, որ պարզունակ զբաղվածություն ունեցող երիտասարդ կին աշխատողների միջին ամսական աշխատավարձը նույնիսկ ավելի ցածր էր, քան երկրում սահմանված նվազագույն աշխատավարձը՝ ամսական 45.000 դրամ:[9]

Երիտասարդ կին աշխատողների շրջանում մասնագիտական զբաղվածությունը տալիս էր ամենաբարձր վաստակելու հնարավորությունը՝ ամսական 85.208 ՀՀ դրամ, չնայած, որ այդ աշխատավարձը դեռևս ցածր էր երիտասարդ տղամարդ մասնագետի միջին ամսական աշխատավարձից: Ի դեպ, երիտասարդ կին աշխատողները բոլոր զբաղմունքներում էին վաստակում ավելի քիչ, քան նրանց տղամարդ գործընկերները, ընդ որում

[9] ՀՀ օրենքը ՛՛Նվազագույն ամսական աշխատավարձի մասին՛՛ ընդունվել է 2013թ. հուլիսին:

տարբերությունները հատկապես մեծ էին ղեկավարների, գրասենյակային աշխատողների և սարքավորումների և մեքենաների օպերատորների դեպքում:

Աղյուսակ 3.17 Վարձատրվող երիտասարդների բաշխումն ըստ զբաղվածության, սեռի և միջին ամսական աշխատավարձի (ՀՀ դրամով):

ոլորտ	Ամսական աշխատավարձ		
	ընդհանուր	տղամարդ	կին
Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	126 544	159 122	83 079
Մասնագետներ	86 768	92 362	85 208
Տեխնիկներ և օգնականներ	75 307	86 115	67 72
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	70 360	103 179	60 456
Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	76 743	89 140	63 017
գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ	90 693	94 836	78 087
Արհեստավորներ	91 303	92 578	72 726
Մեքենավարներ	106 484	115 588	68 916
Տարրական զբաղվածություն	69 715	73 333	44 513
միջին	93 423	110 107	73 607

Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Երիտասարդ աշխատողների աշխատավարձի վերաբերյալ կարելի է երկու ընդհանուր հետևություն անել: Նախ, ի տարբերություն շատ այլ երկրների, որտեղ բարձրագույն կրթության մեջ ներդրումներն ակնհայտորեն վերադարձվում են, Հայաստանում հարցված երիտասարդների համար հստակ դրամային վերադարձ չկար: Երկրում վաստակելու ցածր հնարավորությունն, անկասկած, արտագաղթը խթանող ուժեղ գործոն է, ուղեղների արտահոսքի երևույթի բացասական հետևանքներով հանդերձ: Երկրորդ, աշխատավարձի գենդերային տարբերությունը չափազանց մտահոգիչ է և կարիք ունի քաղաքականության միջամտության:

3.5.6 Ոչ ֆորմալ զբաղվածություն

Հարցման տվյալները ցույց են տալիս, որ հայաստանյան աշխատաշուկայի տարածված բնութագրերից մեկը ոչ ֆորմալ զբաղվածությունն էր: Երիտասարդ աշխատողների գրեթե երկու երրորդը (64.2 տոկոս) ոչ-ֆորմալ աշխատողներ էին:[10] Ոչ ֆորմալ զբաղվածությունը կազմված է երկու ենթադասերից՝ ոչ ֆորմալ

[10] Ոչ ֆորմալ զբաղվածությունը չափվում է համաձայն Զբաղվածության վիճակագիրների 17-րդ միջազգային կոնֆերանսի ուղեցույցի: Այն ներառում է աշխատողների հետևյալ ենթադասերը. (ա) «ոչ ֆորմալ զբաղվածության» վճարվող աշխատողներ, այսինքն, առանց սոցիալական ապահովության իրավունքի, վճարովի ամենամյա արձակուրդի կամ հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդի իրավունքի աշխատանքներ (բ) հինգից պակաս աշխատող ունեցող չգրանցված ձեռնարկության վճարովի աշխատողներ. (գ) սեփական հաշվին աշխատողների չգրանցված ձեռնարկության ինքնազբաղվածներ (դ) հինգից պակաս աշխատողներ ունեցող չգրանցված ձեռնարկության գործատուներ. և (ե) չվճարվող ընտանեկան աշխատողներ:

(չգրանցված) հատվածի աշխատողներ և ֆորմալ ոլորտում ոչ-ֆորմալ աշխատանք ունեցող վարձու աշխատողներ: Վերջին դասին պատկանողներն ստանում են աշխատավարձ, սակայն չեն օգտվում սոցիալական ապահովության վճարներից կամ վճարովի ամենամյա կամ հիվանդության պատճառով արձակուրդներից: Պատկեր 3.11-ը ցույց է տալիս Հայաստանում հարցված երիտասարդների ոչ ֆորմալ զբաղվածության իրավիճակի պատկերը: Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդ տղամարդ աշխատողների 67.7 տոկոսը և երիտասարդ կին աշխատողների 58.9 տոկոսը ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում էին:

Ոչ ֆորմալ զբաղվածության իրավիճակը մասնավորապես տարբերվում էր գյուղական և քաղաքային բնակավայրերում: Գյուղական բնակավայրերում, աշխատողների 82.2 տոկոսն ուներ ոչ ֆորմալության շատ ավելի բարձր աստիճան, համեմատած քաղաքային բնակավայրերում 58.1 տոկոսի հետ: Միևնույն ժամանակ, ոչ ֆորմալ զբաղվածության կազմը տարբերվում էր ըստ աշխարհագրության: Գյուղական բնակավայրերում ոչ ֆորմալ զբաղվածությունը հիմնականում չգրանցված ձեռնարկություններում զբաղվածությունն էր (ընդհանուր ֆորմալ զբաղվածության 68.5 տոկոսը), մինչդեռ քաղաքային բնակավայրերում, ոչ ֆորմալ զբաղվածությունը հիմնականում ֆորմալ ոլորտում ոչ ֆորմալ ներգրավվածությունն էր (ընդհանուր ոչ ֆորմալ զբաղվածության 77.7 տոկոսը):

Պատկեր 3.11 Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ զբաղված երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, սեռի և բնակավայրի



Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կառավարության համար անհրաժեշտ կլինի անդրադառնալ ոչ ֆորմալ զբաղվածության հարցին: Սակայն, դա պետք է անել աստիճանաբար, ձգտելով պահպանել դինամիկ մասնավոր հատվածի աշխատանքային ներուժը, միևնույն ժամանակ ներմուծելով միջոցներ, որոնք պարտադիր կդարձնեն ձեռնարկությունների գրանցումն ու հնարավորություն կտան աշխատողներին օգտվել հիմնական արտոնություններից, ինչպիսիք են, սոցիալական ապահովությունն ու վճարովի՝ ամենամյա և հիվանդության հետ կապված արձակուրդները: Ավելի շատ հայտարարագրված գործունեության հետևանքով աճող հարկային

եկամուտները կարող են վերաօգտագործվել աշխատանքի տեսչությունների ֆինանսավորման համար՝ որպեսզի հնարավոր լինի ավելի լավ իրականացնել աշխատողների պաշտպանությունն ու գործատուների կողմից արժանապատիվ աշխատանքային պայմանների նվազագույն պահանջների ապահովումը:

3.5.7 Որակավորումների անհամապատասխանությունը

Անձի կողմից կատարվող աշխատանքի և նրա կրթական որակավորման միջև անհամապատասխանությունը չափելու միջոցներից մեկը Զբաղմունքների դասակարգման միջազգային չափորոշիչով (ISCO) (ILO, 2013թ.) սահմանված՝ մասնագիտական հմտությունների դասերի նորմատիվային չափումների կիրառումն է: ISCO-08-ը ներառում է կարևոր զբաղմունքների խմբերի դասակարգումը (ISCO առաջին մակարդակ)՝ ըստ կրթության մակարդակի՝ համաձայն Կրթության դասակարգման միջազգային չափորոշչի (ISCED). այն բերված է Աղյուսակ 3.18-ում:

Աղյուսակ 3.18 ISCO խոշոր խմբերը և կրթության մակարդակները

ISCO կարևոր խումբը	Զբաղմունքների լայն ընդգրկվածության խումբ	Կրթական մակարդակ
կառավարիչներ Մասնագետներ Տեխնիկներ և օգնականներ	Բարձր որակավորումպահանջող, ոչ ձեռքի աշխատանք	բարձրագույն (ISCED 5–6)
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	Ցածր որակավորման, ոչ ձեռքի աշխատանք	միջնակարգ (ISCED 3–4)
գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ Արհեստավորներ Մեքենավարներ, օպերատորներ	Որոշակի հմտությամբ՝ ձեռքի աշխատանք	
Տարրական (պարզունակ) զբաղվածություն	Որոշակի հմտություն չպահանջող	տարրական (ISCED 1–2)

Աղբյուր՝: ԱՄԿ, 2013թ., Աղյուսակ 3

Որոշակի խմբին դասվող աշխատողները, որոնք ունեն կրթության պահանջվող մակարդակը, համարվում են լավ համապատասխանող: Նրանք, ովքեր ունեն կրթության ավելի բարձր մակարդակ, համարվում են գերկրթված, և նրանք, ովքեր ունեն կրթության ավելի ցածր մակարդակ, համարվում են թերկրթված: Օրինակ, համալսարանի շրջանավարտը, որն զբաղված է գրասենյակային աշխատանքով (ցածր որակավորում պահանջող մտավոր աշխատանք), գերկրթված է, իսկ միջնակարգ դպրոցի շրջանավարտը, որն աշխատում է որպես ինժեներ (բարձր որակավորում պահանջող մտավոր աշխատանք), թերկրթված է:

Հայաստանում երիտասարդների վերաբերյալ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդ աշխատողների մեծ մասն այնպիսի աշխատանք էր կատարում, որը համապատասխանում էր նրանց

կրթական մակարդակին (66.9 տոկոս), գերկրթվածների ցուցանիշը 21,5 տոկոս էր, իսկ թերկրթվածներինը՝ 11.6 տոկոս (Աղյուսակ 3.19): Արդյունքները, մասամբ, արտացոլում էին երկրում երիտասարդների կրթության բարձր մակարդակը:

Գերկրթվածության երևույթը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կրթության որոշակի մակարդակին համապատասխանում են անբավարար թվով աշխատատեղեր: Առաջարկի և պահանջարկի միջև անհամապատասխանությունն ստիպում է որոշ կրթության բարձր մակարդակ ունեցողների՝ ընդունել մատչելի աշխատանքը, որի կատարման համար իրենք ունեն անհրաժեշտից բարձր որակավորում: Հայաստանում, հաշվի առնելով, որ գրեթե բոլոր երիտասարդներն ունեին տարրականից բարձր կրթություն, զարմանալի չէ, որ տարրական զբաղվածություն ունեցող երիտասարդների 99.6 տոկոսը գերկրթված էին իրենց աշխատանքի համար: Պահանջվածից ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդների ցուցանիշը, որոնք աշխատում էին որպես գրասենյակային աշխատող և սպասարկման ու առևտրի ոլորտի աշխատողներ (համապատասխանաբար 68.6 տոկոս և 33.6 տոկոս) արտացոլում է այն անբարենպաստ իրականությունը, որի պայմաններում համալսարանի շրջանավարտներն ի վիճակի չեն օգուտ ստանալ իրենց կրթությունից և գտնել այնպիսի աշխատանք, որ հնարավորություն կտար ավելի բարենպաստ օգտագործել իրենց կրթությունը: Հետևանքն այն է, որ գերկրթված երիտասարդներն ավելի քիչ էին վաստակում, քան այլ պարագայում կարող էին վաստակել, և լիարժեք չէին իրացնում իրենց արդյունավետ ներուժը:

Աղյուսակ 3.19 Գերկրթված և թերկրթված երիտասարդ աշխատողների բաշխումն ըստ խոշոր մասնագիտական դասերի (ISCO-08, տոկոս)

Զբաղմունքների խոշոր խումբը (ISCO-08)	գերկրթվածներ	թերկրթվածներ	Որակավորման համապատասխանությունը
1. Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	0.0	32.0	68.0
2. Մասնագետներ	0.0	6.9	93.1
3. Տեխնիկներ և օգնականներ	0.0	58.6	41.4
4. Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	68.6	0.0	31.4
5. Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	33.6	0.0	66.4
6. գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ	4.1	0.0	95.9
7. Արհեստավորներ	7.1	1.8	91.2
8. Մեքենավարներ, օպերատորներ	10.2	0.0	89.8
9. Տարրական զբաղվածություն	99.6	0.0	0.4
ընդհանուր	21.5	11.6	66.9

Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Զարմանալի չէ, որ թերկրթվածությունը հիմնականում կենտրոնացված էր այն մասնագիտությունների շրջանում, որոնց համար պահանջվում է հմտությունների ավելի բարձր մակարդակ: Երիտասարդ կառավարիչների 32.0 տոկոսը, երիտասարդ տեխնիկական աշխատողների և հարակից

մասնագետների[11] 58.6 տոկոսը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների 6.9 տոկոսը չունեին իրենց աշխատանքի համար պահանջվող անհրաժեշտ կրթական մակարդակ: Աշխատողների թերկրթվածությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ աշխատանքի արտադրողականության վրա և տնտեսական աճի էական խոչընդոտ հանդիսանալ, բայց կարող է նաև ազդել երիտասարդ աշխատողների վրա՝ նրանց ինքնավստահության առումով:

3.5.8 Ապահովություն և բավարարվածություն

Այս բաժնում դիտարկվող տվյալները ներկայացնում են Հայաստանում երիտասարդների զբաղվածության ինչպես որակի, այնպես էլ քանակի հակասական պատկերը: Մի կողմից, այդ տվյալները վկայում են, որ զբաղվածության առավել կայուն ձևը, այսինքն վարձու աշխատանքը, լայնորեն տարածված էր ինչպես երիտասարդ տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում: Հարցված երիտասարդները շատ լավ կրթված էին, գրեթե բոլորը ստացել էին առնվազն միջնակարգ կրթություն: Մեծ մասն ուներ ֆորմալ, անժամկետ պայմանագրեր, ինչպես նաև մի շարք կարևոր արտոնություններ, ինչպիսիք են կենսաթոշակային կամ սոցիալական ապահովության վճարները:

Այլ ցուցանիշները, սակայն, խոսում են պակաս դրական իրավիճակի մասին: Երիտասարդ աշխատողների մեծամասնությունն աշխատում էր արտաժամ, հինգից ավելի քան մեկը գերկրթված էր այն աշխատանքի համար, որն ինքը կատարում էր, մեկ քառորդը չուներ գրավոր պայմանագիր, մեծամասնությունը ոչ ֆորմալ աշխատողներ էին, իսկ ցածր աշխատավարձը երիտասարդ աշխատողների համար մնում էր լուրջ մտահոգության խնդիր: Բավական տարօրինակ է, որ չնայած երիտասարդների զբաղվածության որակի այս պակասուրդին, երիտասարդների մի մեծ մասը նշել է, որ բավարարված է իր ներկայիս աշխատանքով, աշխատող երիտասարդների 77.9 տոկոսն ասել է, որ ինքը կա՛մ հիմնականում բավարարված է, կա՛մ շատ գոհ է իր աշխատանքից (տղամարդկանց 77.1 տոկոսը և կանանց 79.0 տոկոսը):

Այնուամենայնիվ, շատ երիտասարդներ՝ բոլոր երիտասարդ աշխատողների 48.1 տոկոսը հայտարարել է, որ ցանկություն ունի փոխելու իր աշխատանքը՝ Աղյուսակ 3.20-ում թվարկված պատճառներով: Որպես աշխատանքը փոխելու հիմնական շարժառիթ է նշվել ցածր աշխատավարձը (երիտասարդ տղամարդկանց 61.7 տոկոսը և երիտասարդ կանանց 56.7 տոկոսը): Աշխատանքի ժամանակավոր բնույթը աշխատանքը փոխել ցանկանալու մեկ այլ պատճառ է, մասնավորապես, երիտասարդ տղամարդկանց համար (20.7 տոկոս՝ երիտասարդ կանանց 12.2 տոկոսի համեմատ): Կին աշխատողների համար, սակայն, աշխատանքը փոխելու ցանկության երկրորդ հիմնական

[11] Կարելի է պնդել, որ ISCO-ի հիման վրա Աղյուսակ 3.18-ում բերված կրթություն-զբաղվածություն ցուցանիշներն անիրատեսականորեն են բարձրագույն կրթություն պահանջում այն անձանց համար, ովքեր ներգրավված են տեխնիկական աշխատանքներում (լաբորատոր տեխնիկական աշխատողներն, օրինակ): Քանի որ Հայաստանում և բոլոր մյուս ԱԴԱՀ երկրներում տվյալները թերկրթվածության բարձր ցուցանիշ են նշում այս զբաղվածության խմբի համար, հավանական է, որ այդ դասակարգումը կարող է ապագայում վերանայվել, և իջեցվել միջնակարգ դպրոցի ավելի իրատեսական մակարդակի:

պատճառը որակավորման անհամապատասխանությունն էր, այսինքն, իրենց որակավորումն ավելի արդյունավետ օգտագործելու ցանկությունը, որը նշվել է 20.0 տոկոսի կողմից (սակայն տղամարդ աշխատողների միայն 5.7 տոկոսի կողմից):

Մյուս պատճառներից (այդ թվում, ներկա աշխատանքը կորցնելու վախը և աշխատանքի վայրի անհարմարությունը) յուրաքանչյուրը հավաքել է 10 տոկոսից պակաս պատասխաններ: Ակնհայտ է, որ ցածր աշխատավարձը և որակավորման անհամապատասխանությունն աշխատող երիտասարդների ամենամեծ մտահոգություններն էին: Հետաքրքրական է, սակայն, որ երիտասարդների միայն 14.7 տոկոսը, որ հայտարարել էր, թե ցանկություն ունի փոխել աշխատանքն, ըստ էության, փորձել էր նոր աշխատանք փնտրել նախորդ չորս շաբաթվա ընթացքում: Այստեղ կասկածի տեղիք է տալիս այն, որ երիտասարդ աշխատողներն իրատեսական տեսակետ պատկերացում ունեին աշխատաշուկայի սահմանափակության վերաբերյալ, հաշվի առնելով գործազրկության կայուն բարձր ցուցանիշները և, հետևաբար, նախընտրում էին մնալ իդեալականից ցածր որակի աշխատատեղերում, քան գործազուրկ դառնալ:

Աղյուսակ 3.20 Աշխատանքը փոխել ցանկացող զբաղված երիտասարդների բաշխումն ըստ հիմնական պատճառի և սեռի

պատճառը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Ներկա աշխատանքը ժամանակավոր է	19 864	17.2	14 055	20.7	5 809	12.2
Վախենում է կորցնել աշխատանքը	1 611	1.4	905	1.3	705	1.5
Ավելի բարձր վարձատրվող աշխատանք	68 998	59.6	41 901	61.7	27 098	56.7
Որակավորման/հմտությունների ավելի լավ օգտագործելը	13 436	11.6	3 859	5.7	9 577	20.0
Ավելի հարմար աշխատանքային ժամեր ունենալը	10 104	8.7	7 010	10.3	3 094	6.5
Աշխատանքային պայմանների բարելավումը	1 681	1.5	160	0.2	1 521	3.2
Ընդհանուր	115 695	100.0	67 891	100.0	47 804	100.0

Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Երիտասարդների զբաղվածության ակնկալիքները պատկերացնելու մեկ այլ միջոց է երիտասարդ աշխատողների կողմից աշխատանքի նախկին առաջարկներից հրաժարվելու պատճառների ուսումնասիրությունը: Ընդհանուր առմամբ, հարցված երիտասարդ աշխատողների 35.5 տոկոսը նշել է, որ իրենք հրաժարվել են աշխատանքի առաջարկից: Այստեղ, կրկին, աշխատավարձը հիմնական մտահոգությունն էր, հատկապես երիտասարդ տղամարդկանց շրջանում: Աշխատանքի առաջարկը մերժած երիտասարդ տղամարդկանց ավելի քան երեք քառորդը (76.7 տոկոս) որպես պատճառ նշել են ցածր աշխատավարձը. նույն պատճառը նշել են երիտասարդ կանանց 45.1 տոկոսը (Աղյուսակ 3.21): Որակավորումների համապատասխանության

կարևորությունը կրկին ակնհայտ էր երիտասարդ կանանց համար, որոնց 18.2 տոկոսը աշխատանքի առաջարկից հրաժարվել էր այս պատճառով. նույն պատճառը նշվել էր երիտասարդ տղամարդկանց ընդամենը 3.8 տոկոսի կողմից: Երիտասարդ կանանց կողմից աշխատանքի ընտրության գործընթացում դեր էր խաղում նաև ընտանիքի ազդեցությունը: Կին աշխատողների 9.1 տոկոսը նշել է, որ իրենք հրաժարվել են աշխատանքի նախորդ առաջարկից, քանի որ այն դուր չէր գալիս իր ընտանիքին:

Աղյուսակ 3.21 Աշխատանքի առաջարկը մերժած զբաղված երիտասարդների բաշխումն ըստ պատճառների և սեռի

պատճառը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Ցածր վարձատրություն	55 098	64.5	40 236	76.7	14 862	45.1
Անհետաքրքիր աշխատանք	6 065	7.1	2 906	5.5	3 159	9.6
Անհարմար աշխատավայր	2 892	3.4	1 066	2.0	1 826	5.5
Աշխատանքը որակավորմանը չի համապատասխանում	7 991	9.4	1 982	3.8	6 009	18.2
Պահանջվում էր արտաժամյա աշխատանք	2 327	2.7	813	1.6	1 514	4.6
Ընտանիքը չէր հավանում առաջարկվող աշխատանքը	3 690	4.3	708	1.4	2 982	9.1
Ավելի լավ աշխատանքի է սպասում	4 736	5.5	3 340	6.4	1 396	4.2
Պայմանագրի ժամկետ չէր առաջարկվում կամ առաջարկվում էր շատ կարճ ժամկետ	1 618	1.9	537	1.0	1 081	3.3
Առաջխաղացման հնարավորություններ չէր տեսնում	956	1.1	845	1.6	111	0.3
ընդհանուր	85 373	100.0	52 433	100.0	32 940	100.0

Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Չնայած, որ ԱԴԱ հետազոտությունը լայն տեղեկատվություն է տրամադրում աշխատանքի որակի մասին, այլ ասպեկտներ ևս պետք է հաշվի առնվեն: Ինչպես ներկայացված է հաջորդ բաժնում, հարցված հայ երիտասարդները տուժում են գործազրկության բարձր մակարդակից: Այս փաստը, զուգորդելով համատարած ոչ ֆորմալ զբաղվածության հետ, լրջորեն խաթարել է երիտասարդների դիրքն աշխատաշուկայում՝ նրանց անպաշտպան դարձնելով գործատուների չարաշահումների հանդեպ, ովքեր օգուտ են քաղում աշխատանքի մեծ (հնարավոր է հուսահատ) ռեզերվից: ԱՄԿ Արժանապատիվ աշխատանքի ազգային նկարագիրն (ԱՄԿ, 2012թ.) ընդգծում է այն փաստը, որ գործատուները հաճախ կարող են թելադրել այն անձանց աշխատանքային պայմանները, ում իրենք վարձում են, որոնցից շատերն իրավական կամ սոցիալական տեսանկյունից պաշտպանված չեն: Բացի այդ, ԱՄԿ-ը հայտնում է աշխատանքի տեղավորման գործակալությունների կողմից աշխատանքի ընդունվելու ավելի ու ավելի հաճախակի դարձած գործելակերպի մասին, ինչը բարձրացնում է աշխատանքի անհուսալիությունը: Գործելակերպի մի ձև է մարդկանց տասից երեսուն օրվա փորձաշրջանով աշխատանքի վերցնելը, ապա առանց վճարելու նրանց աշխատանքից ազատելը: Քանի որ փորձաշրջանն իրավաբանորեն չի գրանցվում, աշխատողները չեն կարող հատուցում պահանջել աշխատած օրերի դիմաց: Այս մարտավարությունն ակնհայտորեն հատկապես տարածված է այնպիսի սպասարկման ոլորտներում, ինչպիսիք են ռեստորանները և սրճարանները, որտեղ այն հիմնականում բացասաբար է

ազդում սպասք լվացողների, խոհարարի օգնականների և մատուցողների վրա (ԱՄԿ, 2012բ, էջ 28): Քանի որ այսպիսի աշխատանքների համար վարձվում են շատ երիտասարդներ, նրանք հատկապես խոցելի են այդ գործելակերպի նկատմամբ:

3.6 Գործազուրկ երիտասարդներ

Գործազրկությունը լուրջ խնդիր է Հայաստանի երիտասարդների համար: Ընդհանուր առմամբ, հետազոտության ժամանակ երիտասարդության շրջանում գործազրկության ցուցանիշը 30.2 տոկոս էր, 24.6 տոկոս՝ երիտասարդ տղամարդկանց և 36.6 տոկոս՝ երիտասարդ կանանց շրջանում: Ինչպես նշվեց բաժին 1.2-ում, Հայաստանում երիտասարդների գործազրկության ցուցանիշը շատ ավելի բարձր է համաշխարհային միջին ցուցանիշից, և ավելի բարձր է, քան տարածաշրջանի շատ այլ երկրներում:

Գործազրկության խիստ սահմանումը նշում է, որ «գործազուրկ» կարգավիճակ ստանալու համար անձը պետք է լինի առանց աշխատանքի, պատրաստակամ լինի աշխատելու և ակտիվորեն աշխատանք փնտրի: «Ակտիվորեն աշխատանք փնտրել» չափանիշի մեղմացումն իմաստ ունի այն հանգամանքներում, երբ աշխատանք փնտրելու ավանդական միջոցները սահմանափակ նշանակություն ունեն, երբ աշխատուժի շուկան հիմնականում անկազմակերպ է, երբ աշխատուժի կլանումն անբավարար է կամ երբ աշխատուժը հիմնականում ինքնազբաղված է: Գործազրկության սահմանումը մեղմացնելու արդյունքում երիտասարդների գործազրկության ցուցանիշը Հայաստանում ավելացավ 5 տոկոսային կետով, մինչև 35.4 տոկոս (տղամարդկանց 27.6 տոկոսը և կանանց 43.7 տոկոսը):

Պատկեր 3.12 Երիտասարդների գործազրկության ցուցանիշներն ըստ ստացած կրթության մակարդակի և սեռի



Ծանոթություն. Կրթական մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Ըստ կրթական մակարդակի գործազրկության ուսումնասիրությունը (այն երիտասարդների շրջանում, ովքեր ավարտել են ուսումը, առանց հաշվի առնելու տարրական մակարդակի կրթությունը, քանի որ թվերը փոքր էին) հաստատում է, որ կանայք պարբերաբար հայտնվում էին ավելի վատ վիճակում, քան տղամարդիկ (Պատկեր 3.12): Երիտասարդ կանանց գործազրկության մակարդակը գերազանցում էր տղամարդկանցը, անկախ կրթական մակարդակից: Երիտասարդ կանանց շրջանում, ինչպես միջնակարգ դպրոցի շրջանավարտները, այնպես էլ համալսարանի շրջանավարտները բախվում էին գործազրկության բարձր հավանականության խնդրին (համապատասխանաբար 33.6 տոկոս և 33.9տոկոս): Աշխատանք գտնելում միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդ տղամարդկանց վիճակը լավագույնն էր՝ համեմատած երիտասարդ կանանց և բարձրագույն կրթությամբ երիտասարդ տղամարդկանց հետ: Նրանց գործազրկության մակարդակն ամենացածրն էր՝ 17,4 տոկոս: Բացի այդ, հարկ է նշել գործազրկության չափազանց բարձր ցուցանիշը՝ միջին մասնագիտական կրթությամբ երիտասարդների շրջանում (նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացածների 46.0 տոկոսը և միջին մասնագիտական կրթություն ստացածների 45.1 տոկոսը):

Հետաքրքրական է համեմատել այն աշխատանքները, որոնց համար ամենաշատն էին դիմում գործազուրկ երիտասարդները, ինչպես նաև այն աշխատանքները, որոնցում ամենաշատն էին ներգրավված զբաղված երիտասարդները: Եթե հարցված աշխատող երիտասարդների մասնագիտական բաշխվածությունն ընդունենք որպես երիտասարդ աշխատուժի պահանջարկի ցուցանիշ, այսինքն, որպես ցուցանիշ, թե որտեղ կան աշխատատեղեր, իսկ այն աշխատատեղերի բաշխվածությունը, որոնց համար դիմում էին գործազուրկ երիտասարդները՝ որպես աշխատանքի առաջարկի ցուցանիշ, ապա այս երկուսի համեմատությունը կծառայի առաջարկի և պահանջարկի հնարավոր անհամապատասխանությունը բացահայտելուն: Այսպիսով, Պատկեր 3.13-ը համատեղում է մասնագիտական զբաղվածության և գործազուրկների կողմից պահանջված աշխատատեղերի տվյալները՝ ըստ աշխատանքների զբաղվածության անհավասարակշռության ցուցանիշը (ինչպես, օրինակ, կադրերի գերառաջարկը կամ պակասուրդը) բացահայտելու համար: Աջ կողմի հատվածները, այսինքն, դրական արժեքները, մատնանշում են կադրերի հնարավոր գերառաջարկով աշխատանքները, այսինքն, այն աշխատանքները, որտեղ աշխատանք փնտրող երիտասարդներն, ամենայն հավանականությամբ, ստիպված կլինեն երկար սպասել, մինչև աշխատանք գտնելը: Եվ ընդհակառակը, ձախ կողմի հատվածները, այսինքն, բացասական արժեքները, մատնանշում են կադրերի հնարավոր պակասուրդով աշխատանքները, այսինքն, այն աշխատանքները, որտեղ աշխատանք փնտրող երիտասարդները, հավանական է, արագորեն աշխատանք կգտնեն:

Պատկեր 3.13 Կադրերի պակասուրդի կամ գերառաջարկի սցենարները գործազուրկ երիտասարդների կողմից փնտրվող աշխատանքների համար և զբաղված երիտասարդների կողմից զբաղեցրած աշխատանքներն ըստ զբաղվածության (տոկոսային կետերով)



Ծանոթություն. Դրական արժեքները ցույց են տալիս ավելի շատ փնտրվող, քան զբաղեցված աշխատանքները: Բացասական արժեքները ցույց են տալիս ավելի շատ զբաղեցված, քան փնտրվող աշխատանքները:
Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

Գրաֆիկով ներկայացված իրավիճակը համահունչ է բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների մեծ թվին: Շատ աշխատանքներ էին փնտրվում բարձր որակավորում պահանջող մասնագիտությունների ոլորտում, ստեղծելով մասնագիտական աշխատանքների համար կադրերի գերառաջարկի վիճակ, որտեղ տոկոսային կետերի տարբերությունը զբաղված և փնտրվող աշխատանքների միջև հասնում էր 17.0-ի (տես Աղյուսակ 3.10 և Հավելվածի Աղյուսակ Ա.8, համապատասխանաբար զբաղված երիտասարդների աշխատանքների և գործազուրկ երիտասարդների կողմից փնտրվող աշխատանքների համար): Նմանապես, տեխնիկական աշխատողների և օժանդակ մասնագետների աշխատանքները ցանկալի աշխատանքներ էին՝ 4.0 տոկոսային կետի տարբերությամբ: Ցանկացած երիտասարդ, ով փնտրում էր նման աշխատանք, ամենայն հավանականությամբ, ստիպված կլիներ բախվել ուժեղ մրցակցության և երկար ժամանակ սպասել, մինչև աշխատանքի առաջարկ ստանալը: Սակայն, այլ բարձր որակավորում պահանջող մասնագիտություններն, ինչպիսիք են օրենսդիրները, բարձրաստիճան պաշտոնյաները և կառավարիչները, գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողները, գտնվում էին կադրերի պակասուրդի իրավիճակում: Քանի որ բարձր որակավորում պահանջող գյուղատնտեսական աշխատանքների համար շատ քիչ երիտասարդներ էին դիմում, տարբերությունը հասնում էր 10.3 տոկոսային կետի: Նմանապես, տարրական աշխատանքներում աշխատելու ցանկությունը գործնականում զրո էր, թեև երիտասարդների 11.8 տոկոսը նման աշխատանք էր կատարում, իսկապես քիչ հավանական է, որ բարձրագույն և նույնիսկ միջնակարգ կրթությամբ

երիտասարդները ցանկանային աշխատել նման ցածր որակավորում պահանջող տեղերում:

Հետազոտության հետագա տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում երիտասարդների գործազրկության խնդիրը ոչ միայն պարզապես թվերի, այլ նաև տևողության հարց էր: Աղյուսակ 3.22-ը ցույց է տալիս, որ երկարաժամկետ գործազրկությունը լայնորեն տարածված իրականություն էր: Երիտասարդ տղամարդկանց գրեթե կեսը (48.4 տոկոս) և երիտասարդ կանանց ավելի քան կեսը (55.3 տոկոս) աշխատանք էին փնտրում արդեն ավելի քան 1 տարվա ընթացքում: Երիտասարդ տղամարդկանց ևս 15.2 տոկոսը և կանանց 10.9 տոկոսը գործազուրկ էր 6 ամսից մինչև 1 տարվա ընթացքում: Սրանք ոչ հաստատուն թվեր են, քանի որ դրանք ցույց են տալիս, որ մեծ թվով երիտասարդներ, ամենայն հավանականությամբ, շատ են հեռացել աշխատաշուկայից, քանի որ նրանց մասնագիտական հմտությունները հնացած են կամ բացակայում են: Նման մարդկանց սոցիալական և մասնագիտական վերաինտեգրումը երկար և բարդ գործընթաց է, որը պետք է լինի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական քաղաքականության առաջնային խնդիրը:

Աղյուսակ 3.22 Գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ աշխատանք փնտրելու տևողության և սեռի

Ժամանակը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Մոտ 1 շաբաթ	577	0.6	577	1.3	0	0.0
1 շաբաթից 1 ամիս	3 396	3.3	1 134	2.5	2 262	3.8
1-ից 3 ամիս	14 057	13.5	5 074	11.2	8 983	15.2
3-ից 6 ամիս	18 315	17.6	9 667	21.4	8 648	14.7
6 ամսից 1 տարի	13 310	12.8	6 857	15.2	6 453	10.9
1 տարուց ավելի	54 469	52.3	21 832	48.4	32 637	55.3
ընդհանուր	104 124	100.0	45 141	100.0	58 983	100.0

Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Աշխատանք փնտրելու մեթոդի առումով (Պատկեր 3.14), մի քանի հետաքրքիր տարբերություններ կան զբաղված և գործազուրկ երիտասարդների միջև: Նախ, զբաղված երիտասարդների գրեթե մեկ հինգերորդը (18.0 տոկոս) աշխատանք է գտել՝ միանալով ընտանեկան բիզնեսին, թեև այս մեթոդը նշված չէր աշխատանք փնտրողների համար: Երկրորդ, գործազուրկ երիտասարդների 21.5 տոկոսը տեղադրել էր աշխատանքի գովազդներ, կամ արձագանքել էր դրանց, սակայն զբաղված երիտասարդների միայն 2.7 տոկոսն էր աշխատանք գտել, օգտագործելով այս մեթոդը: Երկու խմբերի կողմից աշխատանքի որոնման մեթոդների միջև նմանությունները յուրաքանչյուր խմբի կողմից կիրառվող հիմնական մեթոդում են: Թե՛ աշխատող, և թե՛ գործազուրկ երիտասարդները հիմնականում ապավինում էին բանավոր տեղեկություններին և կապերին (գործազուրկ երիտասարդների 39.4 տոկոսը և զբաղված երիտասարդների 33.0 տոկոսը աշխատանքի հեռանկարների մասին հարցրել էր ընկերներին և հարազատներին): Սրան հաջորդում էր երկու խմբերի երիտասարդների գրեթե հավասար թվերը, ովքեր անմիջականորեն էին դիմել կամ կապվել գործատուների և ընկերությունների հետ (համապատասխանաբար գործազուրկ երիտասարդների 24.8 տոկոսը և զբաղված երիտասարդների 24.2 տոկոսը): Շատ

քչերն էին, անկախ զբաղված կամ գործազուրկ լինելուց, գրանցվել զբաղվածության կենտրոնում (գործազուրկների 6.3 տոկոսը և զբաղվածների 1.3 տոկոսը), ինչը ցույց է տալիս, որ երիտասարդներն այդ կենտրոնի նկատմամբ վստահություն չունեն:

Պատկեր 3.14 Զբաղված և գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ աշխատանք փնտրելու մեթոդների



Աղբյուր, ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

3.7 Աշխատաշուկայից դուրս գտնվող երիտասարդներ (պասիվ երիտասարդներ)

Հարցված երիտասարդների շրջանում պասիվության գլխավոր պատճառն այն էր, որ երիտասարդը կրթություն էր ստանում կամ վերապատրաստման դասընթացների էր հաճախում (պասիվ երիտասարդ տղամարդկանց 86.6 տոկոսը և պասիվ երիտասարդ կանանց 60.4 տոկոսը) (Աղյուսակ 3.23): Պասիվ վիճակում գտնվող կանանց թիվն ավելի մեծ էր, քան տղամարդկանցը ընտանեկան պարտականություններ կամ կենցաղային պարտականություններ կատարելու (համապատասխանաբար 29.3 տոկոս և 1.5 տոկոս) կամ հղիության պատճառով (կանանց 3.7 տոկոսը): Կրթություն ստանալու /վերապատրաստման դասընթացներին հաճախելու պատճառներից զատ, երիտասարդ տղամարդկանց պասիվ լինելու այլ գերակշիռ պատճառներ չկային. երիտասարդ տղամարդկանց 3.3 տոկոսը պասիվ էր հիվանդության, վնասվածքի կամ հաշմանդամության պատճառով, իսկ 3.3-ը՝ պարտադիր զինվորական ծառայության մեջ լինելու պատճառով:

Աղյուսակ 3.23 Պասիվ երիտասարդների բաշխումն ըստ պասիվության պատճառների և սեռի

Ժամանակը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Մոտ 1 շաբաթ	577	0.6	577	1.3	0	0.0
1 շաբաթից 1 ամիս	3 396	3.3	1 134	2.5	2 262	3.8
1-ից 3 ամիս	14 057	13.5	5 074	11.2	8 983	15.2
3-ից 6 ամիս	18 315	17.6	9 667	21.4	8 648	14.7
6 ամսից 1 տարի	13 310	12.8	6 857	15.2	6 453	10.9
1 տարուց ավելի	54 469	52.3	21 832	48.4	32 637	55.3
ընդհանուր	104 124	100.0	45 141	100.0	58 983	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

4. Անցման փուլեր

4.1 Հայեցակարգեր և սահմանումներ[12]

Երիտասարդների աշխատաշուկա անցման ԱՄԿ մոտեցումը չափում է ոչ միայն նրանց կրթական հաստատությունն ավարտելու (կա՛մ ավարտելուց հետո կամ առանց ավարտելու՝ ժամանակից շուտ դուրս գալու դեպքում) և առաջին անգամ ցանկացած աշխատանքի անցնելու միջև ժամանակի տևողությունը, այլ ներառում է նաև որակական գործոններ, ինչպես օրինակ, արդյոք աշխատանքը կայուն է (ելնելով աշխատանքային պայմանագրի տեսակից): ԱԴԱ հետազոտության ներքո նախատեսվում էր կիրառել «կայուն զբաղվածության» ավելի խիստ սահմանումը, քան սովորաբար օգտագործվում է: Սկսած այն վիճակից, որից անձը դեռևս «անցում» չի կատարել, մինչև այնպիսի աշխատանքի անցնելը, որը համապատասխանում է կայունության ամենահիմնական չափանիշներին, ինչպես սահմանված է աշխատանքային պայմանագրի տևողությամբ, ԱՄԿ-ը աշխատաշուկա անցման ստանդարտ սահմանմանն ավելացրել է որակի մի նոր տարր:

Մասնավորապես, այս բաժինն անդրադառնում է աշխատաշուկա անցման հասկացություններին և սահմանումներին, ըստ սեռի, կրթության մակարդակի, տարիքային խմբի և բնակավայրի՝ անցման փուլերին, անցումը դեռևս չսկսած և անցման փուլում գտնվող երիտասարդներին, հաջող անցման բնութագրերին և անցման ճանապարհներին ու տևողություններին:

Աշխատաշուկա անցումը սահմանվում է որպես երիտասարդ անձի կողմից դպրոցն ավարտելուց (կամ առաջին անգամ տնտեսական ակտիվության անցնելուց) մինչև առաջին կայուն կամ բավարար աշխատանքի անցնելը: Կայուն զբաղվածությունը սահմանվում է՝ ելնելով աշխատանքային պայմանագրի տեսակից (գրավոր կամ բանավոր) և պայմանագրի տևողությունից (ավելի քան 12 ամիս): Խոսելով աշխատանքային պայմանագրերի մասին՝ ինքնաբերաբար պետք է բացառել ինքնազբաղվածների

[12] Այս բաժինը վերցվել է ԱՄԿ 2013թ. զեկույցից; Գլուխ 5

կարգավիճակը, քանի որ վերջիններիս դեպքում զբաղվածության հարաբերությունները չեն սահմանվում գրավոր աշխատանքային պայմանագրով:

Կայուն զբաղվածության հակադիր եզրույթը ժամանակավոր զբաղվածությունն է կամ սահմանափակ տևողությամբ վարձատրվող աշխատանքը: «Բավարարող կամ գոհացուցիչ զբաղվածություն» եզրույթն ավելի շատ սուբյեկտիվ հասկացություն է, քանի որ հիմնված է աշխատողի ինքնագնահատման վրա: Այն ենթադրում է այնպիսի աշխատանք, որն աշխատողը համարում է տվյալ պահին իր նախասիրություններին և ցանկություններին համապատասխան: «Բավարարող կամ գոհացուցիչ զբաղվածություն» հասկացության հակադիր եզրույթն է ժամանակավոր և ոչ գոհացուցիչ աշխատանքը, որը ենթադրում է, որ աշխատողը տվյալ աշխատանքից անբավարարվածության զգացում ունի կամ այն չի գոհացնում վերջինիս:

Վերոնշյալ սահմանումներից ելնելով՝ անցման փուլերը դասակարգվում են հետևյալ կերպ՝

Անցումն ավարտած. անցումն ավարտած երիտասարդն այն երիտասարդն է, ով ներկայումս

- ունի կայուն աշխատանք, որը կարող է լինել գորհացուցիչ կամ ոչ այդքան, կամ
- ունի գոհացուցիչ, բայց ժամանակավոր աշխատանք, կամ
- ինքնազբաղված է և այդ կարգավիճակն իրեն բավարարում է:

Անցման փուլում. դեռևս անցման փուլում գտնվող երիտասարդը՝

- գործազուրկ է (մեղմացված սահմանումով), կամ
- ունի ժամանակավոր, բայց ոչ գոհացուցիչ աշխատանք, կամ
- ինքնազբաղված է և այդ կարգավիճակը չի գոհացնում, կամ
- պասիվ է և ոչ դպրոցում, ավելի ուշ աշխատանք փնտրելու մտադրությամբ

Դեռևս անցումը չսկսած երիտասարդը, ում անցումը դեռևս չի սկսվել՝

- դեռևս դպրոցում է և պասիվ (պասիվ ուսանող է), կամ
- պասիվ է, ոչ դպրոցում (պասիվ ոչ-ուսանող) և աշխատանք փնտրելու մտադրություն դեռ չունի:

Այս դասակարգման մեջ հատկանշական են երկու տարրեր: Նախ, անցման փուլերը միահյուսված են տնտեսական ակտիվության սահմաններին, ինչպես սահմանված է աշխատուժի ստանդարտ շրջանակում:[13] Այսպես, անցումն

[13] Տնտեսապես ակտիվ բնակչության վիճակագրությունը չափելու միջազգային ուղեցույցը, որը կազմվել է 1982թ. Զբաղվածության վիճակագիրների 13րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ, սահմանում է, թե ով է համարվում զբաղված, և ով՝ գործազուրկ, համաձայն Ազգային հաշվարկների համակարգի կողմից ամրագրված տնտեսական արտադրողականության սահմանների:

ավարտած երիտասարդների դասը ներառում է երիտասարդների մի խումբ, որը որակավորվում է որպես զբաղված, անցման փուլում գտնվող երիտասարդների դասը ներառում է խիստ սահմանման ներքո գործազուրկներին և պասիվ երիտասարդների մի խումբ (ովքեր աշխատանք չունեն, պատրաստ են աշխատել, սակայն ակտիվորեն աշխատանք չեն փնտրում[14] և պասիվ ոչ-ուսանողներ, ովքեր մտադիր են ավելի ուշ միանալ աշխատուժին), և վերջապես անցումը դեռևս չսկսած դասը ներառում է ոչ ակտիվ բնակչության մի մասը:

Երկրորդ, անցման փուլերը սահմանված չեն որպես նորմատիվ շրջանակ: Այսպես, երբ երիտասարդներին ներառում ենք ինքնազբաղվածների կամ ժամանակավոր զբաղմունք ունեցողների դասում, կարող է թվալ, որ անցումն ավարտած բոլոր երիտասարդներն ունեն արժանապատիվ աշխատանք: Իրականում, ինքնազբաղված անձանց մեծամասնությունը՝ իրենք իրենց հաշվետու աշխատողները կամ ընտանիքում չվճարվող աշխատողները, վատ վճարվող աշխատողներ են ոչ-ֆորմալ հատվածում, առանց աշխատանքի պաշտպանվածության:

Ըստ սահմանման, նրանք կազմում են երկրի ժամանակավոր զբաղվածություն ունեցողների հիմնական մասը: Սակայն հարցվածները գոհունակություն էին հայտնել իրենց աշխատանքից, և ամենայն հավանականությամբ, ավարտել էին իրենց անցումն այն առումով, որ կմնան ինքնազբաղվածների դասի ներքո իրենց մնացած աշխատանքային կյանքի ընթացքում:

4.2 Անցման փուլերը

Հարցված երիտասարդ բնակչության մի զգալի մասը (39.1 տոկոս) դեռևս չէր սկսել անցումը (Աղյուսակ 4.1): Սա արտացոլում էր Հայաստանում պասիվ երիտասարդների բարձր տոկոսը: Երիտասարդների մեկ երրորդն (33.8 տոկոս) անցման փուլում էր, ընդ որում առկա էր մեծ տարբերություն տղամարդկանց և կանանց միջև (համապատասխանաբար 24.9 տոկոս և 40.9 տոկոս): Ի վերջո, անցումն ավարտած երիտասարդները կազմում էին ընդհանուր երիտասարդ բնակչության մեկ քառորդից մի փոքր ավելին (26.6 տոկոսը): Այստեղ ևս, էական տարբերություններ կային տղամարդկանց և կանանց միջև (համապատասխանաբար 34.0 տոկոս և 20.7 տոկոս): Տվյալներին մեկ այլ տեսանկյունից նայելիս՝ երիտասարդ տղամարդկանց ամենամեծ տոկոսը (40.9 տոկոս) դեռևս չէր սկսել անցումը, մինչդեռ երիտասարդ կանանց ամենամեծ տոկոսն (40.9 տոկոսը) արդեն իսկ անցման փուլում էր:

[14] Սա գործազուրկների «խիստ» սահմանման դասին ավելացված մասն է՝ զբաղվածներին ավելացնելու համար (մեղմ սահմանում):

Աղյուսակ 4.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ անցման փուլերի և սեռի

Անցումային վիճակ	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Փուլն անցած	208 305	26.6	117 569	34.0	90 736	20.7
Անցումային փուլում	265 419	33.8	86 316	24.9	179 103	40.9
Անցումը չսկսած	306 299	39.1	141 592	40.9	164 707	37.6
չդասակարգված	4 332	0.6	832	0.2	3 501	0.8
ընդհանուր	784 355	100.0	346 309	100.0	438 046	100.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012թ.

Ըստ տարիքային խմբի անցման փուլերի ուսումնասիրությունը որոշ անակնկալներ է բացահայտում (Աղյուսակ 4.2): 15-19 տարեկան երիտասարդների գրեթե չորս հինգերորդը (79.3 տոկոս) դեռևս չի սկսել անցումը, համեմատած 25-29 տարիքային խմբի 6.7 տոկոսի հետ:: Արդյունքներն, այդպիսով, արտացոլում էին այն ակնհայտ փաստը, որ «կրտսեր» երիտասարդները դեռևս դպրոցում էին և աշխատաշուկա էին մտնելու 19 տարեկանից հետո: Ավելի «տարիքով» երիտասարդությունը արդեն իսկ անցել էր աշխատաշուկա և կա՛մ արդեն ավարտել էր անցումը (50.7 տոկոս), կա՛մ դեռևս անցումային փուլում էր (41.7 տոկոս):

Աղյուսակ 4.2 Երիտասարդ բնակչության անցումն ըստ անցման փուլերի և տարիքային խմբերի

Տարիքային խումբ	Փուլն անցած		Անցման փուլում		Անցումը չսկսած	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
15–19	8 011	3.0	47 811	17.6	215 629	79.3
20–24	82 779	29.5	121 127	43.1	75 211	26.8
25–29	117 516	50.7	96 481	41.7	15 459	6.7

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Ըստ բնակության վայրի իրականացրած վերլուծության՝ չնչին տարբերություններ կան քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև (Պատկեր 4.1): Փոքր-ինչ ավելի շատ երիտասարդներ դեռ չեն սկսել անցումը քաղաքային, քան գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար 39.6 տոկոսը և 37.0 տոկոսը): Սակայն, մյուս կողմից, անցման փուլում գտնվող երիտասարդների թիվն ավելի մեծ էր գյուղական բնակավայրերի երիտասարդների դեպքում (35.7 տոկոս), համեմատած քաղաքային բնակավայրերի երիտասարդների հետ (33.4 տոկոս): Վերջապես, անցումն ավարտած երիտասարդների թիվը գրեթե հավասար էր երկու տիպի բնակավայրերում (26.6 տոկոս քաղաքային և 26,5 տոկոս՝ գյուղական բնակավայրերում):

Պատկեր 4.1 Երիտասարդ բնակչության բաշխումն ըստ անցման փուլերի և բնակության վայրի



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

4.2.1 Երիտասարդներ, որոնք դեռևս չեն սկսել անցումը

Երիտասարդները, որոնք դեռևս չեն սկսել անցումը, ընդգրկում էին պասիվ ուսանողներին և պասիվ ոչ-ուսանողներին, ովքեր ապագայում մտադրություն չունեին աշխատելու: Այս դասի ներքո երիտասարդները ներկայացնում էին ընդհանուր երիտասարդների 39.1 տոկոսը: Աղյուսակ 4.3-ը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր երիտասարդները, ովքեր դեռևս չէին սկսել իրենց անցումը, սովորողներ էին (95.1 տոկոս): Միայն 4.9 տոկոսն էր ընկնում պասիվ ոչ ուսանողների դասի ներքո, ովքեր մտադիր չէին աշխատել: Մինչ անցումը դեռ չսկսած երիտասարդ կանանց մեծամասնությունը դպրոցում էր (93.9 տոկոս), պասիվ ոչ-ուղանողների դասի ներքո կանանց թիվը կրկնակի գերազանցում էր տղամարդկանց թվին (համապատասխանաբար 6.1 տոկոս և 3.6 տոկոս):

Աղյուսակ 4.3 Անցումը դեռ չսկսած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի և սեռի

խմբեր	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Պասիվ ուսանող	291 192	95.1	136 474	96.4	154 719	93.9
Պասիվ ոչ ուսանող և աշխատելու մտադրություն չունեցող	15 105	4.9	5 117	3.6	9 988	6.1
ընդհանուր	306 298	100.0	141 591	100.0	164 707	100.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Երիտասարդներն, ովքեր դեռ չէին սկսել իրենց անցումը ընդգրկում էին ակտիվ ուսանողներին և ակտիվ ոչ ուսանողներին, ովքեր մտադրություն չունեին աշխատելու ապագայում: Այս դասի ներքո երիտասարդները ներկայացնում էին ընդհանուր երիտասարդների 39.1 տոկոսը: Աղյուսակ 4.3-ը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր երիտասարդները, ովքեր դեռ չէին սկսել իրենց անցումը, ընդգրկված էին կրթության մեջ (95.1 տոկոս): Երիտասարդների միայն 4.9 տոկոսն էր ակտիվ ոչ ուսանողներ, ովքեր մտադիր չէին աշխատել: Թեև «անցումը դեռևս չսկսած» երիտասարդ կանանց բացարձակ մեծամասնությունը

(93.9 տոկոս) դեռևս դպրոցում էր, պասիվ ոչ-ուսանող դասի ներքո կանանց մասնաբաժինը տղամարդկանց մասնաբաժնի գրեթե կրկնակին էր կազմում (համապատասխանաբար 6.1 տոկոս և 3.6 տոկոսը):

4.2.2 Անցման փուլում գտնվող երիտասարդներ

Անցման փուլում գտնվող երիտասարդն այն երիտասարդն է, որը գործազուրկ է (մեղմ սահմանումով)[15], ինքնազբաղված է կամ ունի ժամանակավոր վճարվող աշխատանք, որից նա բավարարված չէ, կամ պասիվ ուսանող է, որը պլանավորում է ապագայում անցնել աշխատաշուկա և աշխատել։

Պատկեր 4.2-ը ներկայացնում է անցման փուլում գտնվող երիտասարդների մանրամասն տվյալներն ըստ ենթադասերի, ստացած կրթության մակարդակի (բացառությամբ ներկայիս ուսանողների), և տնային տնտեսության եկամուտների մակարդակի (համաձայն ինքնագնահատման): Այն ցույց է տալիս, որ անցման փուլում գտնվող երիտասարդների մեծ մասը գործազուրկ էր (49.7 տոկոսը): Անցման փուլում գտնվող երիտասարդների ևս մեկ երրորդը (38.2 տոկոսը) պասիվ ոչ ուսանողներն էին, ովքեր նախատեսում էին աշխատել ապագայում, և միայն 12.1 տոկոսն էին ոչ գոհացուցիչ ինքնազբաղված կամ ժամանակավոր աշխատողներ։ Այս տվյալներն արտացոլում են այն փաստը, որ երիտասարդներից քչերն են դժգոհություն հայտնել իրենց զբաղվածության կարգավիճակից։

Անցման փուլում գտնվող երիտասարդների մեծ մասը (53.0 տոկոս) ուներ միջնակարգ կրթություն։ Ավելի քան մեկ հինգերորդը (22.4 տոկոս) ուներ բարձրագույն կրթություն, իսկ 9.1 տոկոսն ուներ միջին մասնագիտական կրթություն (երկու մակարդակները համակցված): Ինչ վերաբերում է տնային տնտեսության եկամուտների մակարդակին, անցման փուլում գտնվող երիտասարդների 39.3 տոկոսը՝ իրենց գնահատմամբ, միջին եկամուտ ունեցող տնային տնտեսություններից էին, 20.5 տոկոսը՝ հարուստ տնային տնտեսություններից, և 18.7 տոկոսը՝ միջինից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններից։

[15] Մեղմ սահմանման ներքո գործազրկությունը ներառում է նրանց, ովքեր աշխատանք չունեն և պատրաստ են աշխատել (աշխատանք փնտրելու չափանիշը բաց է թողնված)

Պատկեր 4.2 Անցման փուլում գտնվող երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, տնային տնտեսության եկամտի մակարդակների և ստացած կրթության մակարդակի



Ծանոթություն: *Ներկայիս ուսանողները հաշվի չեն առնված, քանի որ նրանց կրթության ամենաբարձր մակարդակը հայտնի չէ: Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II, որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

4.2.3 Ավարտված անցման նկարագրեր

Անցման փուլն ավարտած երիտասարդների կեսից ավելին (56.4 տոկոսը) երիտասարդ տղամարդիկ էին, իսկ 43.6 տոկոսը՝ երիտասարդ կանայք: Ինչպես և կարելի էր ակնկալել, տարիքային խմբում տարիքի աճին զուգահեռ աճում էր անցման փուլն ավարտած երիտասարդների թիվը. անցման փուլն ավարտել էր դեռահասների (15-19 տարեկան) 3.8 տոկոսը, 20-24 տարեկան երիտասարդների 39.7 տոկոսը և 25-29 տարեկան երիտասարդների 56.4 տոկոսը:

Պատկեր 4.3-ը ցույց է տալիս անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, տնային տնտեսությունների եկամուտների մակարդակների և ստացած կրթության մակարդակի: Երեք քառորդը (75.6 տոկոս) հասել էր կայուն զբաղվածության, 8.4 տոկոսն ուներ գոհացուցիչ ժամանակավոր զբաղվածություն, և 16.1 տոկոսն ուներ գոհացուցիչ ինքնազբաղվածություն: Հետաքրքիր է համեմատել անցումն ավարտած երիտասարդների կրթության մակարդակն ընդհանուր երիտասարդ բնակչության կրթության մակարդակի հետ, որը ներկայացված է Աղյուսակ 3.5-ում: Միջին մասնագիտական կրթությամբ անցումն ավարտածների ցուցանիշը մոտ էր այդ ցուցանիշին՝ երիտասարդների ընդհանուր թվում (համապատասխանաբար 6.9 տոկոս՝ միջին մասնագիտական մակարդակ ունեցողները՝ 9.9 տոկոսի դիմաց): Սակայն, անցումն ավարտած բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների ցուցանիշն ավելի բարձր էր, քան ընդհանուր երիտասարդ բնակչության շրջանում բարձրագույն կրթություն ունեցողներինը (համապատասխանաբար 39.5 տոկոս և 33.7 տոկոս): Միտումը հակառակն էր միջնակարգ կրթությամբ երիտասարդների համար (անցումն

ավարտած երիտասարդների 41.9 տոկոսը՝ ընդհանուր երիտասարդների 55,6 տոկոսի համեմատ): Արդյունքները, հետևաբար, բերում են այն եզրակացության, որ բարձրագույն կրթությունը աշխատաշուկա անցումն ավարտելու և կայուն և/կամ գոհացուցիչ աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորություն է տալիս :

Պատկեր 4.3 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, տնային տնտեսությունների եկամտի մակարդակների և ստացած կրթության մակարդակի



Ծանոթություն: *Ներկայիս ուսանողները հաշվի չեն առնված, քանի որ նրանց կրթության ամենաբարձր մակարդակը հայտնի չէ: Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II , որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Անցումն ավարտած երիտասարդների մեծ մասը ձեռք էր բերել զբաղվածություն՝որպես մասնագետ (23.4 տոկոսը): Նրանք նաև աշխատում էին որպես առևտրի և սպասարկման ոլորտի աշխատողներ (17.3 տոկոսը), արհեստագործներ և հարակից մասնագիտությունների աշխատողներ (13.0 տոկոս), տեխնիկական աշխատողներ և օժանդակ մասնագետներ (10.7 տոկոսը) (Աղյուսակ 4.4): Անցումն ավարտած երիտասարդների միայն 8.0 տոկոսն էր աշխատում տարրական զբաղվածության ոլորտում: Անցումն ավարտած երիտասարդների տվյալները ցույց են տալիս, որ կան զբաղվածության չորս տեսակներ, որոնց ցուցանիշը գերազանցում է 10 տոկոսը՝ մասնագետներ (27.6 տոկոս), առևտրի և սպասարկման ոլորտի աշխատողներ (16.7 տոկոս), որակավորված մասնագետներ (13.6 տոկոս) և արհեստագործներ ու հարակից մասնագիտությունների աշխատողներ (12.9 տոկոս): Կայուն զբաղվածության ամենացածր ցուցանիշը գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողներինն էր՝ (1.1 տոկոս), սարքավորումների և մեքենաների օպերատորներինը (3.7 տոկոս) և զինված ուժերում ծառայողներինը (3.5 տոկոս): Ինչ վերաբերում է անցումն ավարտած երիտասարդների բավարար ինքնազբաղվածության բաշխմանը, ապա երիտասարդների 25.2 տոկոսն աշխատում էր որպես մասնագետ, 23.7 տոկոսը՝ որպես արհեստագործ և հարակից մասնագիտությունների աշխատող, 16.6 տոկոսը՝ որպես առևտրի և

սպասարկման ոլորտի աշխատող և 12.0 տոկոսը՝ որպես տարրական գործունեությամբ զբաղված: Գոհացուցիչ ժամանակավոր զբաղվածություն ունեցող անցումն ավարտած երիտասարդների ամենաբարձր ցուցանիշը ոչ-ֆորմալ զբաղվածություն ունեցողներինն էր, այդ թվում՝ գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի որակավորված աշխատողները (35.2 տոկոս) և առևտրի ու սպասարկման ոլորտի աշխատողները (20.3 տոկոս), ինչպես նաև կառավարիչները (17.9 տոկոսը) և տարրական գործունեությամբ զբաղվածները (13.6 տոկոս):

Աղյուսակ 4.4 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի և զբաղմունքի (տոկոս)

աշխատանք	երիտասարդներ	Փուլն անցած երիտասարդներ	Փուլն անցած երիտասարդներ		
			Կայուն աշխատանք	Բավարար ինքնազբաղված	Բավարար ժամանակավոր զբաղված
Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	8.5	8.9	7.2	6.7	17.9
Մասնագետներ	20.5	23.4	27.6	25.2	3.0
Տեխնիկներ և օգնականներ	9.7	10.7	13.6	4.2	0.2
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	5.3	6.0	7.3	6.0	0.0
Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	16.1	17.3	16.7	16.6	20.3
գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի աշխատողներ	10.4	6.5	1.1	0.5	35.2
Արհեստավորներ	12.1	13.0	12.9	23.7	7.7
Մեքենավարներ	3.2	3.6	3.7	5.2	2.1
Տարրական զբաղվածություն	11.8	8.0	6.4	12.0	13.6
Բանակում ծառայողներ	2.3	2.7	3.5	0.0	0.0
ընդհանուր	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Պատկեր 4.4-ը ցույց է տալիս աշխատաշուկայում կայուն աշխատանքի անցման հետագա խթանների տվյալները, ուսումնասիրելով կրթության, տնային տնտեսության եկամուտների մակարդակի, բնակավայրի և սեռի ազդեցությունները: Առանձնանում են մի քանի ասպեկտներ: Նախ, կայուն զբաղվածության ցուցանիշն աճում էր կրթության մակարդակի աճին զուգահեռ: Բուհերի շրջանավարտների գրեթե ինը տասներորդը (87.4 տոկոս), ինչպես նաև միջին մասնագիտական կրթություն ունեցողների 74.2 տոկոսը և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների 71.5 տոկոսն ուներ կայուն զբաղվածություն: Կայուն զբաղվածություն ունեցող, անցումն ավարտած երիտասարդների ամենացածր ցուցանիշը միջնակարգ կրթություն ունեցողներինն էր (66.3 տոկոս): Վերջիններս, ընդհակառակը, այն

երիտասարդների թվում էին, ովքեր նշել էին, որ շատ գոհ են իրենց ինքնազբաղվածությունից (նաև նրանք, ովքեր նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեին) և գոհացուցիչ ժամանակավոր զբաղվածության անցման ամենամեծ միտումն էին ցույց տվել:

Պատկեր 4.4 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ ենթադասերի, սեռի, բնակավայրի, ընտանիքի եկամտի մակարդակի և ստացած կրթության մակարդակի



Ծանոթություն: *Ներկայիս ուսանողները հաշվի չեն առնված, քանի որ նրանց կրթության ամենաբարձր մակարդակը հայտնի չէ: Կրթության մակարդակների մանրամասն պատկերի համար տես Հավելված II , որտեղ մակարդակները բերված են ըստ ազգային համարժեքի:
Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Երկրորդ, տնային տնտեսությունների եկամուտների մակարդակը (համաձայն պատասխանողների գնահատման), նույնպես ազդում է անցման վրա: Աղքատ ընտանիքների երիտասարդները պետք է, որ ավելի մեծ հավանականությամբ անցում կատարեին գոհացուցիչ ինքնազբաղվածության կամ ժամանակավոր զբաղվածության, քան նրանք, ովքեր բարձր եկամուտներ ունեցող ընտանիքներից էին: Սակայն աղքատ տնային տնտեսություններից երիտասարդների կեսից պակասն էին (49.3 տոկոս) ավարտել անցումը կայուն զբաղվածության, համեմատած բարեկեցիկ ընտանիքներից երիտասարդների 79.5 տոկոսի հետ: Երրորդ, գյուղական բնակավայրերում հաջողությամբ գոհացուցիչ ժամանակավոր զբաղվածության անցած երիտասարդների թիվն զգալիորեն ավելի մեծ էր, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար 33.3 տոկոս և 11.8 տոկոս): Վերջապես, կայուն զբաղվածության անցած երիտասարդ կանանց թիվն ավելի մեծ էր (79.3 տոկոս), քան երիտասարդ տղամարդկանցը (72.6 տոկոսը):

Հարկ է ընդգծել, որ այս տվյալները նպատակ չունեն ցույց տալու, թե անցման ո՛ր իրավիճակն է լավագույնը: Քանի որ այս բոլոր արդյունքները հարցված երիտասարդների կողմից համարվել են «գոհացուցիչ», յուրաքանչյուր իրավիճակի ցանկալիությունը կախված էր նրանց ձգտումներից: Որոշ երիտասարդներ գերադասում էին ինքնազբաղված լինել, քան սովորական վարչական աշխատանք կատարել: Տվյալները, սակայն, օգնում են հասկանալ, թե ինչպես են տարբեր պայմանները (ինչպես, օրինակ, ընտանիքի եկամուտների մակարդակը և բնակավայրը) ազդում երիտասարդ բնակչության կարիերայի հնարավոր ուղղությունների վրա:

4.3 Անցման ճանապարհները և անցման տևողությունը

ԱԴԱ հետազոտությունը բացառիկ հնարավորություն է տալիս բացահայտել աշխատաշուկայի կատեգորիաները, որոնց ներքո դասակարգված էին երիտասարդները նախքան կայուն և/ կամ գոհացուցիչ աշխատանքի անցնելը: Հայաստանում անցումն ավարտած երիտասարդների ամենամեծ թիվը նրանցն է, ովքեր ուղիղ անցում են կատարել (38.3 տոկոս) (Պատկեր 4.5). Սա նշանակում է, որ նրանք մինչև կայուն կամ գոհացուցիչ աշխատանքի անցնելը, երբ կատարվում էր հարցումը, աշխատաշուկայում այլ փորձ չունեին (զբաղվածության կամ գործազրկության): Երիտասարդների մեկ այլ, բավականին մեծ մասը (35.8 տոկոս) անցում էր կատարել գործազրկության մեկ շրջանից հետո: Երիտասարդ տղամարդկանց գրեթե մեկ տասներորդը (9.8 տոկոս) կայուն կամ գոհացուցիչ աշխատանքի է անցել զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, երիտասարդների 8.2 տոկոսն անցումը կատարել էր պասիվության որոշակի ժամանակահատվածից հետո, իսկ 5.6 տոկոսը՝ անցում էր կատարել զբաղվածության մեկ այլ իրավիճակից, օրինակ, չբավարարող ժամանակավոր զբաղվածությունից: Երիտասարդների միայն 1.0 տոկոսն էր անցում կատարել ինքնազբաղվածությունից:

Աղյուսակ 4.5-ը ներկայացնում է անցման ճանապարհի ցուցանիշները, որոնք ավելի մանրամասն պատկերացում են տալիս, թե ինչպես են երիտասարդները եկել անցման փուլ: Բացառելով այն երիտասարդներին, որոնք ուղղակիորեն են անցել կայուն և/ կամ բավարարող զբաղվածության (ընդհանուրի 38.3 տոկոսը), անցման ճանապարհը ներառել է, միջինը, 1.8 աշխատաշուկայի միջանկյալ գործունեություն (գործազրկության, զբաղվածության կամ պասիվության), և տևել է 24.9 ամիս, մինչև անցումն ավարտելը: Երկրում սովորական երիտասարդը գործազրկության “սոսկ” մեկ (1.1) ժամանակահատված է ունեցել իր անցման ճանապարհին, սակայն միջին ժամանակահատվածն ավելի երկար է՝ միջինը 15.5 ամիս: Ժամանակավոր զբաղվածության ժամանակահատվածները փոքր-ինչ ավելի կարճ էին. երիտասարդները, մինչև իրենց անցումն ավարտելը, ժամանակավոր զբաղվածության վրա ծախսել էին միջինը 12.1 ամիս: Ինքնազբաղվածության ժամանակահատվածները նույնիսկ ավելի երկար էին՝ միջինը 16.8 ամիս, մինչև կայուն և/ կամ բավարարող զբաղվածության անցնելը: Ուղղակիորեն կայուն և/ կամ բավարարող զբաղվածության անցած երիտասարդների թիվն ավելացնելու դեպքում, արդյունքները ցույց են տալիս, որ անցման միջին տևողությունը 1 տարուց ավելի էր (14.9 ամիս):

Պատկեր 4.5 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ նախորդ գործունեության (տոկոս)



Ծանոթություն. Ներկայիս ուսանողները հաշվի չեն առնված: ** Այլ զբաղվածությունը ներառում է չբավարարեցնող ժամանակավոր զբաղվածությունը նրանց համար, ովքեր անցել են կայուն կամ բավարարեցնող ինքնազբաղվածության կամ ժամանակավոր զբաղվածության, նորպես գործատու կամ վարձու աշխատող կամ վարձատրվող աշխատող ինքնազբաղվածությունը նրանց համար, ովքեր անցել են բավարարեցնող ինքնազբաղվածության կամ ժամանակավոր զբաղվածության:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

Աղյուսակ 4.5 Անցումն ավարտած երիտասարդների բաշխումն ըստ անցման ճանապարհի ցուցանիշի և սեռի

ինդիկատոր	ընդհանուր	տղամարդ	կին
Անցման միջին տևողություն, ներառյալ ուղիղ անցումը (ամիս)	24.9	25.0	24.7
Անցման միջին տևողություն, առանց ուղիղ անցման (ամիս)	14.9	15.2	14.5
Կայուն զբաղվածության անցման միջին տևողություն (ամիս)	14.3	14.0	14.6
Բավարար ինքնա կամ ժամանակավոր զբաղվածության անցման միջին տևողություն (ամիս)	16.7	16.8	16.6
Միջանկյալ գործունեության միջին քանակ	1.8	2.2	1.3
Գործազրկության միջին քանակ	1.1	1.1	1.1
Գործազրկության միջին տևողություն (ամիս)	15.5	13.1	18.2
Ժամանակավոր զբաղվածության ժամանակաշրջանի միջին քանակ	1.1	1.1	1.0
Ժամանակավոր զբաղվածության ժամանակաշրջանի միջին տևողություն (ամիս)	12.1	13.2	9.3
Ինքնազբաղվածության ժամանակաշրջանի միջին քանակ	1.1	1.1	1.0
Ինքնազբաղվածության ժամանակաշրջանի միջին տևողություն (ամիս)	16.8	16.6	27.4

Ծանոթություն. Հաշվարկներում հաշվի չեն առնվել այն երիտասարդները, ովքեր ուղղակիորեն անցում են կատարել կայուն և/ կամ գոհացուցիչ զբաղվածության, եթե այլ բան նշված չէ:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ԱԴԱՀ Հայաստան, 2012 թ.

5. Համապատասխան ինստիտուցիոնալ շրջանակը, քաղաքականությունը, և դրա ազդեցությունը

5.1 Հայաստանում վարվող համապատասխան քաղաքականությունը

Նպատակ ունենալով դիմակայել գործազրկության մարտահրավերներին և հմտությունների անհամապատասխանությանը, 2012 թ. Հայաստանն սկսել է մի շարք կառուցվածքային բարեփոխումներ, այդ թվում՝ զբաղվածության քաղաքականության վերանայում և փոփոխություններ կրթական և մասնագիտական ուսուցման համակարգերի մեջ: Ստորև տրվում է համառոտ ակնարկ նշված գործունեության վերաբերյալ:

Զբաղվածության ազգային քաղաքականությունը

Հայաստանում զբաղվածությունը կարգավորող իրավական հիմքը հանդիսանում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքը: Այն իրականացվում է 2012թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված գործողությունների ծրագրի միջոցով: Գործողությունների ծրագիրը բաղկացած է 13 ամենամյա պետական ծրագրերից, որոնցից մի քանիսը հատուկ առնչվում են երիտասարդների զբաղվածությանը: Դրանք ընդգրկում են գործազուրկների համար իրականացվող ծրագրերը, մասնագիտական ուսուցման ծրագրերը հաշմանդամ գործազուրկների համար և աշխատանք փնտրող, գործազուրկ գյուղաբնակ սեփականատերերի համար[16], պրակտիկայի ծրագրեր գործատուների հաստատություններում՝ աշխատանք փնտրող հաշմանդամ գործազուրկների համար, ֆինանսական աջակցության ծրագրեր գործազուրկների համար և աշխատանք փնտրող հաշմանդամների համար, ձեռնարկատիրական գործունեության գրանցում աշխատանք փնտրող հաշմանդամ գործազուրկների համար, աշխատավարձի մասնակի հատուցում գործատուին՝ անմրցունակ անձանց աշխատանքով ապահովելու համար, աշխատատեղերի հարմարեցում՝ աշխատանք փնտրող հաշմանդամ գործազուրկների համար և աշխատանքի տոնավաճառների կազմակերպում: Անմրցունակ անձանց դասի մեջ են մտնում աշխատունակ տարիքի ծնողազուրկ երիասասարդները, առնվազն վեց ամիս անընդմեջ գործազուրկի կարգավիճակում գտնվողները և զինվորական ծառայությունից զորացրվածները:

Կրթական բարեփոխումներ

Հայաստանի Հանրապետության 2011-2015թթ. կրթության զարգացման պետական ծրագիրն ուրվագծում է երկրի կրթական համակարգի բարեփոխումներն ապահովելու նպատակով դրա համապատասխանեցումը

[16] Այս դրույթը վերաբերվում է այն փաստին, որ հողատերերը համարվել են de facto զբաղված, ակախ նրանց փաստացի գործունեության կարգավիճակից:

տնտեսության ժամանակակից պահանջներին և աշխատաշուկա մտնելու նպատակով շրջանավարտներին ավելի լավ նախատապատրաստելու գործընթացը: Բարեփոխումների իրականացումը կապված է Հայաստանի Հանրապետության երիտասարդության պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության գործողությունների ծրագրի հետ, որի նպատակներն ընդգրկում են ազգային որակավորումների շրջանակի ներդրումը և ողջ կյանքի ընթացքում կրթության խթանումը՝ հմտությունների անհամապատասխանությունը նվազեցնելու համար:

Տեխնիկական և մասնագիտական կրթություն և ուսուցում

ՀՀ կառավարությունը տեխնիկական և մասնագիտական կրթության և ուսուցման բարելավումը (ՏՄԿՈՒ) դիտում է որպես լավ գործող աշխատաշուկայի հիմնական գործոն: Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների ծրագիրը և 2012-2015թթ. գործողությունների ծրագիրն ընդունվել են 2012թ. վերջին՝ նպատակ ունենալով ընդլայնել և զարգացնել բազմաֆունկցիոնալ քոլեջների գոյություն ունեցող ենթակառուցվածքը: Համաձայն Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքների, բարեփոխումները ձգտում են բարելավել մասնագիտական կրթության որակը և թարմացնել աշխատակազմի վերապատրաստումն՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ և Եվրոպական չափանիշներին համապատասխան:

Բարեփոխումների նպատակներից մեկը հմտությունների անհամապատասխանության և դրանից բխող աշխատաշուկայի լարվածության խնդրի լուծումն է: Ըստ պաշտոնական վիճակագրության, մարզերում մի շարք աշխատատեղեր հաճախ թափուր են մնում՝ մասնագիտացված աշխատողների պակասի հետևանքով: Բարեփոխումներն ապավինում են շահագրգիռ կողմերի ավելի լայն ներկայացվածության, հատկապես գործատուների ներգրավման ավելացմանը, որպեսզի նրանց մարդկային ռեսուրսների կարիքներն ավելի լավ հաշվի առնվեն: Բարեփոխումների թիրախ խմբերում ընդգրկված են. ա) տարրական, միջին և ավագ մակարդակի դպրոցականները, բ) ուսանողները, որոնք մասնագիտական կողմնորոշման կարիք ունեն, գ) պարտադիր ուսուցումից դուրս մնացած և որակավորում չունեցող երիտասարդները, դ) գործազուրկները և վերադարձող միգրանտները, ե) աշխատանքը կորցնելու ռիսկի տակ գտնվողները կամ նրանք, ովքեր վերամասնագիտացման կարիք կամ ցանկություն ունեն, զ) անապահով ընտանիքների 16-18 տարեկանները (սոցիալական ծառայության կողմից հաշվառված), է)պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված երիտասարդները, և ը) սկսնակ գործարարները:

Մասնագիտական կողմնորոշում

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ընդգրկված են մասնագիտական կողմնորոշմանն առնչվող դրույթներ, բայց դրանք հիմնականում սահմանափակվում են աշխատանք փնտրողներին աշխատաշուկայի մասին տեղեկատվություն տրամադրելով: 2012թ. այդ դրույթներից մի քանիսը թարմացվել են մասնագիտական կողմնորոշման համակարգը բարելավելու և զարգացնելու նպատակով:

Ներկայումս որոշ զբաղվածության կենտրոններ ունեն մասնագիտական կողմնորոշում իրականացնելու գործառույթ: 2007թ. Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ստեղծվեց «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որպեսզի օգնի երիտասարդներին և դեռահասներին՝ մտնել աշխատաշուկա: Նույն ժամանակահատվածում ստեղծվեցին երիտասարդության հարցերով տարածքային կենտրոններ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության ներքո: Ի հավելումն, որոշ մասնագիտական կրթական հաստատություններում ստեղծվել են կարիերայի կենտրոններ, սակայն դրանք կարիք ունեն արդյունավետ մեթոդաբանության և աշխատաշուկայի ու կարիերայի պլանավորման վերաբերյալ ժամանակակից տեղեկատվության:

Երիտասարդության պետական քաղաքականությունը

Բոլոր վերոնշյալ պետական ծրագրերն ունեն երիտասարդների զբաղվածության վրա ազդելու ներուժ: Բարելավված մասնագիտական ուղղորդումը, աշխատաշուկայի վերաբերյալ ավելի մատչելի տեղեկատվությունը և արդիականացված մասնագիտական կրթությունը կարող են օգնել երիտասարդությանը՝ որոշումներ կայացնելու իրենց կարիերայի վերաբերյալ՝ նախապես տեղեկացված լինելով: Այդ ծրագրերից բացի, Հայաստանը երիտասարդության պետական քաղաքականություն է վարում 1995թ.-ից ի վեր, ինչը ներկայումս գտնվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատասխանատվության ներքո: Այդ քաղաքականության վերջին վերանայումը 2012թ. դեկտեմբերին էր, երբ կառավարությունն ընդունեց Հայաստանի Հանրապետության երիտասարդության պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարությունը և դրան համապատասխան գործողությունների ծրագիրը: Ռազմավարության նպատակն է ավելացնել երիատասարդության ներգրավվածությունը քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, առաջարկել իրատեսական լուծումներ՝ հաղթահարելու երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական խնդիրները, քարոզել առողջ կենսակերպ, օժանդակել երիտասարդության հոգևոր և մշակութային արժեքների զարգացմանն ու նրանց ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև ապահովել կրթության շարունակականությունն ու ոչ ֆորմալ կրթության մատչելիությունը:

5.2 Քաղաքականության ազդեցությունը

Հայաստանում կա գործազրկության սուր հիմնախնդիր: Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության տվյալներով՝ գործազրկությունը կազմում է 17.3 տոկոս (15-75 տարեկան աշխատուժի համար): Սակայն հատկապես երիտասարդները, կախված տարիքային խմբից, տարբեր ինտենսիվությամբ, տուժում են աշխատատեղերի պակասից: Գործազրկության մակարդակը (խիստ սահմանմամբ) 2012թ. երիտասարդ դեռահասների համար (15-19 տարեկան) հասել է 38.0 տոկոսի, 20-24 տարեկան երիտասարդների համար՝ 34.8 տոկոսի, և 25-29 տարեկան երիտասարդների համար՝ 23.1 տոկոսի: Սա մի հիմնախնդիր է, որին Հայաստանի

Հանրապետության կառավարությունն ամբողջապես տեղյակ է: Չնայած երկրի մակրոտնտեսական գործունեությունն ապահովում է նպաստավոր միջավայր աշխատատեղերի ստեղծման համար, թե՛ ընդհանուր և թե՛ մասնագիտական կրթական համակարգերի կառուցվածքային բարեփոխումներն ու զբաղվածության ծառայությունների հզորացումը՝ բարելավված մասնագիտական ուղղորդում տրամադրելու համար, փորձում են լուծել աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության հարցը:

Կառուցվածքային բարեփոխումներն արդյունավետ դարձնելու համար ժամանակ է անհրաժեշտ: Այնուամենայնիվ, երիտասարդ բնակչության որոշակի խավեր այնքան են տուժել, որ չեն կարող սպասել: Հայաստանում երիտասարդության զբաղվածության իրավիճակի խորը ուսումնասիրության միջոցով ԱԴԱՀ-ն օգնում է բացահայտել ամենամեծ ռիսկի ենթակա երտասարդների խումբը, որոնք կօգտվեն նպատակային միջամտություններից: Նման նպատակային միջամտությունները կկանխեն այդ խմբերի անընդհատ անգործության մեջ ընկնելը և պետական ծառայություններից ունեցած կախվածությունը, ցածր որակավորման ոչ-ֆորմալ աշխատանքներից կառչելը, անօրինական կամ հանցագործ գործունեության հակվելը կամ էլ արտագաղթով գայթակղվելը:

Սույն զեկույցի նպատակը Հայաստանում երիտասարդների զբաղվածության խնդիրների հանդեպ թարմ և տեղեկացված հայացք ապահովելն է: Վերը ներկայացված բարեփոխումներն ուղղված են նշված խնդիրներից մի քանիսի լուծմանը: Այնուամեանայնիվ, սույն զեկույցը բացահայտում է այն առաջնային ոլորտները, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն և որոնք կբարելավվեն բազմաոլորտ մոտեցումների արդյունքում: Հայտնաբերված առաջնային և հրատապ ուշադրություն պահանջող կետերը հետևյալն են. ա) գենդերային խնդիրներ և խտրականություն, բ) երտասարդության երկարաժամկետ գործազրկություն և ՈՉՈԿՈՒ-ներ, գ) գործազրկություն քաղաքային տարածքներում, դ) մասնագիտական կրթություն, և ե) զբաղվածություն գյուղաբնակ վայրերում:

ա) հաղթահարել գենդերային հարցերը և խտրականությունը

Հետազոտության ենթարկված երիտասարդ կանանց և տղամարդկանց իրավիճակն աշխատաշուկայում հաճախ հստակորեն տարբեր է՝ ի վնաս կանանց: Երիտասարդ կանանց աշխատուժի մասնակցությունը 36.8 տոկոս էր՝ երիտասարդ տղամարդկանց 53.0 տոկոսի դիմաց, իսկ երիտասարդ կանանց գործազրկության մակարդակը 36.8 տոկոս, որը 12 տոկոսով բարձր էր տղամարդկանց գործազրկության մակարդակից: Հետևաբար, երիտասարդ կանանց համար աշխատանք գտնելու հավանականությունը ոչ միայն շատ ավելի փոքր է, այլև աշխատաշուկայից նրանց դուրս մնալը շատ ավելի հավանական է կամ խրախուսանքի պակասի, կամ էլ այն պատճառով որ նրանք ավելի շատ հակված են ընտանեկան պարտականություններին, չնայած կրթություն ստացած երիտասարդ կանանց մեծ թվին:

Երիտասարդ կանայք սահմանափակված են կանանց համար ընդունելի կամ ցանկալի համարվող աշխատանքների նեղ մասնագիտացված ոլորտներում՝ մշակութային ընկալումների կամ ընտանեկան

պարտականություններն ու աշխատանքը հավասարակշռված վիճակում պահելու անհրաժեշտության պատճառով: Օրինակ, երիտասարդ կանանց 18.8 տոկոսն աշխատում է կրթական ոլորտում: Այս դանդաղ կամ աճ չունեցող ոլորտը հավանաբար կսահմանափակի շատ նոր աշխատողների ընդունումը, ինչը նշանակում է որ ուսուցիչ լինելու կոչված երիտասարդ կանայք երկար ժամանակ գործազուրկ կլինեն: Երիտասարդ տղամարդիկ աշխատանքի հավանական տեսակներից ընտրության ավելի լայն շրջանակ ունեն, ներառյալ ֆիզիկական աշխատանքը, որը գործոն է գործազրկության նրանց ավելի ցածր մակարդակի համար:

Խտրականությունը կանանց հանդեպ հատկապես ակնառու է աշխատավարձերի առնչությամբ: Միջինը, կին աշխատողները վաստակում են տղամարդ աշխատողների 66.9 տոկոսի չափով, իսկ ինքնազբաղված կին աշխատողները վաստակում են ինքնազբաղված տղամարդկանց ամսական աշխատավարձի 33.3 տոկոսի չափով: Աշխատավարձի խտրականությունն է՛լ ավելի անընդունելի է, քանի որ կանայք սովորաբար ավելի լավ են կրթված լինում, քան տղամարդիկ, մասնագիտական զբաղվածության ավելի մեծ հավանականությամբ, որը պետք է երաշխավորի ավելի բարձր աշխատավարձ, և ավելի շատ են ընդգրկված աշխատավարձով վարձատրվող զբաղվածության մեջ, հատկապես հանրային ոլորտում: Աշխատաշուկայում գոյություն ունի հստակ գենդերային անհավասարություն, սակայն պարզ չէ, թե արդյոք տեղի ունեցող բարեփոխումների մեջ այս հարցն արժանացե՞լ է պատշաճ ուշադրության, թե ոչ: Որպեսզի Հայաստանի տնտեսությունը հասնի իր ամբողջական ներուժին, քաղաքականության մեջ պետք է ավելի լավ հաշվի առնվի կանանց դիրքը աշխատանքի ոլորտում:

բ) հաղթահարել երիտասարդության երկարաժամկետ գործազրկությունը և ՈՉՈԿՈՒ-ն

Ընդհանուր առմամբ, երիտասարդ գործազուրկների ավելի քան կեսն աշխատանք է փնտրում մեկ տարուց ավելի: Երիտասարդ կանայք ավելի շատ են տուժել այդ միտումից: 10.9 տոկոսը գործազուրկ է եղել 6 ամսից մինչև մեկ տարի ժամանակահատվածով, իսկ 55.3 տոկոսը՝ մեկ տարուց ավելի: Երիտասարդ տղամարդկանց քանակը համապատասխանաբար եղել է 15.2 տոկոս և 48.4 տոկոս: Երկարաժամկետ գործազրկության բարձր մակարդակը լուրջ մարտահրավեր է քաղաքականությանը: Այդպիսի ժամանակահատվածով գործազուրկ մնացած ցանկացած մարդու համար չափազանց դժվար է ճանապարհ գտնել ետ՝ դեպի աշխատանք, առավել ևս՝ որակյալ աշխատանք: Սա բարդանում է երտասարդների այն մեծ քանակությամբ, որոնք դասակարգվում են որպես կրթության, զբաղվածության կամ ուսուցման մեջ չընդգրկվածներ (ՈՉՈԿՈՒ-ներ): Հայաստանում երիտասարդության 27.4 տոկոսը դասակարգվել է որպես ՈՉՈԿՈՒ-ներ, ուր երիտասարդ կանայք կրկնակի անգամ շատ են տղամարդկանցից (համապատասխանաբար 36.5 տոկոս և 15.9 տոկոս): Սա հանգեցնում է երիտասարդների մտահոգիչ մի թվի, որոնց մարդկային կապիտալը չի զարգացել և տնտեսապես արդյունավետ ու սոցիալապես ինտեգրված լինելու կարողությունները լրջորեն վտանգվել են: Երկարաժամկետ գործազուրկների և ՈՉՈԿՈՒ-ների հատուկ կարիքների ճանաչումը բարդ գործընթաց է, որին պետք է անդրադառնալ որպես

տնտեսական, զբաղվածության և սոցիալական քաղաքականության ակնհայտ խնդիր:

գ)հաղթահարել գործազրկությունը քաղաքային բնակավայրերում

Աշխատաշուկան հստակորեն բաժանված է աշխարհագրական գծերով: Հարցված երիտասարդների մեծ մասը (80 տոկոս) ապրում է մեծ քաղաքներում (հիմնականում Երևանում), գյուղական տարածքներում ապրող 20 տոկոսի համեմատ, իսկ զբաղվածության արդյունքները չափազանց տարբեր են այդ երկու տարածքներում: Երտասարդությունն ավելի լավ է կրթված քաղաքներում, որտեղ համալսարանական կրթություն ունեցողների թիվը ավելի քան կրկնակի անգամ շատ է, քան գյուղաբնակ վայրերում, որը, չնայած դրան, զբաղվածության առումով նրանց արտոնյալ հնարավորություն չի տալիս: Պասիվության մակարդակը միանման է երկու տարածքներում էլ, ընդհանուրը 52.0 տոկոս քաղաքաբնակ երիասարդության համար և 54.7 տոկոս՝ գյուղաբնակների համար: Այնուամենայնիվ, քաղաքաբնակ գործազուրկ երիասարդների բաժինը 19.3 տոկոս 1 (մոտավոր արտահայտված), համեմատած գյուղաբնակ վայրերի 6.9 տոկոսի հետ: Դրանից նաև հետևում է, որ քաղաքաբնակ գործազուրկ երիտասարդների մասնաբաժինն ավելի ցածր է (28.7 տոկոս՝ համեմատած գյուղաբնակների 39.6տոկոսի հետ):

Աշխատանքի որակի առնչությամբ, չնայած քաղաքաբնակ երիտասարդությունն ընդգրկված է վարձու աշխատանքի մեջ (84.1 տոկոս) կան արժանապատիվ աշխատանքի պակասի նշաններ: Երիտասարդ աշխատողների 24.1 տոկոսը չունի գրավոր պայմանագիր, իսկ 25.9 տոկոսն ունի ժամկետային պայմանագրեր, որոնց 51.0 տոկոսը՝ մեկ տարուց պակաս ժամանակով: Քաղաքաբնակ վայրերում ոչ ֆորմալ զբաղվածության բաժինը 58.1 տոկոս է, որից 77.7 տոկոսը ոչ ֆորմալ զբաղվածություն է ֆորմալ ձեռնարկություններում: ԱՄԿ *«Արժանապատիվ աշխատանքի ազգային նկարագիրը»* (ԱՄԿ, 2012թ.) զեկույցը նշում է զբաղվածության գործակալություններից աշխատանքի վերցնելու գործելակերպի ավելացման մասին, որը հանգեցնում է առանց սոցիալական պաշտպանության ժամկետային պայմանագրերի թվի մեծացմանը:

Այդ հիմնախնդիրների լուծումը մեկ անգամ ևս կախված է բազմակողմանի մոտեցումից, որը պետք է բարելավված մասնագիտական ուղղորդումը (բաձրագույն կրթություն ունեցող ուսանողների չափազանց մեծ թվից խուսափելու համար, որոնք կմրցակցեն ավելի քիչ թվով աշխատատեղերի համար) համակցի ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության հետ՝ խրախուսելու համար ձեռնարկություններին աշխատանքի ընդունելու երտասարդներին, և միկրոտնտեսական քաղաքականության հետ՝ արագացնելու համար աշխատատեղերի ստեղծումը: Միևնույն ժամանակ, աշխատանքային օրենսդրությունն ու կոլեկտիվ համաձայնագրերը, ներառյալ տույժերի մեխանիզմների միջոցով, կարող են պաշտպանել երիտասարդ աշխատողներին և օժանդակել նրանց անցումը դեպի կայուն և արժանապատիվ զբաղվածություն: Զուգահեռաբար, պետք է զարգացվի ձեռնարկությունների գրանցումը խրախուսող համակարգ, միևնույն ժամանակ ապահովելով խրախուսումներ գործատուների համար՝ ներդրումներ կատարելու երիտասարդների աշխատանքային պայմանների բարելավման մեջ:

դ) հաղթահարել մասնագիտական կրթության ճգնաժամը

Մասնագիտական ուսուցումը պետք է դեպի զբաղվածություն տանող ցատկահարթակ ծառայի: Այնուամենայնիվ, Հայաստանում տվյալները հանգեցնում են մի արատավոր ցիկլի՝ վտանգելով մասնագիտական կրթության արդյունավետությունն ու կրթություն ստանալու ցանկությունը, որը չի հեշտացնում մուտքը դեպի աշխատաշուկա: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ զբաղված երիտասարդության միայն 7.6 տոկոսն ունի մասնագիտական կրթության դիպլոմ՝ համեմատած միջնակարգ կրթությամբ 52.2 տոկոսի և համալսարանական կրթությամբ 39.9 տոկոսի հետ: Ավելին, մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների մոտ գործազրկության մակարդակն ամենաբարձրն է: Այդ մակարդակը բացասական ազդանշաններ է տալիս մասնագիտական ուսուցման համակարգի գործունեության վերաբերյալ, որն իր հերթին վանում է երիտասարդներին մասնագիտական կրթություն ստանալուց:

Մասնագիտական բարեփոխումներն ընթացքի մեջ են, փորձելով զգալիորեն բարելավել մասնագիտական կրթության որակը և թարմացնել աշխատակազմի ուսուցումը աշխատաշուկայի պահանջներին համահունչ և Եվրոպական չափանիշներին համապատասխան: Այնուամենայնիվ, դեռևս բավականին շատ աշխատանք կա՝ փոխելու համար մասնագիտական կրթության բացասական պատկերը և համոզելու երիտասարդությանը, որ այն արժեքավոր ընտրություն է կարիերայի համար: Որպեսզի այդ բարեփոխումները հաջողություն ունենան, դրանք պետք է լինեն սոցիալ-տնտեսական քաղաքականության շարքի ինտեգրված և համահունչ մաս, որի նպատակն է, օրինակ, սահմանափակել գյուղից քաղաք տեղաշարժը, նվազեցնել հմտությունների անհամապատասխանությունը և նպաստել զբաղվածությանն ու սեփական գործի ստեղծմանը:

ե) նպաստել զբաղվածությանը գյուղաբնակ վայրերում

Ըստ հետազոտության արդյունքների, զբաղվածությունը գյուղական բնակավայրերում դասակարգվել է որպես խոցելի: Երիտասարդ աշխատողների ավելի քան 45.5 տոկոսը ընտանիքում չվարձատրվող աշխատանք է իրականացնում և միայն 47.5 տոկոսն է ընդգրկված վճարվող զբաղվածության մեջ: Գյուղական բնակավայրերում նույնպես ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշը չափազանց բարձր է՝ 82.2 տոկոս, որը պայմանավորված է երիտասարդ աշխատողների մեծամասնությամբ, ովքեր աշխատում են չգրանցված, ոչ ֆորմալ ձեռնարկություններում: Երիտասարդության կեսից ավելին (51.3 տոկոս) աշխատում է գյուղատնտեսության ոլորտում, աշխատանքային պայմանների և աշխատավարձի մեծ տարբերություններով, որոնց պայմաններում երկիրը կանգնած է մի իրավիճակի առջև, որտեղ գյուղական կենսակերպն ու աշխատանքը գրավիչ չեն երիտասարդների համար: Շատերն արտագաղթում են քաղաքներ և միանում աշխատող աղքատներին, կամ նույնիսկ հեռանում են երկրից, նպաստելով երկրից ուղեղների արտահոսքին:

Գյուղական բնակավայրերում աշխատատեղերի ստեղծման չօգտագործված ներուժը մեծ է: Ենթակառուցվածքը կարող է բարելավվել և գյուղատնտեսական արժեքների շղթաների շարքն ավելանալ, ինչը կխթանի ազգային զարգացումն ու

զբաղվածության քաղաքականությունը Հայաստանում: Գյուղատնտեսական ոլորտը կարիք ունի ցածր արտադրողական գործունեությունից ընդլայնվելու դեպի ավելի բազմաբնույթ, բարձր որակավորման և ավելացված արժեքով գյուղատնտեսական բիզնեսի գործունեության: Գյուղաբնակ տարածքներում կարող են խրախուսվել բիզնեսի զարգացման գործունեությունները: Գյուղատնտեսական գործունեությունը կարելի է խթանել՝ այն մեծ ծավալով մասնագիտական ուսուցման դասընթացներում մասնավորապես կթության ավելի բարձր մակարդակներում ընդգրկելու միջոցով: Հետազոտության ժամանակ համապատասխանաբար երիտասարդ տղամարդկանց միայն 6.1 տոկոսը և երիտասարդ կանանց 2.0 տոկոսն էր սովորել գյուղատնտեսություն և անասնաբուժություն: Այսպիսի ցածր թվերից սկսելով, դժվար չի լինի հասնել ներգրավվածության ավելի բարձր մակարդակների ուսուցման այդ բնագավառներում, և երկար ճանապարհ հարկ կլինի անցնել՝ գյուղաբնակների և քաղաքաբնակների միջև կապը վերահաստատելու, ինչպես նաև երիտասարդների համար դեպի քաղաքներ կամ արտերկիր գաղթելու այլընտրանք ապահովելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

International Labour Organization (ILO). 2012a. *The youth employment crisis: A call for action*, Resolution and conclusions of the International Labour Conference, 101st Session, Geneva, 2012 (Geneva).

—. 2012b. *Decent Work Country Profile: Armenia* (Geneva).

—. 2013. *Global Employment Trends for Youth 2013: A generation at risk* (Geneva).

Manasyan, H.; Poghosyan, G. 2012.*Social Impact of Emigration and Rural-Urban Migration in Central and Eastern Europe, Final Country Report: Armenia*, Apr. (European Commission).

Migration Policy Centre (MPC). 2013. *Armenia – Migration Profile* (Florence).

National Statistical Service of the Republic of Armenia (NSSRA). 2012. "Household's Integrated Living Conditions Survey" (Yerevan).

World Bank. 2013. *Republic of Armenia: Accumulation, Competition, and Connectivity*, Report No. 76827-AM, Apr. (Washington, DC).

World Bank Group. 2014. "Country Program Snapshot", Apr. (Yerevan, World Bank Group – Armenia Partnership).

Հավելված I. Աշխատաշուկայի վիճակագրության սահմանումներ

1. Հետևյալ սահմանումները տրված են ըստ Զբաղվածության վիճակագիրների միջազգային կոնֆերանսի չափորոշիչների.
   ա. Զբաղված են համարվում 15 տարին լրացած անձինք, ովքեր դիտարկվող 1 շաբաթյա ժամանակահատվածում՝
      - կատարել են վարձու աշխատանք՝ դրամական կամ բնամթերային վարձատրությամբ, առնվազն մեկ ժամ տևողությամբ, եկամուտ ստանալու նպատակով,
      - ժամանակավորապես բացակայել են աշխատանքից (օրինակ, հիվանդության, արձակուրդի, ուսման, հարկադիր պարապուրդի պատճառով), սակայն պաշտոնապես համարվել են աշխատող
      - ի նպաստ ընտանիքի կատարել են որոշակի աշխատանք՝ առանց վճարվելու։
   բ. Գործազուրկ են համարվում (խիստ սահմանմամբ) 15 տարին լրացած այն բոլոր անձինք, ովքեր դիտարկվող 1 շաբաթյա ժամանակահատվածում բավարարում են ստորև բերված երեք պայմաններին
      - Չեն աշխատել (համաձայն վերոհիշյալ սահմանման).
      - Ակտիվորեն աշխատանք են փնտրում կամ կոնկրետ գործողություններ են ձեռնարկում՝ սեփական բիզնես սկսելու համար,
      - Դիտարկվող մեկ շաբաթվան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում հասանելի են աշխատանքի համար։
   գ. Զբաղվածների և գործազուրկների դասակարգումներում չընդգրկված անձինք սահմանվում են որպես աշխատուժից դուրս գտնվող (կամ պասիվ)։
2. Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգումը (ԶԿՄԴ) զբաղված բնակչությանը դասակարգում է նրանց աշխատանքային գրավոր կամ բանավոր պայմանագրերի հիման վրա, հետևյալ կերպ.
   ա. **Աշխատողները** (նաև՝ վարձու և վարձատրվող աշխատողները) նրանք են, ովքեր կատարում են «վճարվող զբաղվածության աշխատանքներ», որի դեպքում անձինք ունեն գրավոր կամ բանավոր պայմանագիր, որով նրանք հիմնական վարձատրության հնարավորություն են ստանում, որն ուղղակիորեն կախված չէ այն միավորման եկամտից, որի համար իրենք աշխատում են։
   բ. **Գործատուները** նրանք են, ովքեր աշխատում են իրենք իրենց հաշվին կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ, կատարում են աշխատանքներ, որոնք սահմանվում են որպես «ինքնազբաղվածության աշխատանքներ» (այսինքն՝ աշխատանքներ, որտեղ վարձատրությունն ուղղակիորեն կախված է արտադրվող ապրանքներից և ծառայություններից ստացված շահույթներից) և, այս կարգավիճակով, շարունակական հիմունքներով ընդգրկել են մեկ կամ ավելի անձանց՝ որպես իրենց համար աշխատող(ներ)։
   գ. **Ինքնազբաղված** (սեփական հաշվին աշխատող) են նրանք, ովքեր

աշխատում են իրենց հաշվին, կամ մեկ կամ ավելի գործընկերների հետ, կատարում են աշխատանքներ, որոնք սահմանված են որպես «ինքնազբաղվածության աշխատանքներ» և չունեն շարունակական հիմունքներով աշխատողներ:

դ. **Ընտանիքին աջակցող (չվճարվող) աշխատողները** նրանք են, ովքեր որպես իրենց հաշվին աշխատողներ կատարում են «ինքնազբաղվածության բնույթի աշխատանքներ» շուկայական հաստատությունում, որն աշխատեցվում է նույն ընտանիքում ապրող ազգականի կողմից:

3. Զբաղվածները նաև դասակարգվում են ըստ իրենց հիմնական զբաղմունքի, համաձայն Զբաղմունքների դասակարգման միջազգային չափորոշչի (ISCO-08).

4. Տնային տնտեսությունը ցանկացած ընտանիք կամ այլ համատեղ ապրող և իրենց հիմնական պահանջները բավարարելու նպատակով իրենց եկամուտը համատեղ ծախսող անձանց խումբն է: Տնային տնտեսության հայեցակետը ներառում է այն անդամներին, ովքեր ներկա են այն վայրում, որտեղ բնակվում է տվյալ տնային տնտեսությունը, ինչպես նաև այն անհատներին, որոնք ժամանակավորապես բացակայում են և ապրում են այլ վայրում, այդ թվում՝ արտասահմանում, բիզնեսի, կրթության կամ այլ նպատակով, քանի դեռ նրանց բնակության ժամկետն օտար երկրում չի գերազանցում 1 տարին: Միայնակ ապրող անձինք նույնպես կարող են որակվել որպես տնային տնտեսություն («միայնակ ընտանիք»), եթե նրանք արդեն չեն պատկանում մեկ այլ միավորի: Միայնակ ընտանիքը կարող է բնակվել առանձին, կամ համատեղ բնակարանում, համարվել անկախ միավոր, քանի դեռ ընտանիքի եկամուտը չի կիսվում այլ բնակիչների հետ: Կոլեկտիվ տնային տնտեսությունները, ինչպիսիք են բանտերն ու հաստատությունները և դրանց անդամները, չեն դիտարկվում աշխատուժի հետազոտություններում:

5. Հաշվետու ժամանակահատվածը, որի հետ կապված են տնտեսական գործունեության վերաբերյալ հարցերը, հարցազրույցին նախորդող մեկ շաբաթն է (տարվա ընթացքում 52 հաշվետու շաբաթ):

6. ԱԴԱՀ վերլուծության շրջանակներում սահմանվում են նաև հետևյալ միավորները, որոնք, սակայն, դուրս են վերոնշյալ կետ 1-ում նշված աշխատաշուկայի վիճակագրության միջազգային շրջանակում սահմանվածներից:

ա. **Հանգիստ գործազուրկ** – աշխատանք չունեցող և աշխատելու համար հասանելի (մատչելի) անձ (վերոհիշյալ 1բ կետի՝ աշխատանք փնտրելու վերաբերյալ չափանիշը դիտարկված չէ):

բ. **Զբաղվածության թերօգտագործման մակարդակ** –ժամանակավոր զբաղված, գործազուրկ (ըստ մեղմացված սահմանման) երիտասարդների և կրթություն կամ ուսուցում տվյալ պահին չստացող (պասիվ ոչ-ուսանողներ) երիտասարդների մասնաբաժնի գումարը որպես երիտասարդ բնակչության տոկոսային մասնաբաժին:

գ. **Կանոնավոր զբաղվածություն** - 12 ամիս և ավելի տևողությամբ աշխատանքային պայմանագիր (գրավոր կամ բանավոր) ունեցող աշխատողների և գործատուների գումարը. այս ցուցանիշն, այսպիսով, համատեղում է զբաղվածության կարգավիճակի և պայմանագրային իրավիճակների վերաբերյալ տեղեկությունները:

դ. **Բավարարող կամ գոհացուցիչ զբաղվածություն** - հիմնված է աշխատողի

ինքնագնահատման վրա: Այն ենթադրում է այնպիսի աշխատանք, որն աշխատողը համարում է տվյալ պահին իր նախասիրություններին և ցանկություններին համապատասխան:

ե. **Կայուն զբաղվածություն** - 12 ամիս և ավելի տևողությամբ աշխատանքային պայմանագիր (գրավոր կամ բանավոր) ունեցող աշխատողներ:

զ. **Ժամանակավոր զբաղվածություն** - 12 ամսից պակաս տևողությամբ աշխատանքային պայմանագիր (գրավոր կամ բանավոր) ունեցող աշխատողներ:

Հավելված II. Կրթության մակարդակների մանրամասն պատկերը

Կրթության մակարդակի անվանումը Հայաստանի վիճակագրության մեջ	Մոտավոր համապատասխանությունը ISCED 2011-ի մակարդակին	Սույն փաստաթղթում օգտագործված կրթական մակարդակը	Ընդունվելու տարիքը (տեսականորեն)	Տևողությունը տարիներով (տեսականորեն)	Պարտադիր կրթություն
Տարրական, թերի տարրական	Մակարդակ 1, Տարրական	Տարրական կամ ավելի ցածր	6	4	Այո
Հիմնական կրթություն	Մակարդակ 2, Տարրական միջնակարգ	Տարրական կամ ավելի ցածր	10	5	Այո
Ընդհանուր միջնակարգ	Մակարդակ 3, Բարձր միջնակարգ	Միջնակարգ	15	2	Այո
Միջին մասնագիտական	Մակարդակ 4, Միջին մասնագիտական	Նախնական մասնագիտական (արհեստագործական)	15	1–3	Ոչ
Միջնակարգ մասնագիտական թերի բարձրագույն	Մակարդակ 4, Հետ-միջնակարգ, ոչ բարձրագույն կրթություն	միջին մասնագիտական	15	4	Ոչ
Բարձրագույն, ասպիրանտական	Մակարդակ 5, Բարձրագույն	Բարձրագույն	17	4	Ոչ

Ծանոթություն. http://www.uis.unesco.org/Education/ISCEDMappings/Documents/Central%20Asia/Armenia_ISCED_mapping.xls

Հավելված III. Լրացուցիչ վիճակագրական աղյուսակներ

Աղյուսակ Ա 1 Հայաստանի ընդհանուր բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի, 2013թ. (‘000)

տարիք (տարիներ)	ընդհանուր	տղամարդ	կին
Մինչև 1	42.4	22.7	19.7
1–4	168.6	89.7	78.9
5–9	187.4	100.4	87.0
10–14	172.3	92.2	80.1
15–19	214.4	110.2	104.2
20–24	285.6	140.3	145.3
25–29	278.0	135.2	142.8
30–34	234.0	113.6	120.4
35–39	191.9	91.4	100.5
40–44	176.9	82.7	94.2
45–49	197.6	91.5	106.1
50–54	235.0	108.9	126.1
55–59	187.1	85.3	101.8
60–64	136.2	59.9	76.3
65- ից ավել	319.5	127.7	191.8
ընդհանուր	3 026.9	1 451.7	1 575.2

Աղյուսակ Ա 2 Աշխատաշուկայի ընտրված ցուցանիշներն ըստ սեռի և բնակավայրի, 2011թ.

Վայրը և սեռը	Աշխատանքային տարիքի (1000)	զբաղված (1000)	գործազուրկ (1000)	Աշխատաշուկային մասնակցության մակարդակ %	Բնակչության Զբաղվածության մակարդակ %	Գործազրկության մակարդակ %
բնակչություն						
ընդհանուր	2 286.3	1 175.1	265.7	63.0	51.4	18.4
տղամարդ	1 017.0	610.9	128.1	72.7	60.1	17.3
կին	1 269.3	564.2	137.7	55.3	44.4	19.6
քաղաքային						
ընդհանուր	1 498.3	631.8	232.5	57.7	42.2	26.9
տղամարդ	651.4	347.6	111.1	70.4	53.4	24.2
կին	846.9	284.2	121.4	47.9	33.6	29.9
գյուղական						
ընդհանուր	788.0	543.3	33.3	73.2	68.9	5.8
տղամարդ	365.6	263.3	17.0	76.7	72.0	6.1
կին	422.4	280.0	16.2	70.1	66.3	5.5

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն, 2012թ.

Աղյուսակ Ա 3 Գործազրկության ցուցանիշներն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի, 2012թ. (տոկոս)

տարիքը	ընդհանուր	տղամարդ	կին	քաղաքային	գյուղական
15–19	38.0	30.0	48.1	76.2	15.4
20–24	34.8	31.8	39.1	47.2	14.1
25–29	23.1	21.0	26.0	27.4	14.2
30–34	17.0	13.7	20.7	22.1	7.3
35–39	14.6	14.0	15.1	20.6	2.6
40–44	14.7	13.5	15.8	22.4	4.0
45–49	13.4	12.1	14.5	21.9	2.8
50–54	13.9	12.5	15.1	24.1	1.2
55–59	12.0	12.2	11.8	18.0	3.2
60–64	12.5	13.3	11.6	18.7	1.5
65–69	9.7	12.1	6.5	19.0	0.0
70–75	5.1	10.3	0.1	20.4	0.0
Total	17.3	16.5	18.2	25.5	5.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն, 2012թ.

Աղյուսակ Ա 4 Առողջական խնդիրներ չունեցող երիտասարդների բաշխումն ըստ բնակավայրի (տոկոս)

Ունակությունը	ընդհանուր			քաղաքային			գյուղական		
	ընդհանուր	տղամարդ	կին	ընդհանուր	տղամարդ	կին	ընդհանուր	տղամարդ	կին
Տեսողություն	92.6	93.6	91.8	91.1	92.1	90.4	98.4	98.8	98.0
Լսողություն	99.3	98.9	99.5	99.2	98.7	99.5	99.7	99.4	99.9
Քայլելը	98.9	98.1	99.6	98.8	97.8	99.6	99.3	99.0	99.6
Հիշողություն	98.9	98.6	99.2	98.9	98.5	99.1	99.1	98.8	99.5
Լվացվել-հագնվելը	99.5	99.3	99.7	99.5	99.4	99.6	99.6	99.2	100.0
Հաղորդակցում	99.0	98.5	99.5	99.2	98.7	99.6	98.2	97.7	98.7

Աղյուսակ Ա 5 Դպրոցը վաղ թողած երիտասարդների բաշխումն ըստ պատճառների և սեռի

Ժամկետը և պատճառը	ընդհանուր		տղամարդ		կին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Հեռացել են նախքան ավարտելը	14 657	1.9	8 433	2.4	6 224	1.4
Կրթությունն ընդհատելու միջին տարիքը	22.5	n/a	21.7	n/a	23.7	n/a
Կրթությունը թողնելու պատճառ						
Քննությունների ձախողում	1 023	7.0	1 023	12.1	-	-
Հետաքրքրված չէ	1 241	8.5	1 241	14.7	-	-
Աշխատանքի անցնելը	1 037	7.1	1 031	12.2	6	0.1
ամուսնանալը	2 671	18.2	-	-	2 671	42.9
Ծնողների թույլ չտալը	111	0.8	-	-	111	1.8
Տնտեսական պատճառներ (իրեն չի կարող թույլ տալ, շատ աղքատ են, ընտանիքին աջակցելու համար պետք է փող վաստակիլ	7 371	50.3	5 003	59.3	2 368	38.0
այլ	1 204	8.2	136	1.6	1 068	17.2

- = Աննշան

Աղյուսակ Ա 6 Երիտասարդների մայրերը և հայրերն ըստ կրթության մակարդակի

Կրթական մակարդակ	Երիտ-ների մայրեր		Երիտ.-ի հայրեր	
	քանակ	%	քանակ	%
Տարրական կամ ցածր	15 750	2.0	37 179	4.7
միջնակարգ	291 230	37.1	266 151	33.9
Արհեստագործական	16 869	2.2	35 059	4.5
Միջնակարգ մասնագիտական	249 945	31.9	207 404	26.4
Բարձրագույն, հետբուհական	209 007	26.6	223 717	28.5
չգիտի	1 553	0.2	14 845	1.9
Ընդհանուր երիտ. բնակչություն	784 355	100.0	784 355	100.0

Աղյուսակ Ա 7 Երիտասարդների զբաղվածության որակի ցուցանիշներն ըստ սեռի (տոկոս)

ցուցանիշ	ընդհանուր	տղամարդ	կին
Կայուն զբաղվածություն	67.2	64.4	70.9
Ոչ կայուն զբաղվածություն	32.8	35.6	29.1
Բավարար զբաղվածություն	77.9	77.1	79.0
Ոչ բավարար զբաղվածություն	22.1	22.9	21.0
Ոչ ֆորմալ զբաղվածություն	64.2	67.7	58.9
Ոչ կամավոր կես դրույքով զբաղվածություն	9.5	6.5	13.7
Թերկրթված աշխատողներ	21.5	21.8	21.1
Գերկրթված աշխատողներ	11.6	11.8	11.5
Բարձր զբաղվածության մակարդակ	9.5	10.4	8.3
Միջին աշխատավարձից ցածր	57.1	53.9	61.4
Միջին կամ բարձր աշխատավարձով	42.9	46.1	38.6

Ծանոթություն: Մակարդակները ընդհանուր երիտասարդների զբաղվածության (15-29 տարեկան) մասնաբաժինն են, բացառությամբ (ա) միջին աշխատավարձից ցածր/բարձր վաստակող աշխատողների մասնաբաժնի, որոնք ներկայացված են միայն որպես աշխատ աշխատողների և ինքնազբաղվածների մասեր, և (բ) գերկրթված և թերկրթված աշխատողների, որոնք ներկայացված են որպես կրթությունն ավարտած զբաղված երիտասարդների տոկոս (այսինքն բացառելով ներկայումս աշխատող ուսանողներին)։ Ոչ կամավոր կես դրույքով զբաղվածությունը սահմանվում է որպես շաբաթական 35 ժամից

Աղյուսակ Ա 8. Գործազուրկ երիտասարդների բաշխումն ըստ փնտրված զբաղմունքի և սեռի

Փնտրված զբաղմունքը	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	Թվաքանը	%	Թվաքանակը	%	Թվաքանակը	%
Օրենսդիրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և կառավարիչներ	4 484	4.3	3 300	7.3	1 183	2.0
Մասնագետներ	39 088	37.5	10 920	24.2	28 168	47.8
Տեխնիկներ և օգնականներ	14 214	13.7	4 729	10.5	9 484	16.1
Գրասենյակային ծառայողներ և գործավարներ	4689	4.5	1 605	3.6	3 084	5.2
Սպասարկման ոլորտի աշխատողներ և վաճառողներ	11 487	11.0	1 471	3.3	10 016	17.0
Որակավորված բանվորներ գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտում	53	0.1	53	0.1	-	0.0
Արհեստավորներ	10 818	10.4	9 585	21.2	1 233	2.1
Մեքենավարներ	615	0.6	615	1.4	-	0.0
Տարրական զբաղվածություն	817	0.8	658	1.5	159	0.3
Ցանկացած աշխատանք	10 808	10.4	7 022	15.6	3 786	6.4
Ցանկացած բարձր վարձատրվող աշխատանք	7 053	6.8	5 183	11.5	1 870	3.2
ընդհանուր	104 125	100.0	45 141	100.0	58 984	100.0

- = Աննշան

Հավելված IV. ԱԴԱՀ ընտրանքի սխեմա

ԱԴԱ հետազոտության ընտրանքի շրջանակը նախագծվել էր՝ օգտագործելով երկրում առկա մասնավոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը մշակվել էր 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա (Համաշխարհային Բանկի աջակցությամբ): Տնային տնտեսությունների ցուցակը թարմացվել է:

d	r	deff	z	SS պատասխանի ցուցանիշը (վերցված է SSԱՀ-ից*)	nr	p	nh	n	Ընտրված SS-երում 15–29 տարեկան ակնկալվող երիտասարդների թիվը	
									Եթե մեկ անձ է	Եթե մեկից ավել անձինք են
0.021	0.222	2	1.96	0.91	1.10	0.59	1.90	3 300	1 950	3 700

* Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
d – Անճշտության թույլտվվածքը՝ 95 տոկոս վիճակագրական վստահելիություն ապահովելու համար
r – Կանխատեսվող ընդգրկունությունը (տիրույթի ցուցանիշը) գնահատվող ցուցանիշի համար (15–29 տարեկան բնակչության պատասխանը, տոկոս) (վերցված է SSԿԱՀ-ի արդյունքներից – 22.2 տոկոս)
deff – գնահատված միավոր փոփոխականներ
z^2 - 95 տոկոս վիճակագրական վստահելիություն ապահովելու գործակից
nr – բացակայող պատասխանի ուղղում
p - 15–29 տարեկան երիտասարդներ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը (վերցված է SSԿԱՀ-ի արդյունքներից – 59.4 տոկոս)
nh - Տնային տնտեսությունում երիտասարդների միջին թիվը (վերցված է SSԿԱՀ-ի արդյունքներից – 1.9 տոկոս)
n - Պահանջվող ընտրանքի չափը, որպես տնային տնտեսությունների թիվ

ԱԴԱ հետազոտության նպատակով ընտրանքի շրջանակը բաժանվել էր 48 շերտի, ներառյալ Երևանի 12 համայնքները (ներկայումս՝ վարչական տարածքներ): Բոլոր մարզերի համայնքները դասվել են երեք խմբի՝ 15000 և ավելի բնակչություն ունեցող մեծ քաղաքներ, 15000-ից քիչ բնակչություն ունեցող փոքր քաղաքներ և գյուղեր: Խոշոր քաղաքները կազմել են 16 խումբ (շերտ), իսկ փոքր քաղաքներն ու գյուղերը՝ 10-ական շերտ:

Ըստ վերը բերված բաժանման՝ կառուցվել է երկշերտ պատահական ընտրանք՝ դասակարգված ըստ Երևանի և մարզերի: Բոլոր մարզերը և Երևանը, ինչպես նաև՝ բոլոր քաղաքային և գյուղական համայնքները ներառվել են ընտրանքում՝ ըստ երկրի տնային տնտեսությունների ընդհանուր թվի նկատմամբ նրանցում առկա տնային տնտեսությունների մասնաբաժնի: 165 հաշվառման վայրերը (ՀՎ), առաջնային ընտրանքի միավորները (ԱԸՄ) ընտրվել են՝ այս փուլում չափին համամասնական հավանական ընտրանքի՝ PPS մեթոդի կիրառմամբ (տես՝ հիմնական հետազոտության աղյուսակը): Երկրորդ փուլում յուրաքանչյուր ՀՎ-ից ընտրվել է 20 տնային տնտեսություն՝ պարբերական պատահական ընտրանքի մեթոդի կիրառմամբ: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս հետազոտության տնային տնտեսությունների բաշխման մանրամասները:

Մարզ	Մարզի անվանումը	Համայնքի տեսակը	%	Ընտրանքի տնային տնտեսությունը	Ընտրանքի ՀՎ-ն
1	Երևան	Համայնք 1	2.83	100	5
2	Երևան	Համայնք 2	1.92	60	3
3	Երևան	Համայնք 3	3.30	100	5
4	Երևան	Համայնք 4	1.73	60	3
5	Երևան	Համայնք 5	2.83	100	5
6	Երևան	Համայնք 6	3.19	100	5
7	Երևան	Համայնք 7	3.15	100	5
8	Երևան	Համայնք 8	3.30	100	5
9	Երևան	Համայնք 9	0.86	20	1
10	Երևան	Համայնք 10	0.78	60	3
11	Երևան	Համայնք 11	3.21	100	5
12	Երևան	Համայնք 12	2.49	80	4
13	Արագածոտն	քաղաքային	1.02	40	2
14	Արագածոտն	գյուղական	2.81	100	5
15	Արագածոտն	մեծ քաղաք1	1.29	40	2
16	Արարատ	քաղաքային	0.92	40	2
17	Արարատ	գյուղական	3.66	120	6
18	Արարատ	մեծ քաղաք1	1.50	40	2
19	Արարատ	մեծ քաղաք2	1.14	40	2
20	Արարատ	մեծ քաղաք3	1.20	40	2
21	Արմավիր	փոքր քաղաք	0.95	40	2
22	Արմավիր	գյուղական	3.43	120	6
23	Արմավիր	մեծ քաղաք1	1.58	60	3
24	Արմավիր	մեծ քաղաք2	1.97	60	3
25	Գեղարքունիք	փոքր քաղաք	1.54	40	2
26	Գեղարքունիք	գյուղական	3.19	100	5
27	Գեղարքունիք	մեծ քաղաք1	1.45	40	2
28	Գեղարքունիք	մեծ քաղաք2	1.38	40	2
29	Լոռի	փոքր քաղաք	2.42	80	4
30	Լոռի	գյուղական	3.14	100	5
31	Լոռի	մեծ քաղաք1	3.18	100	5
32	Կոտայք	փոքր քաղաք	1.56	60	3
33	Կոտայք	գյուղական	2.84	100	5
34	Կոտայք	մեծ քաղաք1	2.09	60	3
35	Կոտայք	մեծ քաղաք2	2.02	60	3
36	Կոտայք	մեծ քաղաք3	1.50	40	2
37	Շիրակ	փոքր քաղաք	1.38	40	2
38	Շիրակ	գյուղական	2.90	100	5
39	Շիրակ	մեծ քաղաք1	3.49	120	6
40	Սյունիք	փոքր քաղաք	1.57	60	3
41	Սյունիք	գյուղական	1.91	60	3
42	Սյունիք	մեծ քաղաք1	1.87	60	3
43	Սյունիք	մեծ քաղաք2	1.24	40	2
44	Վայոց Ձոր	փոքր քաղաք	1.31	40	2
45	Վայոց Ձոր	գյուղական	1.60	60	3
46	Տավուշ	փոքր քաղաք	1.60	60	3
47	Տավուշ	գյուղական	2.53	80	4
48	Տավուշ	մեծ քաղաք1	1.24	40	2
Ընդամենը			**100.0**	**3300**	**165**

Սույն զեկույցը ներկայացնում է ԱՄԿ «Աշխատանք երիտասարդների համար» (W4Y) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) հետ համատեղ 2012թ. իրականացված «Անցում դպրոցից աշխատանք» հետազոտության հիմնական արդյունքները: Այս ծրագիրը հնգամյա գործընկերություն է ԱՄԿ-ի և Մասթըրքարդ հիմնադրամի միջև, որի նպատակն է գիտելիքների և գործողությունների միջոցով խթանել արժանապատիվ աշխատանքի հնարավորությունները երիտասարդ տղամարդկանց և կանանց համար: «Աշխատանք երիտասարդների համար» հրատարակությունների շարքը նախատեսված է ԱՄԿ-ի կողմից աշխարհի հինգ տարածաշրջանների 28 երկրներում իրականացվող ԱԴԱ հետազոտության տվյալների և վերլուծությունների տարածման համար: ԱԴԱՀ-ը եզակի գործիք է, որն ապահովում է աշխատաշուկայում 15-29 տարեկան երիտասարդների վերաբերյալ տեղեկատվություն: Հետազոտությունը ներառում է տեղեկություններ՝ աշխատաշուկայում անցման փուլերի մասին, դրանով իսկ փաստեր ապահովելով դեպի արժանապատիվ և արդյունավետ զբաղվածություն ժամանակավոր և անուղղակի ճանապարհների մասին, որոնց բախվում են երիտասարդ տղամարդիկ և կանայք:

«Աշխատանք երիտասարդների համար» հրատարակությունների շարքն ընդգրկում է ազգային զեկույցները, ներառյալ հիմնական հետազոտության արդյունքներն ու երիտասարդների զբաղվածության ոլորտում առկա ազգային քաղաքականության գործողությունների վերաբերյալ մանրամասները և տարածաշրջանային ամփոփիչ զեկույցները, որոնք ընդգծում են դեպի աշխատաշուկա երիտասարդների անցման տարածաշրջանային առանձնահատկությունները և ազգային քաղաքականության շրջանակների տարբերությունները :

Work4Youth

For more information, visit our website: www.ilo.org/w4y
Youth Employment Programme
4 route des Morillons
CH-1211 Genève 22
Switzerland
youth@ilo.org

ISSN 2309-6780